



84

2836

75

ՔՈԹԵՆ ՏԻԿՆՈՁ

ՔՄՈՐՄԿԱՆԱՑՆ Ի ՍԻՊԵՐԻԱ

Վ. Ե Պ. Բ.

Թ Ա Ր Դ Մ Ա Ն Ե Ա Յ

Հ. ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐԱԿԱՑ

A 19641

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԴԱԶԱՐՈՒ

1873



14
1900

1900

ԹԱՐԴՄԱՆՉԻՆ ԱՌ ԸՆԹԵՐՅՈՂԾ

Գրիչ վիպիս այսորիկ, տիկինն քո-
թէն գալիացի, եկաց 'ի վերջկոյս Ժը-
դարու: Սա յետ երից ամաց հարանու-
թեան, 'ի քսանամենի մնացեալ այրի,
ետ զանձն 'ի բանասիրական պարապ-
մունս, և գրեաց առաւելապէս վէպս՝
յորոց երևելագոյն է առաջիկայս: Զէ
ինչ սա հնարեալ 'ի մոտաց՝ այլ ճշմարիտ,
վասն որոյ և առաւել ազգու 'ի սիրտ.
զի որպէս ինքն խսկ տիկինն մատենա-
գիր ասէ, « Զկարեն միտք հնարել իրս
այսպէս խանդաղատելիս, և ոչ իմաստս
այսպիսի ազնուականս, որպէս կարող
է սիրտ ազգել »:


Եւ յաւելու զի այնչափ դեր՝ ՚ի վերոյ
է՝ ՚ի սմա առաքինութիւն քան՝ ՚ի վէպս
ոտեղծականս՝ ՚ի մոտաց, զի չհաւատալի
թուի սա՝ յոյժ սակաւուց գիտելով՝ որ-
շափ ինչ որդի առաքինի կարէ գործել
՚ի սէր ծնողաց։ Այսը աղագաւ հարկ
լեալ է նմա զեղչել իսկ ոչ դուն ուրեք
զճշմարտութիւն, զի մի կարծեսցի՝ կու-
տակութեամբ պանծացուցեալ զառա-
քինութիւն։



45359-64

Ա.ԲՍՈՐԱԿԱՆԱՑՆ Ի ՍԻՊԵՐԻԱ.

ՎԵՊԻ



Թուպոլաք մայրաքաղաք Ախաբերիոյ՝ բնաւ-
կէ յեղր գետոյ . 'ի հիւսիսոյ անտառոք մինչեւ
ցծովն սառնապատ շրջապատեն զայն ընդ-
ասպարէզս իբր չորեք հազար : Անդ լերինք
ամուլք և ասլառաժք՝ ծածկեալք 'ի յաւեր-
ժական ձեւանց , դաշտք անբոյսք և անմշակք՝
որ 'ի ջերմագոյն իսկ աւուրս ամարայնոյ
հաղիւ եղկանան ոտնաչափ 'ի խոր , և գետք
ընդարձակք տիսրատեսիլքան : Ալիք պա-
զեալ և ձուլեալ չոռոգանեն՝ զարօտս ,
և ոչ զիթթել ծաղկանց յոտին իւրեանց
տեսանեն : Անդք ևս 'ի բևեռն կոյս՝ ոչ մայ-
րի ուրեք երեեալ , ոչ եղեին , և ոչ մի 'ի
ստուար ծառոց . այլ թուփիք և մացառք ըդ-
չարաբաստիկ երկրին այնորիկ յօրինեն
զարդ , և ճախճախուտք մամուապատք՝ որք
զյետին ճիգն բնութեան յանգիման առնեն՝

'ի շունչ վախճանին անդամոր հասեալ. անտի և անդր չիք և նշմարանս տեսանել զգալարւոյ: Աակայյն և յարհաւիրս անդ յաւէրժ ձմերայնոյ՝ տեսարանս վսեմականս ընծայէ բնութիւն. անդ այդ հիւսիսի մեծավայելուչ յաճախ երեեալ՝ փարի զոլորտիւք աղեղնակերստ ՚ի լոյս պայծառ, ուստի սիւնք հրեղէնք դողդոջունք իջեալ՝ ածեն ՚ի տեսիլ հիւսիսայնոց գաւառաց թատր հրաշակերս, անծանօթ հարաւաբնակ աղանց:

Ընդ հարաւակողմն թոպոլսքի տարածանի անապատն Խչիմ, և գաշտավայր՝ ուրցանեցիր սփռեալ կան շիրիմք, և լիճք աղտաղտուկք անջրպետեն զայն ՚ի Ակիւթաց՝ որ են թափառականք, ազգ կուապարիչուտ: Ի ձախմէ սահման հատանէ նմա իրթիշ գետ՝ որ յածեալ շրջանապտոյտ երթայ կորնչի յելս սահմանաց ձենաստան երկրի, և թուոլու յաջմէ, ոյր եղերք մերկք և ամուլք հատորս ևեթ ժայռից ընծայեն աչաց՝ դիզեալս զիրերօք, աստ անդ ևեթ եղեկին ՚ի ծայրան բերելով: Առ ստորոտով նոցին, ՚ի խաղ մի թոպոլ գետոյ, կայ վիճակն Այիմքայ՝ հեռի ՚ի թոպոլսքէ ասպարէզս ոչ ինչ նուազքան զերկու հազար, յեզր անապատին՝ ուր ամենայն ինչ որպէս զարե երկրին ծածկի ՚ի մռայլ, և երկիր անդ որպէս զերկինս նորին է տիսուր:

Աակայյն Խչիմ, այնու զի են անդ աւուրք ինչ ամարայինք, և ձմեռն անդ թէպէտ և սաստիկ՝ այլ ոչ ինչ աւելի տեսէ քան զա-

միսս ութ , կոչի իտալիա Ախալերիոյ : Զօր-
հանապաղ՝ ի ձմերայնի շնչէ անդ հողմ հիւ-
սիսոյ՝ բարձեալ բերելով զբուք արջային , և
զսարսուռ՝ ի ծուծս ոսկերաց թափանցիկ :
Անդստին՝ ի սեպտեմբեր ամսոյ պաղի թո-
պոլ սառնապատ , և ձիւնախաղաղ ծածկի
անդ երկիր ցվերջ ամսեանն մայիսի : Յայն-
ժամ՝ ի լուծանել ձեանց՝ ի շողից արեգա-
կան՝ սքանչելահրաշ վութով կանաչանան
ծառք , և յերկուս և յերիս աւուրս փթթին
ծաղկունք առհասարակ . և աճելոյ բուսոց
գողցես իմն լսի ճարճատ . բուրէ վարդից
՝ ի թփաստանաց անտի անուշահոտութիւն .
՚ի հեր աղուամաղ ծաւալի ընդ տամուկս
սինձ համասփիւռ : Ի հոյլ խուռներամխայ-
տայ արագիլ . բազք խայտաբղէտք , սազք
հիւսիսայինք ընդ ծուփս լճից . և սպիտակա-
փայլ կռունկն զօղեալ յամուրս եղեգանց՝
դնէ զբոյն իւր ճարտարակերտ՝ ի կնիւն փա-
փուկ յեղտիւրս ամայիս . և սկիւռ թեթև
ծառոց՝ ի ծառս ընդոստ յանտառի՝ գեղ-
մնապատ թաթիւքն և տտամիք օգնեալ , ըն-
թանայ ընդ օդս՝ կրծել զմայրից ոստոց խա-
ւարծիս և զտերես թփոց : Զի են և ՚ի ցըր-
տասառոյց գաւառս բնակելոց՝ աւուրք
զուարճաղիք . այլ ոչ և աքսորելոց անդր :

Առաւելագոյնք յեղկելեաց անտի կեան
՚ի գիւղս գետեղերեայս , ՚ի թոպոլսքէ մին-
չե ցեզք իշմեան անապատին . իսկ այլք
տարագիր՝ ՚ի հիւղս , և ընդ գաշտս սըփ-
ռեալ : Ոմանց արքունուստ սահմանեալ է

ոռճիկ, իսկ այլք անթոշակ՝ յորսոց երկրին ձմերայնոց կերակրին, բնաւից՝ի գութ զտեսող շարժեալ, բնաւք եղկելիք՝ի նոցունց ձայնեալ։ Ի ճախճախուտ անտառի ուրեք հեռի՝ի Ապիմքայ՝ասպարիզիւք իբր տասն, ուր ճահիճք են յաճախաւորք, մերձ՝ի լիճ խորին բոլորածե, ափնածիր՝ի թուխ և՝ի սպիտակ կաղամախեաց, բնակէր յաքսորս այր ոմն ամաց քառասուն և հնգից, հանդերձ կնաւն իւրով, և չքնաղագեղ դստերաւ, որ այն ինչ՝ի փթիթս գեղածաղիկ տիոցն էր հասեալ։

Չէր նոցա յանապատի անդ ընդ ումեք կցորդոթիւն. ելանէր այրն մենաւոր՝ի յորս, և չէր երբէք երթեալ նոցա՝ի Ապիմքա, ոչ իւր, ոչ կնոջն և ոչ դստեր։ Բաց՝ի սկիւթուհւոյ ումեքէ աղքատ շինականէ՝որ աղախնէրն նոցա, ոչ ումեք հրաման էր՝ի հիւղ նոցա մտանելոյ։ Ոչոք զհայրենիս նոցա գիտէր, ոչ ոք զազգ նոցա, և ոչ վասն որոյ իրաց աքսորեալն էին. քաղաքապետին ևեթ թոպոլսքի գիտելով զգաղտնիսն, և սորա չէր ինչ յայտնեալ փոխանորդին իսկ իւրում՝ի Ապիմքա, բայց միայն պատուիրեալ՝ի յանձնելն նմա զպահապանութիւն նոցա՝ տալ բնակութիւն դիւր, և պարտէղ փոքրիկ, կերակուր և հանդերձ, այլ զգուշանալ զի մի ընդ ումեք խօսեսցին, և մանաւանդ արգելուլ զնամականին եթէ երբէք իշխեսցեն զրել յարքունիս՝ի Ուռսաստան։

Աստի այսքան յանձանձանք, և անտի
գաղտնիք և զգուշութիւն այնպիսի խիստ՝
տեղի տային կասկածելոյ զի ընդ անփա-
ռունակ յորջորջանօքն — քանզի կոչէր
և թ նա Պետրոս Սփրինճեր — ծածկէին
փառք և թշուառութիւն նորանշան, թէ
արդեօք և ոճիր գժնեայ, կամ ընդ հակա-
ռակն անիրաւութիւն առ նա մեծ: Բայց
ամենայն ճիգն իւր 'ի դերե ելեալ հասու
լինելոյ գաղտնեացն, գաղարեաց նա փու-
թով 'ի խոյզ և խնզիր առնելոյ, համայն և
'ի կարեկցութենէ: Ոչ ևս ոք խորհէր զտա-
ռապելոցն՝ որ կէին անտես, և 'ի սպառ
յայնմէետէ եղեն 'ի մոռացօնս. բայց միայն
'ի թափառել ուրուք յորսորդաց ընդ ան-
տառն, և 'ի հասանել յեզր լճին, եթէ հար-
ցանէր՝ ոյք ոմանք 'ի հիւզի անդ բնակէին,
առնոյր պատասխանի թէ թշուառք ոմանք.
և ոչ աւելի ինչ հետազոտեալ գնայր 'ի բաց
ախտակցաբար ասելով. Տացէ նոցա Տէր
դարձ 'ի հայրենիս:

Կառոյց իւր անդ Սփրինճեր բնակարան
յեղենեաց յարդածածուկ. Ժայռք շուրջա-
նակի պատսպարէին զայն 'ի հիւսիսային
սաստկաշունչ հողմոց, և յողովմանէ յոր-
դելոյ լճին: Չէին արաստոյք ժայռքն որձա-
քարք. 'ի թերթս նոցին 'ի խափիսաւոյս
նշոյլք արեւուն 'ի ներքս անկեալ, սնկենիք
հոյլ 'ի հոյլ 'ի մուտս գարնայնոյ 'ի հերձից
անտի 'ի դուրս ոստաչէին, կէսք 'ի գոյն վար-
դից՝ բայց աղօտափայլ, այլք գեղին և

լուրթ՝ ի տիալ սնկենեաց պայքալեան լճին։
իսկ՝ ի փապարս անդ, ուր էր մըրկաց խուն
ինչ հողարկեալ, բողբոջք սնենեաց և մայ-
րից բուսեալ՝ նկրտէին արմատս ՚ի խոր և
ստեղունս ՚ի վեր մորչս արձակել։

Ի հարաւակողմն լճին ցրիւ և ցանցառ
էին ծառք անտառին, և ընդ մէջ նոցա ե-
րևէր զաշտ ընդարձակ, և գերեզմանք ան-
դանօր խիտ առ խիտ. յորոց յոգունք էին
կրկտեալ, և ոսկրոտին շուրջանակի սըփ-
ռեալ կային, նշխար աղզի վաղնջականի, որ
յաւէրժ ՚ի մոռացօնս կայր և մնայր, եթէ
աղահութեան ՚ի խնդիր զարդուցն ոսկե-
ղինաց՝ որ անդ ընդ դիակունս թաղեալ
կային, չէր զնա ՚ի յայտ ածեալ։

Յարեելից լայնածաւալ դաշտին կայր
մատուռն փայտակերտ, ՚ի քրիստոնէից
կանգնեալ. և որ յայնմկողման էին գերեզ-
մանք՝ անձեռնմերձք կային, ոչ ուրուք
ժպրհեալ պղծել զաճիւն մեռելոց առ սըր-
բոյ խաչին՝ որ զամենայն առաքինութիւն
աղդէ ՚ի մարդիկ։

Ի դաշտավայրի անդ Սիպերիոյ զձմեռն
ողջոյն, որ անդ խիստն է և երկարատեւ,
ելանէր Սփրինճեր ընդ առաւօտս յորս.
Հարկանէր կուզմ՝ որ ճարակին տերես դա-
շարս զբարտեաց և զկաղամախից, էր զի և
սամոյրա՝ որոց սակաւ են զիւտք անդանօր,
և յաճախագոյն աքիսս՝ որոց բաղմութիւն
է անդ. և զնովք մաշկից նոցա մուշտակաց՝
տայր բերել ՚ի թուալուքէ կահս կարեսորս՝

վայելուչո՝ կնոջ իւրում, և դստերն՝ գրեան։
Զերիկունս երկայնս անցուցանէին՝ ի վար-
ժըս օրիորդին, որոյ անուն էր Ելիսաբեթ։
և ընթեռնոյր նա յաճախ, բաղմեալ առըն-
թեր ծնողացն, բարձրաձայն՝ ի լուր նոցա՝
գիրս պատմութեանց։ Ափրինճեր հայր նո-
րա տայր նմա ուրեք ուրեք զկայ առնուլ,
խելամուտ լինել՝ ի գէսս հրահանգիչս
մտաց՝ ի մեծախոհութիւն։ իսկ Փեղորա
մայր նորա ՚ի կրթիչս սրտի ՚ի գութ։ մին
զփառաց վեհանձնութեան ցուցանէր նմա
զգեղ, միւսն զբարեպաշտութեան, զգթոյ
և զպարկեշտութեան։ Հայր նորա պարզէր
նմազվսեմական մասունս առաքինութեան,
իսկ մայր նորա որ ինչ քազգը և սփոփիչէ
՚ի նմա։ ուսուցանէր նմա մին՝ քանի մեծա-
րոյ է առաքինութիւն, միւսն՝ քանի սիրելի։
Ի խնամոց աստի երկաքանչիւրոցն ել՝ ի լոյս
բոյս իմն բարուց հզօր և փափուկ, որ զա-
րիութիւն հօրն ընդ հրեշտակային քաղց-
րութեան մօրն կցորդէր։ վեհ և խրոխտ
ըստ ամենայնի՝ որպէս ազգէ ազնուակա-
նութիւն, բարեգորով և անձնանուէր ըստ
ամենայնի՝ որպէս ազգէ սէր։

Ի սկսանել ձեանց լուծանելոյ, և ա-
զօտ ինչ կանաչութեան յերեսս երկրի ե-
րեւելոյ, պարապէին ընտանիքն ՚ի միասին ՚ի
խնամն բուրաստանին։ Ափրինճեր յարգա-
րէր զածուս, Փեղորա պատրաստէր զսեր-
մանս, Ելիսաբեթ աւանդէր զայնս հողոյ։
Նուրջ սլատէին զվայրիկն շմենիք, հոյնք, և

բարտիք արգոյք՝ ի Սիպերիա, զի սոցին և եթ
անդ բուրեն ծաղկունք անուշահոս : ի հա-
րաւակողմն կոյս արարեալ էր Սփրինճերի
ջերմուկ, ուր երիցագոյն խնամովք մշա-
կէր զտարաշխարհիկ ծաղկունս . և 'ի փրթ-
թել նոցին համբուրէր զնոսա, ցուցանէր
հարսին իւրում, և 'ի ճակատ դստերն յե-
ռոյր ասելով . Զարդարեաց դստրիկ՝ հայրե-
նի ծաղկամբք, որ իբրև զքեզ փթթին նժդե-
հիկը . ո՞հ, տացեն երկինք չմեռանել քեզ
հանգոյն նոցին և տարաշխարհիկ : Զայսո-
սիկ՝ 'ի յուզել զթոյն բարբառէր, լոիկ և
հանդարտ կալով հանապազ . էր զի և ժամս
ձիգս կայր՝ 'ի հիացման, բազմեալ ակնկա-
ռոյց ուրեք անքթիթ, արձակելով՝ 'ի խորոց
սրտէ հառաչանս, զորս ոչ բաւէին լոեցու-
ցանել աղերս հարսինն և ողոք, և 'ի տեսիլ
դստերն՝ ևս քան զես դառնակսկիծք յա-
ճախէին : Անկեալ ստեպ զպարանոցաւ նո-
րա, և 'ի մէջ բազկաց զնա առ սրտիւն ող-
ջագուրեալ, և ապայանկարծ մօրն զնա մա-
տուցանէր՝ ասելով . ի բաց առ, Փեղորա,
'ի բաց առ զդստրիկդ . վիշտք զորա և տա-
ռապանք քո՞մահառիթք են ինձ. աւազ, և
զի՞ դու եկիր այսրընդիս . եթէ չեկիր թշուա-
ռութեան իմոյ բաժանորդ, եթէ կայիր
յանդորրու և 'ի մեծարանս 'ի հայրենիս
քո, անտրտունջ արդեօք լինէրինձ կալ յա-
նապատիս : ի լուր այսոցիկ գորովագութին
Փեղորա հեղոյր արտասուս . աչք նորա,
մրմունջ և շարժմունք յայտ առնէին՝ որ 'ի

խորս սրտի նորա յուղէր գորով հարսանեանք կան։ Գիարէր նա օր մի հեռի կալ՚ի նմանէ, մերձ և եթ առ նմա ամոքէր զոտառապանս իւր։ Յառաջին կեանս իւր՝ աւագութիւնք զերաստիճանք ՚ի բացեայ ունէին յաճախ զայր նորա, այլ ՚ի նժդեհութեան անդ կային անմեկինք յիրերաց. որպէս զի սիրելի թերես լինէր նմա աքսոր, եթէ մարթ էր յաղէտս առնն հայել անվիշտ։ Փեղորա թէպէտե անցեալ էր զերեսնամենիւք, այլ գեղ նորա ոչ ինչ էր նուազեալ. հաւասարապէս սիրելի էին նմա այր իւր և դուստր, և առաւել քան զնոսա արարիչ իւր. երեցունց այսոցիկ սիրելութեանց տիպք ՚ի դէմս նորա երեւեալ, յաւելուին ՚ի նա գեղեցկութիւն՝ ՚ի պարագայց ամաց անեղծանելի. և ՚ի կերպարանաց իսկ նորա յայտնի էր, զի սահմանեալ ՚ի բնէ ՚ի սէր ամբիծ՝ կատարէր ՚ի նմա սահման ստեղծուածոյն։ Պատրաստէր նա ինքնին կերակուրս ախորժելիս առն իւրում, և միտ եգեալ ըղձից նորա յամենայնի, հետազօտէր յաշս նորա զկամս նորին՝ առ ՚ի կանխսել կատարել զայն։ Կարգ և մաքրութիւն խաղաղութեամբ հանդերձ տիրէին ՚ի դուզնաքեայ յարկ նոցա. յընդարձակագունին ՚ի խղից հանգչէին ամուսինք ծածկեալ մաշկեկօք. ձեռագործք Փեղորայ և դստերն ասղնէգործք և նկարէնք՝ պատէին զորմն ծխամածս։ Ափրինճերի ՚ի շահից որսոցն իւրոց հայթայթեալ էր և պա-

տուհանս ապակեայս, որ զուն ուրեք յերկիրի անդ երեէին՝ ՚ի զեղխութիւն համարեալ: Յերկուս այլ խուզո՞ւ, ՚ի միումն ննջէր Ելիսաբեթ, ՚ի միւսումն աղջիկն սկիւթացի, ուր էին և կահք խոհակերոցին և պարտիդի:

Անցանէին աւուրք ՚ի յանձանձանս առանին իրաց, յոստայնանկել զասր, և ՚ի պատել զանկուածս մաշկեկօք որաց. իսկ ՚ի կիւրակէս տրտմէր Փեղորա ընդ զրկել իւրեանց ՚ի սուրբ պատարագէն, և զմեծ կէս աւուրն պարապէր աղօթից: Անկեալ առաջի պատկերի սրբոյն Բասիլիոսի, որում ջերմեռանդն էր յոյժ, յանձն առնէր նմազայրիւր և զգուստը սիրելի, և օրըստօրէ յաւելոյր յեռանդն, զփորձ առեալ զի յազօթից անտի սիրտ իւրլցեալ հոգեռորիմաստիւք՝ յորդէր զրոյցս սփոփիչս առն իւրոյ:

Բայց Ելիսաբեթ, անգստին ՚ի չորեքամեայ տիոց սնեալ յանտառի՝ անծանօթ այլոյ հայրենեաց, գտանէր անդ գեղեցկութիւնս՝ զորս ընծացէ ընութիւն և ՚ի վայրս ապախտ լեալս յիւրմէ, և բերկրութիւնս բնականս՝ յորս սիրտ ամբիծ ամենայն ուրեք զիտէ վայելել: Զբօսնոյր ՚ի խնդիր ձուոյ բազէից և սպիտակ անգեղց սոլոսկէր յեղերս լճակին ընդժայռս ՚ի վեր, ուր զնեն նոքա բոյն յամարայնի. ըմբռնէր յաճախ և վայրի աղաւնիս ՚ի վարմն, և փակէր զնոսա երամովին ՚ի վանդակի: Մերթ ևս որսայր ձկունս որք տարմատարմ ընդ

A I
9641

— 17 —

լիձն գնացին, պատեհնազէնք 'ի թեփս ծիրանիս, երևեալք յալիս անդ որպէս կարկեհան 'ի լոյծ արծաթիւ Հաճ և գոհ ընդ կեանըս իւր, զի չանկանէր իսկ 'ի միտս նորաթէ մարթէր ումեք վայելել 'ի բախտ երջանկագոյն, կազդուրէր հովասուն, և աճէր 'ի 'ի հասակ կրթութեամբ մարմնոյ . և 'ի դէմս նորա, յորում հանգչէին խաղաղութիւն և անմեղութիւն, յաւելոյր օր ըստ օրէ գեղ նորահրաշ : Ըստ այսմ օրինակի, հեռի յաշխարհէ և 'ի մարդկանէ, զարգանցը օրիորդն չքնաղագեղ 'ի տեսիլ և եթ ծնողացն, և 'ի բերկրութիւն սրտի նոցառութէս ծաղիկ յանապատի 'ի նշուլից արվեցին փթթեալ, ոչ ինչ նուազ գեղանի անտես յաշաց՝ 'ի տեսիլ աստեղն և եթ իւրոյ կենսատուի :

Զիք սէր գորովագոյն և խանդաղելի քան որ 'ի նուազունս ամփոփեալ. այսպիսի սիրով գորովէր Ելիսարեթ 'ի ծնօղս իւր՝ զորս միայն ճանաչէր, զորս միայն սիրէր յաշխարհի : Փոխանակ ամենայնի էին նմա ծնօղը իւր հոգաբարձուք աղկաղկ հասակին, կենակիցը նմին և խաղակիցք . զգիտէր ինչ, զոր ոչ 'ի նոցանէ ուսեալ . ընդ նոսա զքօսնոյր, նոցին էր շնորհապարտ ըստ հանճարոյ, ըստ զիտութեան և ըստ ամենայնի : Եւ զի ամենայն ինչ իւր 'ի նոցանէ էր, և չկարէր ինչ յինքենէ, քաղցր էր նմա հնազանդել հրամանաց նոցա զորս 'ի բարերարել միանտացին նմա : Ա. Ի. 'ի զորգանալ նորա ի բար



տանեկութիւն, և 'ի պարզել տեսութեան
մտացն, սկսանէր 'ի միտ առնուլ 'ի մօրն ար-
տասուաց զհօրն իւրոյ թշուառութիւն. Հե-
տազօտէր ստէալ 'ի նոցանէ զալատճառս ա-
զետիցն. այլ նոքա ոչ ինչ տուեալ նմա պա-
տաժխանի, զհայրենիսն ողբային. ոչ զհայ-
րենեացն ծանօթս տալովնմա, և ոչ որ ինչ
ինքեանք 'ի հայրենիս անդ էին՝ ցուցեալ, զի
մի տրամեսցի 'ի գիտելն յորմէ բարձրու-
թենէ յարսոր անդր սահեալ էին նժդեհու-
թեամբ Բայց յորմէ հետէ ծանեաւ զտըս-
րութիւն ծնողացն, խորհուրդը մտաց նո-
րա ոչ ևս հանդարտէին. կերպարանափոխ
եղեն կեանք նորա: Զբօսանք մանկութեան
ոչ ևս քաղցրանային նմա. Ելիք զբուրաս-
տան, մոռացաւ զծաղկունս. ոչ ևս թոչնիկը
իւր սիրելի էին նմա. ոչ ևս յորս ձկանց, ոչ
ևս 'ի վարել զմակուկիկի իւր գնայրյեզր ճա-
կին, խորասուղեալ 'ի խորհուրդ՝ որ բովան-
դակ զմիտս նորա զրաւէր և զսիրտ: Բազ-
մեալ երբեմն 'ի սեալ միոյ 'ի ժայռից, յա-
ռեալ յալիս ծովակին, խոկայր յարտասուս
ծնողաց իւրոց, և 'ի հնարս ցամաքելոյ նո-
ցին: Գիտէր ևեթ զի ողբային նոքա զհայ-
րենիս, այլ որ հայրենիքն այն նոցա էին՝ ան-
զիտանայր. և քանդի հեռաւորութեամբ
'ի հայրենեացն թշուառացեալ գտանէին,
ցանկալի նմա այն իսկ էր՝ ոչ զհայրենիսն
զիտել, այլ զհնարս դարձի նոցա անդր
գտանել: Ամբառնայր զաչս իւր յերկինս՝
խնդրել 'ի Տեառնէ օգնութիւն, և այնպէս

ընկղմեալ կայր՝ ի խորհուրդս յացս, զի տեղատարափք ձիւնաբերք և հողմք սաստկաշունչք չկարէին ընդուստուցանել զնա։ Այլ 'ի ժայնել զնա ծնողացն լսէր անդէն, և 'ի ժայռից բարձանց իջանէր գայր թեթեընթաց 'ի լուր խրատու հօրն, և օգնել մօր իւրում յառտնին խնամն։ Բայց թէպէտ առնոցին, և թէ հեռի 'ի նոցանէ, թէ յընթերցումն և թէ 'ի կար սպարապեալ, թէ 'ի քուն և թէ յարթմնի, նոյն և մի խորհուրդ զուշնորա գրաւէր. այլ զգուշանայր չյայտնել նոցա զայն, չեւ ուղւոյ լեալ։

Քանզի խորհուրդն զնալ հետի մինչեւ 'ի Պետրոսօլիս 'ի խնդիր դարձի հօր իւրոյ. այսպիսի խորհուրդ արիական երկնեալ 'ի մտի, և 'ի գործ այսպիսի քաջայանդուգն սպարաստէր օրիորդն երկչու։ Բայց թէպէտ և արգելք ծանունք յանդիման լինէին մտաց նորա՝ սակայն զօրու թիւն կամաց, արութիւն սրտի, և առ Աստուած ապաւինութիւն քաջալերէին յաղթել ամենայնի։ Ի հաստատել նորա 'ի խորհուրդն, և 'ի մերձենալ աւուրց ձեռն 'ի գործ առնելոյ, ահացուցանէր զնա անհմտութիւն ճանասլարհին. զի և ոչ ուրեք 'ի մօտակայ շինից զիտէր ուղեորել. չէր նորա երբէք ելեալ յանտառէն, և ի՞ր զնալ մինչեւ անդը 'ի Պետրոսօլիս. զիա՞րդ բարբառել ընդ ազգս այլալեզուս՝ ընդ որս սպարտ էր նմա անցանել. մանաւանդ զի հարկ էր նմա մուրսողութեամբ հայթայթել զաւուրն սպարէն։ Եւ թէպէտ ապաստանէր

՚ի խոնարհութիւն՝ զոր ՚ի բարեպաշտ մօրէն
էր ուսեալ, բայց և այնչափ ինչ զիսստասըր-
տութիւնէ մարդկան էր լուսեալ՝ զի համա-
րէր թշուառութիւն մեծ զհարկ խնդրելոյ
՚ի նոցանէ ողորմութիւն. և զծնողացն ևս
գիտելով զորդեսէր գորով, չյուսայր ՚ի նո-
ցանէ նպաստ ՚ի չու, և չկարէր զիմել առ
նոսա: Խսկ առ ո՞ զիմել յանապատի՝ ուր
կայրն հեռի ՚ի մարդկանէ, ՚ի հիւղի անդ՝
ուր չէր մուտ ումեք. և յումմէ մարթէր
նմաակնունել օգնականութեան: Հանդերձ
այսու ամենայնիւ ոչ վհատեցաւ. յուշ ե-
ղեն նմա արկածքն՝ յորմէ մազապուր լեալ
էր հայր իւր, և ասէր. Զիք երկիր վայ-
րենի՝ ուր երկինք ոչ լուիցեն ձայնի եղկե-
լեաց, ուր խնամք երկնից թողցեն զնոսա
ամայի յօգնականութենէ:

Քանդի Ափրինճեր ամօք ինչ յառաջ յորս
ելեալ ՚ի ձմերայնի ընդ ափափայս՝ առ ո-
րով գետահետեալ անցանէ թուպոլ, հազիւ
ճողովրեալ էր ՚ի վտանգէ, պատանւոյ ու-
րումն արիութեամք: Եւ էր պատանին այն
Ամոլոֆ, քաղաքապետին թուպոլսքեայ որ-
դի, որ անդը յաւուրս ձմերայնոյ գայր
ամի ամի հետամուտ կպից ՚ի դաշտ իշխ-
մայ, և ընդդէմ արջուց խիզախել ՚ի մարտ
յՈւրալեան լերինս մերձ ՚ի Աայիմքա: Անդ
՚ի հալածել նորա զարծու, որ քան զամենայն
ազգս որսոց է վտանգաւոր, պատահեալ
Ափրինճերի՝ զերծուցեալ էր զնա ՚ի մա-
հուանէ. և յայնմհետէ անուն Ամոլոֆի չնոր-

Հապարտ մեծարանօք յիշատակէր առ նուսա, և օրիորդն և մայր նորա ըղձիւք ցանկացին զբարերար խրեանց ճանաչել և բարեբանել զնա: Հանապազօր ազօթս վասն նորա մատուցանէին, և ամ ըստ ամէ 'ի սկսանել որսոց ձմերայնոյ՝ յուսացին տեսանել զնա 'ի հիւղ խրեանց. այլ նա չերեէր երբէր առ նոսա, զի և նմա որպէս ամենեցուն՝ արգելեալ էր չմտանել առ նոսա. և ոչ արգելն այն բուռն էր նմա, զի որ ինչ 'ի ներքս 'ի հիւղի անդ էր՝ անզիտանայր:

Բայց Ելիսաբեթյանախագոյն ևս խորհէր 'ի Սմոլոֆ, հասու լեալ զժուարութեան եւ ից յանապատէ անտի՝ առանց ուրուք օգնականութեան, և սլաշտանութիւն այնպիսւոյ ուրուք պատանւոյ զամենայն երկիւղ 'ի բաց փարատէր, բառնայր զամենայն խոչ և խութ: Զի ովլ ոք առաւել քան զնա կարող էր ուսուցանել ինքեան զհանգամանս ուղեղորութեան 'ի Սայիմքայ մինչեւ 'ի Պետրոպալիս, և զհնարս հասուցանելոց անվրէպ աղերս առ ինքնական. դարձեալ և 'ի զայրանալ քաղաքապետին Թուպոլսքեայ ընդ փախուստ խր՝ ու առաւել քան զնա կարող էր ցածուցանել զցասումն նորա, ածել զնա 'ի զութ, և զերծուցանել զծնօղսն 'ի պատճոց՝ որոց պարտաւորս զնոսա փախատեամբն կացուցանէր: Զայսոսիկ որ ինչ 'ի պաշտպանութենէ նորա օգուտք էին՝ զմտաւ ածեալ, ցանկայր զիտել՝ չեանցեալ աւուրբ որսոց՝ թէ անդ էր պատա-

նին, և գտանել հնարս խօսելոյ ընդ նմա :
Բայց Սփրինճերի այնպէս զիղջ լեալ ընդ
արհաւիրս հարսինն և դստեր վասն վտան-
գի մահուն՝ յորմէ մազապուրն եղեալ էր,
մինչև խոստանալ նոցա մի ևս յորս արջուց
դիմագրաւել, և մի ելանել ընդ անտառն՝
բայց միայն զհետ սամուրաց և այծից : Սա-
կայն Փեղորայ և յետ իսկ խոստման նորա
դղողանի հարկանէր սիրտ՝ յելանել նորա
յորս, և մինչև 'ի դարձ նորա կայր 'ի կաս-
կածի սրտաթունդ յահէ արկածից :

Ծածկէր յայնժամերկիր ձիւնապատ, և
էր ցուրտ զերեսուն աստիճանօք 'ի վայր
քան զսառն խոնարհեալ, 'ի խորս անդ ձը-
մերայնոյ, 'ի միում'ի պայծառ աւուրց ամ-
սեան զեկտեմբերի, ել Սփրինճեր հրա-
զինեալ յորս 'ի դաշտ : Եւ յելանելն իւ-
րում զիրկս արկեալ հարսինն և դստեր,
խոստանայր դառնալ նախ քան զմուտս ա-
րեգական . բայց օրն տարաժամէր, արե-
գակն 'ի մուտս էր, և Սփրինճեր ոչ երևէր :
Յետ մահաշըուկ արկածիցն չեւ ևս թերա-
ցեալ էրնա 'ի խոստմանէն, վասն որոյ եր-
կիւղ անհնարին կալաւ զՓեղորա . իսկ Ե-
լիսաբեթ ջանայր փարատել զերկիւղ նո-
րա, այլ ինքն ևս յերկիւղի կայր : Կամէր
յօգնութիւն հասանել հօրն, և չկարէր
թողուլ զմայր իւր յողբս : Փեղորա փափ-
կասուն էր և տկար, և մինչև ցայնժամ
ըստ եզր լճին չեւ էր անցեալ . այլ 'ի սաս-
տիկ հոգոցն ստիպեալ յայնժամ, բուռն

արար անձին գնալ ընդ դստեր իւրում 'ի
խնդիր առնն . Ելին մեկնեցան 'ի միասին ,
դէմ եղեալ ընդ անտառախիտս 'ի դաշտն :
Յուրտ սաստիկ էր , թուէին մայրիք ան-
տառին սառնեղէնք , կողերց նոցա եղեմնա-
պատ սպիտակացեալ . մէզ թանձրամած
ծածկէր զեղերս չուրջանակի . արև 'ի մուտս
'ի գոյն ախուր ներկանէր զհամագոյս , և
ձիւն միապաղաղ բիւրզանման ակնախտիղ՝
դեղեէր զֆեգորա 'ի գնացս . բայց Ելիսա-
բեթ ընդ նովին երկնաւ սնեալ , և սովոր 'ի
խիղախել ընդ սաստիկագոյն ձմերունս ,
քաջալերէր զմայր իւր և օգնէր նմա : Այս-
պէս զեռաբողբոջ ընձիւդ ծառոյ տեղափո-
խելոյ յերկիր օտար և տկարացելոյ՝ ըն-
դելացեալ երկրին ուռանայ ծլարձակ , և 'ի
սուդ ժամանակի նեցուկ մոտեալ ոստոցն
մայրենեաց՝ ընդ հովանեաւ իւրով ծածկէ
զբունն կենսատու իւր :

Մերձ 'ի դաշտ անդր հասեալ՝ իբրև ոչ
ևս զօրէր Փեգորա յառաջ գնալ , ասէ ցնա
Ելիսաբեթ . Օրս տարաժամեալ է , մայրիմ .
հանգիր դու աստ , և երթայց ես յեզր ան-
տառիս . եթէ յամեմք , զիշեր 'ի վերայ
հասանէ , և ոչ ևս կարասցուք տեսանել
զհայր իմ՝ թէ իցէ 'ի դաշտին : Յայնժամ
Փեգորա յեցեալ 'ի մի 'ի մայրեաց , եթող
դստերն գնալ . և սրացաւ նա 'ի դաշտն . և
'ի վերայ միոյ 'ի զերեղմանաց , որ բլրաձե
ամբառնան անդ խիտ առ խիտ , դէտ կա-
ցեալ օրիորդն սրտատրով և արտօսրալից՝

խնդրէր զհայր իւր, և ոչ ուրեք տեսանէր
զնա: Զերևէր ինչ՝ ի լուռ և յամացի գաշ-
տին. մութ գիշերոյ սկսանէր զերկիր ընդ-
երկինս խառնել. և ահա յանկարծ ճայթեաց
հրազէն ոչ ինչ՝ ի բացէ, և արծարծանէր
յոյս յօրիորդն. զի զթնդիւն, զոր՝ ի ձեռանէ
հօրն ևեթ էր լուեալ, համարէր անշուշտ
հաւաստիս գտանելոյ անդ զհայր իւր. և դի-
մեալ ընդ այն կողմն, տեսանէ յետկոյս
ժայռի այր մի կորացեալ՝ իբր՝ ի խնդրել
ինչ ընդ երկիր, և ձայնէ. Հայր իմ, սիրե-
ցեալ հայր, զո՞ւ իցես: Դարձաւ՝ ի նա
այրն, և չէր Ափրիններ. այլ պատանի գե-
ղանի՝ որ՝ ի տես օրիորդին հիացեալ եկաց:
Յայնժամ յաւել Ելիսաբեթ ցաւազին. Ոչ,
չես զու հայր իմ, այլ տեսեր զու զնա՝
գաշտիդ, և ո՞ւր կարացից գտանել զնա:
Պատասխանի ետ պատանին. Զհայր քո ոչ
ճանաչեմ. այլ չէ արժան՝ ի տարաժամուս
կալ քեզ աստ միայնակ. բազմավտանդ է
վայրս, չերկընչիս զու բնաւ: Ի վերայ էած
օրիորդն. Ո՛հ, չիք ինձ վտանդ ահարկու
քան զայն, եթէ չգտից զհայր իմ: Եւ զոյգ
ընդ բանին ամբարձ զաչս՝ ի յերկինս. աղ-
նուականութիւն, գորով և արիութիւն փայ-
լէին՝ ի նոսա՝ յայտարարք ոգւոյ, և հան-
դերձելոյ բախտի նորա նախագուշակք:
Յուղեցան գութք պատանւոյն. թուէր նմա
երազել, զի հանգոյն ինչ չէր նորա տե-
սեալ, և ոչ՝ ի մտի պատկեր այնպիսի եր-
բէք նկարեալ: Եհարց զանուն հօր օրիոր-

դին, և նա ասէ. Պետքոս Ափրինճեր է առուն նորա: Յայնժամ ասէ պատանին. Եւ որպէս, դուսար աքսորելոյն իցես՝ որ առ լիւդ բնակէ 'ի հիւղիդ. մի ինչ հոգար, ճանաչեմզնա, չե ևս էանց ժամ՝ մի յորմէ հետէ մեկնեցաւ նա յինէն՝ զնալ ընդ այլ ճանապարհ 'ի բնակութիւն իւր. և արդ հասեալ իսկ իցէ անդր: Զայն իբրեւ լոււաւ օրիորդն, փութացաւ՝ ուր թողեալն էր զմայր իւր, և 'ի ձայն ցնծութեան աւետաւ որի նմա 'ի հեռուստ մայրակոչ լինելով մինչչե իսկ մարթէր ձայնի իւրոյ առ նա հասանել: Եւ իբրեւ եկն 'ի տեղի անդր՝ և չեգիտ զնա, վարանեալ տագնապեալ ձայնէր յանտառին զծնօզս իւր. և ահա ձայնք հնչեցին յայնմ կողմանէ լճին. փութացաւ եհաս, և առ սեամն հիւղոյն տեսեալ զհայր իւր և զմայր, զիմեաց 'ի զիրկսնոցա: Որոց բաղկատարած ընկալեալ զնա, և ողջագուրեալ զմիմեանս, պատմէին թէ որպէս ընդ այլեայլ ուղի 'ի հիւդ անդր զարձեալ էին. և ահա հասեալ առ միմեանս, և զերծեալ 'ի հոգոց: Յայնժամ զիտաց օրիորդն զի զհետ իւր եկեալ էր պատանին. բայց Ափրինճերի տեսեալ զնա՝ ասէ. Յաւէ ինձ, ո Ամոլով, զի անագան է ժամն. զիտես զի չէ ինձ օրէն և ոչ զիշեր մի ընդունել զքեզ: Խ լուր անուան պատանւոյն՝ Ելիսաբեթ և մայր նորա զոչեցին. Ամոլով ուրեմն է զա, բարերար մեր. և երկոքեան 'ի միասին անկան յոտս նորա. Փեղորա

թանայր զայնոսիկ արտասուօք, և Ելիսա-
բեթ ասէ. Հանապազօք մաղթեմք քեզ օրհ-
նութիւն 'ի Տեսոնէ, քաջդ Ամոլով, դի զե-
րեամ մի յառաջ ապրեցուցեր դու զհայր
մեր: Պատասխանի ետ պատանին յոդւոց
հանելով. Եւ լոււաւ ձեզ Տէր, և առաքեաց
դիս այսր. դի սակաւն այն զոր արարի ձեզ
չէր ինչ արժանի վարձուց այդքանեաց:

Գիշեր խորին էր, խաւար աննշոյլ պա-
տէր զանտառաւն . չէր մարթ անվտանգ
դառնալ գիշերայն անդր 'ի Այիմքա, և ոչ
Ափրինճեր իշխէր հրաժարել 'ի հիւրընկա-
լելոյ զապրեցուցիչ իւր. բայց երդմամք
երդուեալ էր քաղաքապետին Թոսպոլսքեայ
չընդունել զոք 'ի բնակութիւն իւր, և զար-
հուրէր զրծել երդմանն: Վասն որոյ անձ-
նամատոյց եղեւ ուղեկցել պատանւոյն մին-
չե 'ի Այիմքա, և ասէ. Լուցից ջահ, և
երթայց առաջի քո, դի անզեակ եմ ես ու-
ղեաց անտառիդ, զգուշանալ 'ի վտանգա-
ւոր ճահճաց և լճից: Բայց Փեղորայ երկու-
ցեալ անկաւ յոտս նորա՝ խսփանել զնա.
և Ամոլով ասէ. Թողինձ, սիրելիդ իմ, կալ
տստ 'ի հիւղիդ մինչեւ ցառաւօտ. ոչ ինչ
զանխուլ է յինէն հրաման հօր իմոյ, և ոչ
այնքանոյ խստութեանն ընդ ձեզ պատ-
ճառք անձանօթ են ինձ. այլ ոչ ինչ երկ-
րայիմ զի ներեսցէ նա քեզ ըստ հարկի
իրացս զերծ զոլ յերդմանէդ, և տեսցես
զի առաքեցայց 'ի նմանէ ընդ հուալ՝ շնորհ
ունել քեզ վասն հիւրոյիցդ: Յայնժամ

Սփրինճերի կալեալ զձեռանէ նորա, և մոյծ
զնա 'ի հիւղ անդր, և նստան առ թոնքով.
իսկ Փեղորա ընդ զստերն պատրաստէր
ընթրիս:

Եւ էր Ելիսաբեթ 'ի ձեւ գեղջկուհեաց
Ակիւթացւոց. պատմուճան կարմիր հանգ-
րիճեալ 'ի վեր, և պարածածկեալ բարձր
իւր վթենեաւ. հիւսք վարսիցն մինչ 'ի
զարշապարս անդր նորա իջանէին. բաճկո-
նակ կոճկէն զապեալ ընդ մէջ դբոլոր ան-
ձինն ընծայէր 'ի տեսիլ զբարեձեռւթիւն,
և թեզանիր յարմուկն 'ի վեր հարեալ
դբազկացն գեղ. որպէս զի զզեստուցն
պարզութեան երեելի ևս զկերսպարանաց
նորա կացուցանել զգեղ վայելչութեան. և
չնորհք այնպիսի 'ի շարժուածս նորա երե-
ւեալ, զի 'ի զմայլումն և 'ի գութ խանդա-
զատէր պատանին, և չկարէր շրջել 'ի նը-
մանէ 'ի բաց զաչս և զսիրտ: Ոչ ինչ նուազ
և օրիորդն բերկրէր 'ի տեսիլ պատանւոյն.
այլ սուրբ և ամրիծ էր բերկրութիւն նորա,
յորդորեալ 'ի չնորհապարտ սրտէ վասն
բարերարութեան պատանւոյն, և ակնկա-
լեացն 'ի նմանէ բարեաց. սրտազիտին Աս-
տուծոյ տեսանելով զսիրտ օրիորդին՝ զի
վասն ծնողացն և բովանդակ վասն նոցա
առնէր զամենայն:

Պատմեաց յընթրիս անդ պատանին, զի
յերից աւուրց հետէ լուեալ էր 'ի Այսիմքա
զսովալլուկ գայլոց ընդ կողմանսն ընդ այ-
նոսիկ աւար հարկանել, և զի ընդ հուալ

վասն այնորիկ արշաւանք որսոց անդր պատրաստելին՝ բնաջինջ առնել զնոսուս։ Յայնժամ Փեղորաց հատաւ գոյն երեսացն, և ասէ յԱփրինձեր. Յուսամ զի չերթայցես զու անդր, արկանել 'ի վտանգ զկեանս քո՛ որ պատուականազոյն է ինձ քան զամենայն բարութիւնս։ Պատասխանի ետ Ափրինձեր ողորմազին. Զի՞նչ է այդ՝ զոր խօսիադ, Փեղորա, զի՞նչ են կեանք իմ. Եթէ չէի ես կենդանի, ոչ գտանէիք զուք յանապատի աստ. գիտիցես իւ լիցի վախճան նժդեհութեան քո և գտերդ. գիտես խեկ զու զայն...։ Եւ հատին զբանս նորա ողբք ափկնոջն կականաւորք. և Ելիսաբեթի մատուցեալ կալեալ զձեռանէ հօրն, ասէ. Գիտես զու, հայրիկ, զի չիք իմ հայրենիք բաց յանտառէ աստի՛ուր սնեալս եմ. աստ մայր իմ և ես կեցցուք քեւ բարեբաստիկք. վկայեմ սրտի նորա իբրեւ իմումս, զի ոչ ուրեք 'ի վերայ երկրի կարասցուք կեալ առանց քո, և ոչ 'ի հայրենիս քո։ Յայնժամ Ափրինձեր ասէ ցալատանին. Լսես ո՛ Սմոլֆ, կարծիցես թերես զի ափոփեն զիս բանք այսալիսիք, նա աւանիկ կարեվէր խոցեն. առաքինութիւնք զոյտ փոխանակ աղդելոյ յիս խնդութիւն՝ 'ի սուգ համակեն զիս, ածեալ զմատաւ զի վասն իմ զոքա յանապատի աստ թաղեալ կան, զի վասն իմ զստրիկս այս կացցէ աստ անձանօթ՝ զըրկեալ 'ի սիրոյ։ Ի վերայ էած օրիորդն. Հայր իմ, ահա 'ի զիրկս ծնողացդ իմոց

զգուիմ, և ընդէր զրկեալ ասես զիս 'ի սիրոյ: Խոկ հօրն ոչ կարացեալ ժոյժ ունել զթոյն՝ յաւել, Այլ չվայելեսցես, դուստր իմ, 'ի բերկրանս՝ յոր ես քեւ վայելեմ, չլուիցես զքաղցր բարբառ որդւոյ սիրելոյ, կեցցես միայնակ անայր անորդի որպէս ձնձզուկ 'ի վայրի: Զոհ անպարտական, դու անզիտանաս յորոց զրկիսդ. այլ ես զիտեմ յորոց զրկեմս զքեղ, կորուսեալ է ինձ ամենայն:

Ի լուր բանիցս այսոցիկ գորովեալ Ամուլփ, սրբէր ստէպ զարտասուս. կամէր բարբառել, այլ հեղձամշղձուկ լինէր բարբառ իւր, և ուր ուրեմն սկսաւ խօսել և ասէ. Կարես ինքնին խոկ 'ի միտ առնուլ, սիրելիդ իմ, զի յորմէ հետէ 'ի տխուր յայսմ սլաշտաման կայ հայր իմ՝ ոչ նոր ինչ է ինձ տեսանել աղէտս այսպիսիս. բազում անզամ եղեւ ինձ շուրջ անցանել ընդ լայնածաւալ սահմանս իշխանութեան նորա, և ականատես լինել լալեաց բազմաց և թշուառութեան, և լսել հառաչանս և հեծութիւնս 'ի խուլ միայնութեան հեղեալ: Տեսի ես յանապատս սոսկալիս Պերեսովայ որեար չարաբաստիկ, որ կէին հեռի յընտանեաց և 'ի բարեկամաց, զրկեալք 'ի քաղցր զդուանաց. դողտրիկ բարբառոյ ոչ երբեք զսիրտ նոցա սփոփեալ, մեկնեալք 'ի մարդկանէ, հրաժարեալք յամենայնէ. ոչ միայն վտարանզիք յաքսորս՝ այլ և յաղէտս տպուապանաց: Յաւել և Փեղու-

բա աղերսական յանդիմանութիւն առ այր
իւր, Դու զամենայն ասես կորուսեալ, ուր
սլահեն երկինք զգուստը քոյին. Եթէ զնա
ես կորուսեալ էր քո, զի՞նչ յաւելուիր ա-
սել: Ի բանից աստի սթափեալ Ավրինձեր,
կալաւ զձեռանէ զստերն և զՓեզորայ, և
փարեալ զնոքօք, և յերկաքանչիւր՝ ի նո-
սին ակնարկեալ, ասէ. Այո, զգամզի չեես
ինձ կորուսեալ է ամենայն:

Իբրև այդ եղեւ, 'ի հրաժարել պատա-
նոյն 'ի նոցանէ՝ արտմեցաւ Ելիսաբեթ, զի
ցանկայր յայտնել նմա զխորհուրդ իւր, և
խնդրել 'ի նմանէ ձեռնտուսութիւն: Զէրնո-
րա գտեալ վայրիկ մի առանձինն ընդ նմա
խօսելոյ, զի կային միշտ անդ ծնօղք իւր՝ ո-
րոց չկամէր ինքն յայտնել զխորհուրդ իւր.
բայց յուսայր 'ի գառնալ նորա առնուլ
պարապ 'ի խօսել, վասն որոյ անձկով մեծաւ
ասէ. Պարմանիդ քաջ, ոչ ես գարճցիս
առ մեզ, տուր ինձ բան՝ զի չիցէ ինձ այս
յետին տեսութիւն կեցուցչին հօր իմոյ :
Զարմացաւ Ավրինձեր ընդ բանս զստեր
իւրոյ, այնպիսի անձկանօք ասացեալ, և
տագնապէր 'ի սրտի ածեալ զմտաւ զհրա-
ման քաղաքապետին, և յաւել՝ զի չիր
իւր օրէն միւսանգամ զհրամանաւ նորա
անցանել: Այս որ պատասխանի ետ Ամո-
լոֆ, ընդունել 'ի հօրէ իւրմէ զայս շնորհ
վասն իւր 'ի գառնալ առօրին 'ի Թոոպոլսքի,
և յաւել. Ի խնդրել իմում 'ի նմանէ զըր-
նորհս զայս վասն իմ, չկամիցիս զի խնդրե-

ցից ինչ և վասն քո, բարեկամ. բարե-
բախտ զանձն համարիմ պիտանի լինել
քեզ. չիցէ՞ ինչ քո խնդիր 'ի նմանէ: Պա-
տասխանի ետ Ափրինձեր տիրագին. Եւ
ոչ մի ինչ: Յայնժամ պատանին սրտաբե-
կեալ, և սուզ ինչ զաշս 'ի վայր արկեալ,
դարձաւ ապա առ Փեղորա, զնոյն և նմա
արար հարցուած. և նա ասէ. Յանկայի զի
հրաման տայր ինձ հայր քո գնալ 'ի տօնս
ընդ զստեր խմում յեկեղեցի 'ի Ասյիմքա,
'ի լուր սրբոյ պատարագին: Եւ խոստա-
ցաւ պատանին ընդունել նմա զշնորհն.
և մեկնեցաւ զնաց օրհնաբանեալ 'ի նո-
ցունց, և խոստացաւ դառնալ ընդ հուպ
ըստ ըղձից օրիորդին: Բայց 'ի գնալն, միտք
իւր և խորհուրդ զօրիորդաւն յածէին. ըր-
նաղագեղ տեսլի նորա՝ յանապատին յերի-
կէ 'ի միտս իւր տպաւորեալ, 'ի տեսանելն
ևս զնա ընդ ծնօղս նորա, կասկեցաւ ոզի
իւր ընդ նմա բոլորովին: Յիշէր զամենայն
խօսս նորա, նկարելով զկերպարանս նորա
և զհայեցուած 'ի մահ. յիշէր մանաւանդ
զվերջին բան նորա, առանց որոյ հրաժա-
րէր թերևս ակնածութեամբ 'ի սիրոյ նո-
րա. այլ այնու անձկով խնդրել օրիորդին
զդարձ նորա, և յեղուլ ձայնին 'ի խըն-
դրելն որ զգողարիկ սրտի նորին հոլաներ
զիսանդաղատանս, ետուն նմա յորոց կրերն
'ի նոյն և զօրիորդն կարծել: Որովք վա-
ռեալ միտք սլատանւոյն. ոչ ևս ըստ զի-
պաց ինչ զերիկեան հանգիպումնն համա-

րէր, այլ փոխադարձ սիրելութեան տղումն ՚ի սիրտ օրիորդին որպէս յիւրն . և ցանկայր անժոյժ զհաւաստիս գուշակութեանցն ընթեռնուլ յամբիծ սրտի օրիորդին : Այլ աւանդ, զի չկարէր գուշակել որ ինչ յաւուր միում հանդերձեալն էր վերծանել ՚ի սրտի նորին :

Բայց յօրէ այցելութեան սկատանուոյն՝ յաճախեաց տրտմութիւն Ափրինճերի . ՚ի յիշատակ սիրելի ազնուական և արի պարմանւոյն՝ յեղյեղէր ՚ի մտի որսլիսում ումեք փեսայի ցանկայրն զդուստր իւր հարսնացուցանել . և վասն չկարելոյ ՚ի թշուառութեան անդ ըղձիցն սկատահել՝ ոչ միայն չէր նմա ցանկալի գարձ սկատանուոյն, այլ և խիթալի իսկ էր . զի մարթէր օրիորդին ոգէխառնիլ ընդ նմա ՚ի հաստոյր հարուած հայրենի սրտին, ՚ի տեսանել զդուստր իւր հալեալ ըղձիւք չյուսալի հարսանեաց :

Ի միում աւուրց ընդ երեկո՝ մասայոյդ, ձեռն ՚ի ծնոտի, արմուկն յեց ՚ի թոնիր, հառաչէր օրիորդն և յոգւոց ելանէր : Փեղորա ՚ի տեսանելն զնա ծանրաթախիծ՝ եթող զասեղն ՚ի ձեռանէ, և սիրտ ՚ի տաղնասլի աշուցեալ ՚ի նա՝ խնդրէր ՚ի Տեառնէ աղղել իւր բանս սփոփիչս այնալիսիո՛ որ մոռացումն վշտաց նորա արասցեն : Խակ օրիորդն կացեալ ընդ հովանեաւ ՚ի բացէ՝ հայէր յերկաքանչիւր, և յուսով ևեթ դարեցուցանելոյ զարտասուս նոցին սփոփէր, աներկեան ընդ օգնականութիւն սկա-

տանւոյն՝ ի կտտարումն առաջարկութեան
իւրոյ. զի վստահութիւն իմն անդստին՝ ի
սիրտ իւր աղդէր ընդ կարեկցութիւն նորա
և ընդ պաշտպանութիւն։ Բայց կասկածէր
թէ գուցէ ծնօղք իւր հակառակ կացցեն
խորհրդոց իւրոց, մանաւանդ մայր իւր.
այլ զիա՞րդ մարթ էր իւր մեկնել առանց
նորին հրամանի, առանց գիտելոյ զհայրե-
նիս նոցա, և վասն որոյ իրաց պարտն էր
խնդրել թողութիւն։ Հարկ էր նմա յայտ-
նել նոցա զխորհուրդ իւր, և ահա ժամ էր
յայտնելոյ. եղ ծունր յերկիր, խնդրեաց՝ ի
Տեառնէ ածել զսիրտ նոցա՝ ի հաւան. և
մատուցեալ առ հայր իւր յետկուսէ՝ կայր
յեց՝ ի թիկնաթուն յորում բազմէր. և
վայրիկ մի լուռ կացեալ զի թերես նա ինքն
կանխեսցէ՝ ի խօսել, իբրև ետես զի ընկըլ-
մեալ էր նա՝ ի խորհուրդս՝ խօսել կալաւ
և ասէ, Խնդիր ինչ է ինձ՝ ի քէն, հայր իմ:
Նա՝ ի վեր առեալ զգլուխ իւր՝ ակնարկեաց
ասել. և դուստրն ասէ. Աւուրբք յառաջ
՝ ի հարցանել պատանւոյն Ամոլոֆի՝ թէ իցէ՝
ինչ քո խնդիր՝ ի հօրէ իւրմէ, ետուր նմա
պատասխանի՝ թէ ոչ ինչ. այլ արդարե չի-
ցէ ինչ քո խնդիր՝ ի նմանէ։ Հայրն ասէ.
Եւ ոչ մի ինչ՝ զոր կարիցէ նա տալ ինձ։
Դուստրն ասէ. Եւ ո՞ ապա կարիցէ տալ
քեզ զոր խնդրեսդ։ Հայրն ասէ. Ուղղու-
թիւն և արդարութիւն։ Դուստրն ասէ։ Եւ
ուր իցէ գտանել զայն։ Հայրն ասէ. ԱՅեր-
իինս աներկբայասլէս, իսկ ՚ի վերայ երկրի

բնաւ ամեննեին : Եւ զայս տսացեալ՝ արկ անդրէն առ վշտին զգլուխ իւր 'ի վայր 'ի մէջ երկոցունց ձեռաց իւրոց : Լուցին առ վայր մի . և ապա կրկնեալ անդրէն օրիորդն առէ խրախուսանօք ցծնօղս իւր . Լուարուք ինձ հայրիկ իմ և մայրիկ . եօթն և տասներորդ ամէ այսօր տիոց իմոց , այսօր ընկալայ 'ի ձէնջ զկեանս իմ , և սիրելի է ինձ փոխանակել զայն 'ի վերայ ձեր , հանգերձ սրտիւ խմով որ սիրէ զձեզ և մեծարէ որպէս պատկերս Աստուծոյ կենդանիս : Ի ծննդենէ և այսօր ըստ թուոյ աւուրց կենաց իմոց եղեն բարերարութիւնք ձեր առ իս , և չեղեւ ինձ փոխարինել ձեզ ընդ այնոցիկ շնորհակալիս և սէր . զի զի՞նչ իցեն շնորհակալիք սրտի առանց արգեանց . և իցէ ինչ սէր առանց հանդիսի ցուցակութեան : Թողէք ինձ առնել միանգամ վասն ձեր , զոր ոչ դադարէք դուք առնել ընդ իսյօրէ ծննդեան իմոյ . մի խնայէք յայտնել աստ ուրեմն զստեր ձերում զդաղտնիս աղետիցդ : Պատասխանի ետ հայր նորա կարեվէք սրտիւ . Եւ առ ինչ խնդրես զայդ դուստր իմ : Գուստրն ասէ . Առ 'ի զիտել զկարեորս տալոյ ձեզ առհաւատչեայ զսիրոյ իմոյ . զիտէ Տէր վասն որոյ իրաց համարձակիմս 'ի խնդրել :

Զայսոսիկ , զծնդովք հօրն փարեալ , աղիողորմ 'ի դէմս նորա հայեցիւք պաղատէր , այնալիսի վեհ և ազնուական կիրս յաչս իւր ընդ արտասուս բերելով , և արիու-

թեան այնպիսի գերաշխարհիկ՝ ի ցածուն
կերպարանս նորա յաւելեալ, զի յայնմ ա-
մենայնէ ՚ի միտ առնոյր Ավրինձեր զիզձու
դստերն փոքր ՚ի շատէ, և ՚ի փղձուկ
հարեալ չկարէր խօսել և ոչ լալ, այլ
լուռ և եթ կայր և անշարժ, որպէս յերե-
սաց հրեշտակի ՚ի հիացման լեալ. չեր
երբէք սիրտ նորա ՚ի սաստկութենէ վը-
տաց այնպէս յուզեալ, որպէս ՚ի խօսից
անտի դստերն. արիութիւն նորա անյող-
դողդ, զոր ոչն կարեին գրգուեցուցանել
թագաւորք, և ոչ արկածք բախտի ընկճել
զայն, գորովեալ ՚ի ձայնէ դստերն խնդրեր
զօրաւիգն, և ոչ գտանէր. և ցորչափ նա
լուեալ կայր, կայր և դուստրն առ ոտս նո-
րա: Մատեաւ անդր Փեղորա յարուցանել
զդուստրն. և կացեալ յետկուսէ՝ ուր նա
՚ի զուճս կայր, և ոչ զարժմունս նորա տե-
սանէր և ոչ զաչս՝ որովք յայտնէրն հօր
իւրում զարիական խորհուրդն, և անկաս-
կած զաղեւտիցն՝ որ հանդերձեալ էին կե-
ղեքել զիրտն մայրենի, ասէր ցայր իւր.
Ընդէր խնայես զգաղտնիոդ ՚ի գմանէ. ՚ի
մանկութենէ զորա զանգիտես. երկնչիս
թէ չկարասցէ զա հանդարտել վշտացն
ընդ գառնութիւն աղեւտիցս: Խակ հայրն
յառեալ ՚ի դուստր իւր, ասէ. Ոչ, չեր-
կընչիմ ՚ի տկարութենէ զորա: Յորմէ ՚ի
միտ էառ օրիորդն զի հասու լեալ էր հայր
իւր խորհրդոց իւրոց, և սեղմեաց զաջ նո-
րա՝ աղղելուլ լուելեայն չյայտնել զայն մօր:

իւրում, զի ճանաչեր զաիրտ նորա, և
հնարեր յամեցուցանել նմա զգառնակըս-
կիծ յայտնութիւնն : Յայնժամ գոչեաց
Սփրինճեր. Թողլ ինձ, տէր, որչափ ինչ
տրտնջեցի. Խորհեի ևեթ 'ի բարիս՝ զորա-
բարձեր յինէն, այլ ոչ յորս պատրաստէիրն
ինձ. դուստր իմ, մոռացուցեր դու ինձ
այսօր զվիշտո երկոտասան ամաց : Եւ
դուստրն ասէ. Մի ևս ասեր, հայր իմ, որ-
պէս սովորութիւն է ասել թէ չիք յերկրի
բարութիւն : Այլ աղաչեմ զքեզ, ասաինձ,
զինչ անուն է քո, ո՞ր հայրենիք, և որպի-
սի հասեալ քեզ արկածք : Եւ հայրն ասէ.
Ոչ մի ինչ հասեալ ինձ արկածք. հայրենիք
ինձ անդ են, ուր գու մերձ կաս . և անուն
իմ է բարեբաստիկ հայր Ելիսաբեթի : Յա-
ւել և Փեղորա. Եւս քան զես բորբոքես
դու զիս 'ի սէր, դստրիկ իմ, 'ի սփոփել
զհայր քո : Գորովեցաւ 'ի բանից աստի
Սփրինճեր. փարեցաւ զդստերքն և զմարք
նորա, և թացեալ զնոսա յարտասում՝
կրկնէր և երեքինէր հեկեկանօք . Աստուած
իմ, թողլ ինձ, զի ապերախտեցայ . ներեա
ինձ, և մի պատուհասեր զիս : Եւ 'ի յուզե-
լոյ կրիցն վայրիկ մի հանդարտեալ, ապա
ասէ ցդուստր իւր . Պատմեցից քեզ զամե-
նայն, դուստր իմ, որ ինչ զիտել ցանկաս .
այլ համբեր այլ ևս աւուրս ինչ, չկարեմ
արդ խօսել զթշուառութենէ իմմէ . մոռա-
ցուցեր դու ինձ զայն : Խակ օրիորդն, որ
յամենայնի հլու էր ծնողացն, ոչ իշխեաց

այլ ես թախանձել մնալով կամաց հօր իւրոյ ՚ի վեր հանելոյ զգաղտնիսն . բայց մնայր ՚ի զուր : Գոզցես իմն երկնչէր և խուսէր ՚ի նմանէ Ափրինձեր . գուշակեալ էր նորա զխորհուրդ դստերն . և չկարէր յայտնել բանիւ զգարմանս և զշնորհակալիս հայրենի գթոյն . զգայր իսկ՝ զի չէին իւր իրաւունք ժխտելոյ դստերն զհրաման՝ զոր խնդրելոցն էր , այլ ոչ արիանայր տալ նմա զայն : Ձէր իսկ և չէր այլ յոյս զերծանելոյ յաքսորանաց անտի , և հայթայթելոյ դստերն իւրում զանկն իւրոյ պայմանին . այլ յածել զմտաւ զանհնարին ճըզգունս և զահագին վտանգ ուղեւորութեանն , չհանդուրժէր խորհրդոյն . յօժարէր զանձն իսկ նուիրել ՚ի բարեկենդանութիւն իւրոցն , և վասն դարձուցանելոյ զնոսա ՚ի հայրենիս . այլ զկեանս դստերն չիշխէր ՚ի վտանգ արկանել :

Բայց Ելիսաբեթ ՚ի լոռութենէ հօրն ՚ի միտէառ որ ինչ պարտ էր գործել . ոչ ինչ երկրայէր զգուշակելոյ հօրն զմիտս իւր , և ոչ զգորովելոյ նորա ընդ այն . այլ եթէ գորովէր ընդ խորհուրդ իւր , ընդէր էր նմա խուսել յիւրմէ առ ՚ի չխօսելոյ զայնմանէ : Արդարեւ խորհուրդն այն այնպիսի նորանըշան իմն էր , զի ծնօղը իւր համարէին զայնս առաւելութեան ծնողասէր գթոյ զառանցանս . վասն որոյ առ ՚ի հաւանեցուցանել զնոսա հարկ էր հնարաւոր ցուցանել զխորհուրդն , ՚ի բաց բաւնալ զխոչս ծանունս ,

յօգնականութիւն և 'ի խորհրդականութիւն
Սմոլոֆի ապաւինել։ Այլ զիտէր զի և այ-
սու ամենայնիւ չհաւանէին նմա ծնօղք իւր .
վասն որոյ խորհուրդ կալաւ լռել տակա-
ւին , և չբանալ նոցա զսիրտ իւր՝ մինչչե-
խոսեալ զայնմանէ ընդ պատճեոյն։ Գու-
շակէր զի նոքա ընդ հզօրագոյն պատճառս
խափանելոյ զուղեորութիւն իւր՝ մի և զայն
ունէին 'ի գէմս ածել , զի չէր իւր հնար
յայնմ մատաղ հասակի հետեակել մղոնս
ութ հարիւր ընդ երկիր ցրտասառոյց . և
առ 'ի կարող լինելոյ առնուլ զառաջս ընդ-
դիմութեան նոցա՝ փորձէր հանապազօր
զկար զօրութեան իւրոյ յԽիմեան գաշտի ,
ոչ յանհարթութենէ օդոց կասեալ , ոչ 'ի
սաստիկ ձիւնաբերաց , և ոչ 'ի թանձրու-
թենէ միզի՝ ընդ որ հարկ էր նմա առ խար-
խափ զնալ։ Զօր ամենայն երթայր անզը ,
անհրաման խկ երբեմն 'ի ծնողաց իւրոց ,
և խոյս տուեալ 'ի նոցանէ՝ կրթէր տակաւ
ընդդէմ մրրկաց խիզախել։

Չմերունք Աիպերիոց մրրկալիցք են . բա-
զում այն է՝ զի 'ի պարզոյ ամսլրոպք ահտ-
զինք մթագնեն յանկարծ զերեսս երկնի .
գան հասանեն հողմք ընդդէմ իրերաց , բե-
րելով աստի զառամանիս ծովուն հիւսի-
սի , անսի զփոթորիկս կասպիականին , և
'ի հանդիպել նոցա միմեանց՝ 'ի զուր եղե-
նեաց հաստարմատ կոճեզք , և յուրանաձե
բունք ընդդէմ բարկութեան նոցա ճակատ
յարդարեն . 'ի զուր և բարտիք ճասլուկ

գտղաթամբ և մշտատատան սաղարթիւք
իւրեանց՝ յերկիր խոնարհին. բեկտին բը-
նաւք և արմատախիլ տապալին։ Ի բար-
ձրաքերձ լերանց հիւսք ձեանց, և շառա-
շիղք սառամանւոյ անհեթեթք, վայրարե-
րեալ սաստիկ թաւալմամբ, և բաղխեալ
ընդ սեպս քարաժայուից՝ խորտակին և
խորտակեն. և հողմք բռնաշունչք զիլա-
տակս լերանց, զնշխարս հիւղից, զանդեաց
և զնախիր տապաստ արկեալ՝ յափշտա-
կեն յօդս 'ի վեր, տանին արկանեն ցիր և
ցան յերկիր, ծածկեալ համասփիւռ յաւե-
րակաց համեից։

Ի միում աւուրց ամսեան յունուարի
ընդ սուաւոտն պատահեաց օրիորդին մի
յայսալիսեաց ահազին մրրկաց՝ յընդարձակ
դաշտին գերեզմանաց, մերձ 'ի փայտա-
կերտ սղօթանոց փոքրիկ։ Ի տեսանել
նորա մթագնեալ զերկինս՝ յաղօթանոց
անդք 'ի ներքս անկաւ. հողմք ամեհիր կո-
ծեալ զտկարն կերտուած և տատանեալ,
'ի հիմանց սպառնային կործանել. իսկ ինքն
խոնարհեալ առ սեղանովին կայր աներ-
կիւղ. ամենայն ինչ շուրջ զնովաւ սասա-
նեալ 'ի մրրկէն, սիրտ իւր միայն էր ան-
սասան, յուսացեալ 'ի Տէր սլահապանել ըղ-
կեանս իւր վասն ծնողաց իւրոց, մինչեւ ա-
զատեսցէ զնոսա։ Առաւելազանց արդեօք
էր այսքան վստահութիւն, այլ ազգումն
երկնաւոր՝ բարեսպաշտիկ ոգւոյ զգալի՝
խրախուսէր զօրիորդն յարկութիւն ան-

Խոռով՝ ի յոյզս տարերց, 'ի ճայթիւն ամպ-
րոպաց. մինչև անվեհեր սրտին տեղի տալ
վաստակաբեկ մարմնոյ, անկանել առ ուս
սեղանոյն՝ առ որով աղօթէրն՝ յանդորր 'ի
նիրհ, իբր 'ի հայրենի գիրկս հանգչելով
մանկան անմեղի, իբր առաքինութեան 'ի
ծոց կրօնից:

Ի նմին աւուր դառնայր Ամոլոֆ 'ի թո-
պոլսքեաց, և ընդ հասանելն 'ի Սայխմքա՝
փութացաւ 'ի հիւղ աքսորելոցն, բերելով
զոր ընկալեալն էր հրաման՝ Փեղորայ և
դստեր նորա գնալոյ 'ի Սայխմքա 'ի պաշ-
տամունս տօնից 'ի կիւրակէս։ Բայց Սփրին-
ճերի ոչ միայն հրամանն այն ոչ ընորհեալ,
այլ և խստիւ արգելոյր չզնալ անգր. և
չտեսանել խոկ զնա Ամոլոֆի միւսանգամ,
'ի զթութենէ քաղաքապետին թոսկոլսքեայ
ըստ ոչ պարտեաց ընորհեալ նմա զայն վեր-
ջին նուագ, և զայս այսակէս սկատանւոյն
երգուեալ հօր իւրում։ Տխուր էր Ամոլոֆ
ընդ այնքան խստութիւնն. այլ ըստ մեր-
ձենալ 'ի բնակութիւն օրիորդին՝ տխրու-
թիւնն փոխէր յանդգաստից 'ի խնդութիւն,
և զմայլումն վերստին տեսութեան նորա
առաւել յոյժ ազգէր 'ի սիրտ իւր քան
դիմաշտ բաժանմանն զարձեալ 'ի նմանէ։ Ի
տիս մանկութեան վայելք բարեաց սաս-
տիկ իմն խնդութիւն զեղեալ 'ի սիրտ, մո-
ռացումն առնեն ամենայնի՛ որ զհետն հան-
դերձին դալ. մանկութիւն բոլորանուէր 'ի
նոսին՝ ոչ ևս խորհի 'ի տեսողութիւն նոցին,

սիրտ նորա երջանկութեամբն լցեալ՝ չտայ
տեղի կասկածանաց կորստեան նորին:

Սմոլով ՚ի հիւղ անդր մտեալ, ընդ վայր
՚ի խնդիր լինէր օրիորդին, զի չէր նա անդ.
կասկածէր իսկ յառաջադոյն՝ թէ գուցէ
հարկ լիցի նմա մեկնել անտի նախ քան
զգարձ իւր, և չկարաց անկեղծ պատանին
ծածկել զտրտմութիւն իւր ընդ այն: Թէ-
ալէտ և չնորհակալիս ՚ի գորովեալ սրտէ
մատուցանէր նմա Փեղորա, օրհնելով
զձեռնն որ բանայր նմա զդուռն տանն
Տեառն, զձեռնն որոյ զայր իւր ապրեցու-
ցեալ էր. և թէալէտ Ափրինճեր կոչէր զնա
պատսպարան և խնամակալ տառապելոց,
այլ վեր ՚ի վերոյ ազդէին բանք նոցա ՚ի
պատանին. հազիւ պատասխանէր բանից
նոցա, և անուն ևեթ օրիորդին էր անլը-
ռելի ՚ի շրթունս նորա: Խռովութիւն ոգ-
ւոցն յայտ իմն առնէր զկիրս սրտին, և ա-
ռաւել այնու սիրելի զնա առնէր Փեղո-
րայ. սէր նորա ընդ դստեր իւրում շողո-
մէր զփառասիրութիւն, հզօր ՚ի սիրտ մայ-
րենի: Ոչ նոյնպէս դիւրընկճելի էր ՚ի գո-
րովոյ Ափրինճեր. կասկածէր թէ գուցէ
զգացեալ զայն դստերն իւրովեսցի. սահ-
ալէր զսլատանին հնաղանդել հօր իւրում,
և կարճել զայցելութիւն իւր. այլ նա պէս-
ալէս պատճառանօք ջանայր երկարաձգել
զայն: Յայնմ վայրի յարեաւ մըրիկն այն, և
զողային ծնօղք օրիորդին վասն դստերն
իւրեանց, և գոչէր մայր նորա տառապելեալ.

Ո՞հ, ո՞հ, զի՞նչ արդ գստերն իմում, Ելիաս-
բեթին իմում, հասցէ պատահար : Իսկ
Սփրինճեր լուռ և եթ առեալ զցուալ իւր՝ ե-
քաց զդուռնն, գնալ 'ի խնդիր գստերն.
փութացաւ և Ամոլոֆ զհետ նորա : Բռնա-
նայր մրրիկն, խորտակեին շուրջանակի
մայրիք, վտանգ էր մահու յանտառին:
Սփրինճեր ցուցանէր զայն պատանւոյն՝
առ 'ի խափանել զնա 'ի գալոյ ընդ իւր,
այլ ոչ ինչ զօրէր. տեսանէր և նա զվը-
տանգն, այլ քամահէր զնովաւ, բարեբախ-
տութիւն անձին համարէր զիմազրաւել
վտանգին վասն օրիորդին:

Հասին 'ի միասին յանտառ անդր, և ասէ
Ամոլոֆ. Յո՞ երթամք : Սփրինճեր ասէ. 'ի
դաշտավայրն, ուր հանապազօր գնայ Ելի-
սաբեթ. յաղօթանոց անդր թերեւս իցէ ա-
պաստանեալ: Ոչ ևս ինչ յաւելուն, գնան
անմռունչ, տագնապ նոյն 'ի սրտի երկա-
քանչիւր. ոչ մի ինչ հարցուած առնեն ի-
րերաց, զիմեն անվեհեր, խոնարհին խու-
սեն 'ի տարափոյ ոստոց բեկտելոց, 'ի ձիւ-
նաբերաց ընդ աչս իւրեանց հողմավարե-
լոց, 'ի շանթից ժայռից զդլխով իւրեանց
շուրջ փոթորկելոց: Հասին 'ի դաշտավայրն,
ուր թէպէտ զերծք 'ի վտանգէ էին մայ-
րեաց խորտակելոց, այլ անպատսպարք 'ի
բացավայրին՝ 'ի ստահակ հողմոց մրրկաց
մղեալ տապալէին. և բաղում ճգամբք մա-
տեան 'ի փոքրիկ ազգթանոցն փայտա-
կերտ, ուր յուսային զտանել զօրիորդն

ապաստանեալ։ Այլ 'ի տեսանել զխարխուլ ապաստանին տախտակամած յարկին ահեղ ճարճատմամբ սպառնումն կործանման, զարհուրեալ կացին՝ զմտաւ ածեալ զվտանգ օրիորդին 'ի ներքս անդ եթէ էր։ Յայնժամ Սմոլոֆ զարմանահրաշ արիութեամբ, յառաջ քան զհայր օրիորդին խրախուսեալ եմուտ ՚ի ներքս, և թուէր նմա երազել. զի ետես անդ զօրիորդն, ոչ թէ կիսամեռ զզողի հարեալ, այլ առ սեղանով անկեալ քաղցր 'ի քուն։ Կարկեալ եկաց անճառ հիացմամբ, և նշանացի ցուցանէր զայն Սփրինճերի. և երկաքանչիւր նուվին զգացմամբ 'ի ծունդ անկան առ զուգահրեշտակ օրիորդաւն, որ Բարձրելոյն հովանաւորութեամբ ննջէր անդանօր։ Հայր նորա 'ի զէմս դստերն յառեալ և զմայլեալ, իսկ պատանին պատկառանօք զաչս 'ի վայր արկեալ չիշխէր իմն հայել յայնքան անմեղութիւն։ Զարթեաւ օրիորդն, ծանեաւ զհայր իւր, և զիմեալ 'ի զիրկս նորա, ասէ. Ո՛հ, զիտէի զի հոգացիր վասն իմ։ Իսկ հայրն փարեալ զնովաւ, ասէ. Ե՛հ, զուստր, յորալիսի հոգս արկեր զմեզ, զմայր քո տառապեալ և զիս։ Դուսարն ասէ. 'Ներեա ինձ հայր, զի եղէ նմա առիթ արտասուաց։ Երթիցուք սրբել զարտասուս նօրա։ Եւ 'ի յառնելն տեսեալ զարտանին, բերկրալից զարմացմամբ ասէ. Երանի է ինձ, զի պաշտպանք իմ հսկեն զինե, Աստուած իմ յերկնից, հայր իմ և զու

յերկրի : Խանդաղատեցաւ պատանին ընդ
բանս նորա մինչեւ յարտասուս . իսկ հայրն
տաէ . Եւ որպէս կամիս առ մայր քո գնալ .
իցէ քեզ հնար դառնալ արդ՝ ՚ի տուն , օ-
րիորդ տկար , խիզախել՝ ՚ի մարտ ընդդէմ
մրրկին՝ յորմէ սքանչելեօք Ամոլով և ես
մաղապուր զերծաք : Դուստրն ասէ . Թող
ցուցից զփորձ զօրութեան իմոյ . առաւելէ
յիս ոյժ քան զոր կարծես . և ուրախ եմ,
հայր , զի տեսցես քեզէն որչափ ինչ կա-
րեմս առնել մօր իմումառ՝ ՚ի սփոփումն : Եւ
յասելն դայս՝ ցոլանայր յաշաց օրիորդին ա-
րիութիւն այնալիսի , որ տայր հօր նորա՝ ՚ի
միտ առնուլ զհաստատութիւն դստերն՝ ՚ի
խորհուրդս իւր : Եւ գնայր նա յեց՝ ՚ի թես
հօրն և պատանւոյն , որք օգնէին նմա՝ պա-
տըսպարեալ զդլուխ նորա լայն լոդկօքն :
Քաղցր թուէին անդ պատանւոյն որոտընդ-
ուստ մրրկաց արհասիրք , մասուցանելով
նմա պատեհ օգնելոյ օրիորդին . յաշս զնէր
զվտանդ կենաց զոր ցանկայր բիւրիցս՝ ՚ի վե-
րայ նորա փոխանակել . խիթայր և եթ զկե-
նաց նորա , թէպէտ և վստահ էր՝ ՚ի փրկել
զնա , և յեռանդն սրտին ճայնատուր լի-
ներ ամսլրուղաց առ հասարակ ընդդէմ
իւր :

Դադարեցին յայնժամ մրրիկք սպառ-
նալիցք , պարզեցան երկինք , ոչ ևս սու-
րային ընդ այն ամսլք ահարկուք , անկան
հողմք և լռեցին , և սիրտ Ավրինձերի
զուարթացաւ . իսկ պատանին հառաչէր ,

զի եթող օրիորդն զբազուկ նորա և գնայր
ինքնին, առ ՚ի ցուցանել հօր իւրում զյժ
իւր՝ յոր վստահէրն, և զկար զնալոյ ՚ի խըն-
դիր չնորհի աղասութեան նորա մինչեւ ՚ի
ծագս երկրի եթէ հարկ լինէր։ Եւ ՚ի հա-
սանել նոցա ողջամբ ՚ի տուն, Փեգորա ե-
րեցունցն ևս զիրկս արկեալ՝ օրհնէր զԱս-
տուած, և զզստրիկն սփոփէր չհոգալ զար-
տասուացն՝ զոր եհեղ վասն նորա։ Յամա-
քեցոյց զկօշիկս նորա սկիւզենիս, ՚ի բաց
էառ ՚ի նմանէ զմաշկեակն, և սանզրեաց
զվարսս նորա երկայնահերս։

Այսոքիկ մայրազութ խնամք, յորս հա-
նապազօր վայելէր Ելիսաբեթ, և որովք
օրբստօրէ սիրտ նորա յաւելցըր ՚ի սէր, գո-
րովիէին զսիրտ սպատանւոյն։ և չկարէր սի-
րել զգուստրն՝ առանց սիրելը և զմայր
նորա, և ՚ի սպակել իւր ընդ օրիորդին՝
բարեբախտութեան իւրոյ լրումն համարէր
ունել ՚ի մայր իւր զՓեղորա։

Ի փարատել ՚ի սպառ մրրկին և ՚ի սլայ-
ծառանալ երկնից՝ և տիւն տարաժամէր։
Յայնժամ առեալ Ափրինճերի զձեռանէ
սպատանւոյն, տրտմութեամբ և փղըձկրմամք
՚ի հրաժեշտի կացուցանէր զնա։ Գիտաց Ե-
լիսաբեթ՝ զի այն վերջին գալուստ էր սպա-
տանւոյն, և խռովեալ և կարմրերիմնեալ՝
տաէ. Ոչ ևս ուրեմն զայցես այսր։ Որում
սպատանին աղդու իմն ետ սպատախտանի.
Յորչափ աղաս եմ, և զուք աստ իցէք, ոչ
մեկնեցայց ՚ի Այխմբայ, եկից յանապատ

այսր, եկից 'ի զաշտ և յեղերս գետոյդ, եկից ամենայն ուրեք՝ ուր մարթ իցէ ինձ զքեղ տեսանել։ Եւ յասելն զայս՝ կառեաւ, զարմացեալ ընդ կիրս իւր և ընդ բանս. բայց օրիորդն թէպէտե զօրութեան բանից նորա ոչ 'ի վերայ եկաց, սակայն ոչ ինչ երկբայէր առնուլ պարապ յայտնելոյ նմա զխորհուրդ իւր, և այնու վստահութեամբ ամօքէր տրտմութիւն իւր ընդ մեկնել նորա։

Ի հասանել կիւրակէի աւուր՝ Ելիսարեթ և մայր նորա վաղ քաջ ընդ առաւօտն սպատրաստեցան զնալ 'ի Այիմքա։ Ափրինճեր տրտմախառն ասէր նոցա ողջամբ զնալ, զի յորմէ հետէ կային յաքսոր՝ չէր երբէք լեալ նմա մնալ միայնակ 'ի հիւզի անդ. այլ զիտաց ծածկել 'ի նոցանէ զյոյզս սրտին, և օրհնեաց զնոսա խաղաղութեամբ, և յանձն արար 'ի խնամս Աստուծոյ՝ առ որ զնայինն աղօթել։ Զուարթ էր տիւն, և համառօտ թուէր նոցա ուզին. աղջիկն զեղջուկ սկիւթացի առաջնորդէր նոցա ընդ անտառն մինչե 'ի Այիմքա։ Եւ 'ի մտանել նոցա յեկեղեցին՝ աչք ամենեցուն 'ի նոսա հայէին, այլ նորա 'ի Տէր միայն. սիրտ երկաքանչիւրոցն նովին աստուածսիւրութեամբ վառեալ, խոնարհեալ երկաքանչիւր զգլուխս իւրեանց, անցին մերձ 'ի սուրբ սեղանն. և ծունր եղեալ, անկեալ 'ի վերաց երեսաց իւրեանց, զնոյն աղօթս վասն նոյն նորին իրաց մատուցանէին. եր-

կարագոյնս օրիորդն քան զմայր իւր աղօթէր, և երկաքանչիւր եղեն լսելի:

Ի ժամ սրբոյ պատարագին՝ քօղ զերեսօք այնպէս կայր օրիորդն, յԱստուած միայն և 'ի հայր իւր զմիտս սեեռեալ. իսկ յորմէ յուսայրն օգնութիւն՝ և ոչ 'ի միտս իւր անկանէր: Օրհներգութիւնք Աստուծոյ քաղցրաձայնեալք 'ի բեմին՝ խոր 'ի սիրտ իւր տաղաւորէին, զի չէր նորա հանգոյն ինչ լուեալ. թուէր նմա տեսանել զերկինս բացեալ, և հրեշտակի Աստուծոյ իջանել յերկնից յառաջնորդութիւն իւր. և տեսեաց տեսիլս այս մինչեւ 'ի վախճան երգոցն: Եւ առա ՚ի վեր առեալ օրիորդին զգլուխ իւր, ետես անդէն զալատանին Ամոլոֆ, զի կայր մօտ՝ յեց 'ի մի 'ի կամարակալ սեանց, ակնկառոյց յինքն զորովով. և թուէր նմա պատանին նոյն ընդ հրեշտակին, որ գայրն երկնից առաջնորդել 'ի խնդիր ազատութեան հօր իւրոյ. և յակնարկելն 'ի նազուարթագին՝ խանդաղատեցաւ պատանին ընդ այնպիսի հայեցուած նորա, որ ըստ սրտի իւրում էր:

Եւ յելանել նոցա յեկեղեցւոյ անտի՝ հրաւիրեաց զՓեղորա 'ի բալխիր իւր, ածել զնոսա մինչեւ 'ի մուտս անտառին: Վտաղիւր ընկալաւ Փեղորա զհրաւէրն, զի վաղագոյն այնուիկ հասանէր առ Ափրինձեր. բայց Ելիսաբեթ տրտմեցաւ ընդ այն, զի յուսայր 'ի զնալն հետի՝ դատանել պարապ խօսելոյ առանձինն ընդ պատանւոյն:

զոր չկարէր 'ի բալխրի անդ։ Զի զիա՞րդ
մարթէր 'ի վեր հանել նմա զխորհուրդ իւր
առաջի մօր իւրոյ, որ մերժէր արդեօք զայն
սոսկալով, և արդելոյր պատանւոյն բացէ
'ի բաց չօգնել նմա. բայց և 'ի լոելն՝ կո-
րուսանէր զայն պատեհ, թերեւս անդարձ,
յայտնելոյ պատանւոյն զխորհուրդ իւր։
Յայսալիսի յոյզս սրտի և 'ի վարանս՝ հասին
'ի մուտսա անտառին, ուր պատանին ինքնին
յայտ արար զի չէր նմա օրէն անդր ևս ընդ
նոսա ուղեկցել. այլ և ոչ կարացեալ մեկ-
նել իսկոյն յօրիորդէն, մղեաց յառաջ
զբալխիրն մինչեւ յեզերս լճին, ուր հարկ
էր զկայ առնուլ։ Էջ նախ Փեղորա, և աջ
տուեալ պատանւոյն՝ ասէ. Ո՞չ զայցես եր-
բէք երբէք այսր 'ի ճեմ։ Իսկ օրիորդն, որ
զհետ մօրն իջանէր, յաւել 'ի մրմունջ. Մի
այսր, այլ 'ի դաշտ անդր վաղիւ յաղօթա-
րանն փոքրիկ։ Որովզհօրէ իւրմէ իմանայր
խօսել, այլ ժամադիր լինէր պատանւոյն
յանդէտս, և յընդունել նորա զուարթու-
թեամբ զժամադրութիւնն, փայլէր և յաչս
իւր քաղցր զուարթութիւն։

Դիմեաց նա ընդ մօրն 'ի հիւղ անդր, և
պատանին դարձաւ միայնակ ընդ անտառն՝
ընկղմեալ 'ի ցնորս բերկրալիս. զի զիա՞րդ
մարթէր նմա երկմաել ընդ սէր օրիորդին՝
յետ այնպիսի բանից նորա, և զիա՞րդ հնար
էր նմա չբերկրիլ ընդ բախտ իւր, ճանա-
չելով որպիսի ոք էր օրիորդն։ Իսկ Ելիսա-
բեթ ոչ ևս վարանեալ մտայոյզ, այլ ամե-

նայն վստահութեամբ անմեղութեան գը-
նայր 'ի վաղիւ անդր 'ի մատուռն անդր
փայտակերտ, արագ և թեթև զառաջին
ոտնփոխն առնելով յաղատութիւն հօր իւ-
րոյ : Ափոէին 'ի գաշտ անդր ձիւնախաղաղ՝
ճառագայթք արեգական, և սառամանիք
կախեալք զծառոց՝ ցոլացուցանէին խիտընդ
խիտ զպատկեր նորին բազմազիմի 'ի յոդ-
նազան հայելիս . այլ ճաճանչն այն պայծառ
և աստուածագործ չեր այնպէս վճիտ և
հրաշալի՝ որպիսի էր սիրտ օրիորդին : Եմուտ
նա 'ի ներքս 'ի մատուռն, ուր չեւ ևս հա-
սեալ էր պատանին . յամեցումն նորա
խոռվեցոյց զօրիորդն, և նուազեցան աչք
նորա ոչ յունայնութենէ և 'ի սիրոյ, զի
տկարութեան և կրից չգոյր 'ի նմա տեղի,
այլ խիթայր 'ի յեղակարծ ինչ պատահա-
րաց զնա խափանեալ : Եւ 'ի յոյզս սրտին
մինչդեռ ազօթէր առ Աստուած զերծանել
'ի վարանացն, եհաս պատանին, և զարմա-
նացր ընդ կանխել նորա անդր . զի որչափ
և փութացուցանէ սէր 'ի գնացս, սակայն
Ելիսաբեթ եցոյց զի առաւել ևս քան զսէր
ճեսլէ առաքինութիւն :

Ընդ տեսանել նորա զպատանին՝ ամ-
բարձ զաշս իւր և զձեռս 'ի վեր, և դար-
ձեալ 'ի նա վայելուչ իմն և գորովական աշ-
խուժիւ՝ ասէ . Քանի ըղձիւք մնայի քեզ,
սիրելիդ իմ : Հայեցուած նորա և բան, ժա-
մագրութիւն և կանխումն 'ի ժամագրեալն
վայր, ոչ թողուին տեղի երկբայելոյ պա-

տանւոյն ընդ սէր օրիորդին. և 'ի կամելն
յայտ առնել նմա զսէր իւր փոխագարձ,
կանխեալ օրիորդին՝ ասէ. լուր ինձ սիրե-
լի, օգնականութեան քում կարօտիմ առ
'ի փրկել զհայր իմ. խոստացիր օգնել ինձ:
Եփոթեցան խորհուրդք պատանւոյն. գու-
շակէր զմերժումն իւր, սակայն չգագարէր
'ի սիրոյ նորա: Եղ ծունր — համարէր օ-
րիորդն անկանել նմա առաջի Աստուծոյ —
այլ նա օրիորդին խոստանայր օգնել: Յայն-
ժամ յաւել օրիորդն. Յորմէ հեաէ ճանա-
չեմ զանձն, 'ի ծնօղս իմ են խորհուրդք իմ,
և 'ի սէր նոցա իղձք իմ. բարեկենդանու-
թիւն նոցա է ինձ 'ի կեանս: Յօգնութիւն
նոցա կոչէ զիս Տէր, և զքեզ օգնական ինձ
'ի կատարումն կոչման իմոյ: Կամիմ գնալ 'ի
Պետրոպոլիս 'ի խնդիր չնորհի աղատու-
թեան հօր իմոյ: Զարմացաւ եկաց պատա-
նին. և 'ի կամելն զդէմ ունել, ած թա-
փեաց օրիորդն. Զկարեմ ասել յորմէ հե-
տէ յածի խորհուրդս այս 'ի մտի իմում.
Թուի ինձ ընկալեալ զայն ընդ կեանս, ար-
բեալ ընդ կաթին. չյիշեմ այլ ինչ կան-
խագոյն քան զայս լեալ 'ի միտս իմ. ան-
պուրծ 'ի յուշոյ է խորհուրդս այս ինձ,
սովին ննջեմ, սովին զարթնում, սովաւ առ-
նում և տամ չունչ. սա միշտ և 'ի տեսա-
նել իմում զքեզ՝ զմիտս իմ զբաւէ, և յայս
խկ եկի այսր: Աս արիացուցանէ զիս յաչս
զնել զվաստակ և զտառապանս, զմեր-
ժումն և զմահ. սա անհնաղանդ խկ ծնո-

զաց իմոց կացուացէ զիս, եթէ երբէք հա-
կառակ կացցեն երթին իմում։ Տեսանես,
սիրելի, զի 'ի զուր է զգէմ ունել. անդըր-
դուելի է հաստատութիւն մոտաց այսպիսի։

Ի լուր այսոցիկ՝ հաստաւ ամենայն յոյս սի-
րատարփ սրտի պատանւոյն. յասլուչ հա-
րաւ ընդ ազնուախոհ միտս և ընդ արիու-
թիւն օրիորդին, և քաղցր քան զսիրոյ հե-
ղեալ արտասուս, ասէ. Ո՛հ, երանի ինձ, և
բիւր երանի, զի ընտրես դու զիս խորհըր-
դակից և օգնական քեզ 'ի խորհուրդ այդ-
պիսի. այլ թերես չգիտիցես զարգելս... ի
վերայ էած օրիորդն. Երկու արգելք են՝ որ
կացուցանեն զիս 'ի տագնապի. դու միայն
կարող ես բառնալ զայնոսիկ 'ի բաց։ Խսկ
պատանին, որ ցանկայր ծառայել նմա,
ասէ. Խօսեաց և ասա. որ ինչ և խնդրի-
ցես՝ սակաւ է քան դիղձս իմ հաճելոյ ըզ-
քեզ։ Յրիորդն ասէ. Ահա արգելքն. մի՛ զի
անծանօթ է ինձ ուզին, ընդ որ պարտ է
զնալ. և միւս ևս՝ զի կասկածեմ թէ զուցէ
փախուստ իմ ածցէ հօր իմում վնաս։ Ուսո
ինձ ապա զգէմ ուզւոյս, և զքաղաքս՝ ընդ
որս պարտ է ինձ անցանել, զի ջեանս ասալն-
ջականս հիրիս, և զհնարս հասուցանելոյ
անվրէալ առ ինքնակալն զաղերս իմ. այլ ա-
ռաւել քան զամենայն լեր ինձ երաշխաւոր,
զի հայր քո ոչ պատուհանացէ զիմս վասն
փախստեան իմոյ։ Պատանին ասէ. Այլ զի-
տիցես, քանի զայրացեալ է ինքնակալն ընդ
հօր քում, զիտիցես զի ոխերիմ թշնամի իւր

զնա համարի : Օրիորդն ասէ . Եւ զո՞ր եղեռն
գործեալ է նորա . չգիտեմ, ոչ զանուն նորա
և ոչ զհայրենիս, այլ զիտեմ և եթ հաւաս-
տեաւ, զի անպարտ է նա : Պատանին ասէ .
Եւ ո՞րպէս, չղիտիցես զաստիճան և զմե-
ծարանաց անուն հօր քո : Օրիորդն ասէ .
Բնաւ իսկ ոչ : Յայնժամ գոչեաց պատա-
նին . Յապուշ կրթիմ, անարատ 'ի հպար-
տութենէ և 'ի մնափառութենէ է սէր քոյին.
Քո չիք ծանուցեալ 'ի ծնօղս քո այլ ինչ
քան զհայր քան զմայր . այլ զի՞նչ է մեծա-
տոհմութիւն առաջի մեծութեան հոգւոյ
քո, և զի՞նչ անուանք մեծարանաց առաջի
մեծախոհութեան քո... : Կարճեաց զբանս
նորա առաքինարար օրիորդն, և ասէ . Կաց
մնա, այդորիկ՝ գաղտնիք հօր իմոյ են, 'ինը-
մանէ պարտ է ինձ ուսանել զայդոսիկ : Հիա-
ցաւ պատանին, և ասէր ցանձն իւր . Բարւոք
խորհի օրիորդն չհամարել բարի՝ քան զոր
լաւագոյն ինչ կարէ գործել : Եւ յառաջ
մատուցեալ օրիորդին զբանսն, յաւել . Իսկ
երբ ուսուսցես ինձ զկարեորս ուղեորու-
թեան իմոյ : Պատանին ասէ . Աւասիկ կամ .
այլ կարիցես գնալ հետի մենաւոր անօդ-
նական ընդ երեք հաղար հինդ հարիւր մը-
ղոնս, որ 'ի միջի կան ընդ իարիմ և ընդ
ինկրի : Յայնժամ օրիորդն անկեալ առաջի
սեղանոյն, ասէ . Որ առաքէն զիս յօդնու-
թիւն ծնողաց իմոց, ոչ թողցէ զիս անօդ-
նական : Առ որ լոեալ վայրիկ մի պատա-
նին, և ապա ասէ արտասուօք . Անհնար

թուի նախ քան զգալնայնոց զուարթազին աւուրս զնալ քեզ. զի անզնալի է արդ ուղին, բալմիրք իսկ դադարեն արդ. ողոզեսցեն զքեզ խոնաւուաք անտառաց Ախպերիոյ: Ողջամբ մնա, Ելիսաբեթ, եկից յետ աւուրց ասել որ ինչ կարացից խորհել զառաջարկութենէդ. ապշեալ եմ ընդայդ, չկարեմ զմտաւ ինչ արդ ածել զայդմանէ, Գառնամ 'ի Թուլոլսք խօսել ընդհօր իմում, այր լաւ է նա. առաւել յոյժ լինէր աստ տառապելոց բազմութիւն, եթէ չէր նա աստ իշխան. առաքինութիւնք վաեմականք սիրելի են նմա. այլ չէ նա ազատ օդնելոյ քեզ. պարտք իւր խափանեն զնա. այլ երգնում քեզ, զի ոչ պատուհասեսցէ նա զհայր, որոյ ածեալ է դուստր այսպիսի առաքինի 'ի լոյս:

Ո՛հ, պարծանս իսկ համարեսցի նա անձին կոչել զքեզ իւր դուստր. ներեա ինձ Ելիսաբեթ, ակամայ անձին իմոյ սիրտ իմ բարբառի. դիտեմ զի չիք տեղի 'ի քումզ սրտի այլոց ինչ կրից, բաց 'ի միայնոյ՝ որ զայն գրաւէ: Անակնկալ է ինձ. այլ եթէ հասցէ օր, յորում ծնողք քո դարձ 'ի հայրենիս իւրեանց արարեալ լիցին բարեբաստք, և դու հանդիցես, յիշեսջիր յայնժամ զի Ամոլոֆ ետես յանապատի աստ զքեզ և սիրեաց, և ընտրելի իսկ էր նմա կալ աստ ընդ քեզ կենակից ազքատ և անցայտ՝ քան ժառանգել զփառս աշխարհի... Եւ ոչ կարաց կատարել զբանս իւր,

Հեղձամզձուկ լեալ յարտասուաց . և ինքն ընդ ինքն զարմանացր առ նորանշան գորովոյ սրտին , զի չե էր նորա կրեալ 'ի սրտի նուազումն այնպիսի , քանզի չե էր ումեք տարփացեալ :

Կարկեալ եկաց Ելիսաբեթ , և չկօրէր հասու լինել բանից պատանւոյն , զի բաց 'ի ծնողասէր գորովոյ՝ այլ ինչ սէր անծանօթ էր նմա : Թերես ոչ այնչափ օտար 'ի լսելիս իւր թուէին բանք պատանւոյն , եթէ գոյր տեղի այնպիսեաց բանից 'ի սրտի իւրում . և եթէ էին ծնողք իւր 'ի բարեբախտութիւն . այլ ցորչափ 'ի թշուառութեան կային , չէր մարթ նմա վերջանալ յորդիական սիրոյ . իսկ երկուց սիրելութեանց՝ սիրտ մարդկեղէն թէպէտ լայնատարր , ոչ է բաւական : Ելիսաբեթի չէր կենցաղավարեալ յաշխարհի . անծանօթ էին նմա սովորոյթք և պատշաճք կենակցութեան . սակայն պատկառանք իմն ընդարոյս՝ յորդոր առաքինութեան ազգէին նմա , զի չէր պարտ օրիորդի յամել միայնակ ընդ պատանւոյ 'ի լսել այնպիսի բանս 'ի բերանոյ նորա : Դիմեաց նա յելս կոյս մատրանն . և 'ի զգալ պատանւոյն զմիտս նորա , ասէ . Վիշտ թերես ետուն քեզ բանք իմ , Ելիսաբեթ . այլ , ո՞հ , երդուեալ յայն՝ որ կայ 'ի վերայ սրբոյ սեղանոյս , զի ոչ ինչ նուազ 'ի սիրոյ՝ պատկառանս կրեմ 'ի սրտի . զիտէ

Տէր, զի թէ հրամայես՝ աւասիկ կամ՝ ի լոել և տալ քեզ զկեանս իմ. և որպէս աստա կարիցեմ լինել վշտաց քեզ առիթ։ Յայնժամ օրիորդն ասէ քաղցրութեամբ. Ոչ առ վշտի գնամ՝ ի բաց. այլ զի զծնողաց իմոց եկի խօսել, և ծանեար զամենայն, չունիմ արդ այլ ինչ քեզ ասել, և դառնամ անդրէն։ Պատանին ասէ. Եւ կարի իսկ քաջ, օրիորդ աղնիւ, դարձ անդրէն՝ ի քո առաքինութիւն. գործակից ընդ քեզ ընկալ զիս՝ ի նոյն, արժանի զանձն իմ քեզ կացուցանել։ Այլ ինձ քաւ լիցի մասանալ զքեզ. չիք և չիք այլ իղձ՝ ի սրտի իմում, բայց՝ ի կատարումն առաքինութեան քո օգնական լինել։ Եւ խոստացաւ նմատալ՝ ի միւսումն կիւրակէի յեկեղեցոջ անդ՝ ի Սայիմքա՝ զամենայն կարեռը տեղեկութիւնս՝ ի կատարումն առաջարկեալ խորհրդոյն. և մեկնեցան՝ ի միմեանց։

Ի հասանել միաշաբաթի աւուրն՝ գնայր Ելիսաբեթ զուարթագին ընդ մօր իւրում՝ ի Սայիմքա, և մնայր անժոյժ գալստեան պատանւոյն անդր, առնուլ՝ ի նմանէ զլսուտացեալ տեղեկութիւնսն՝ ի դիւրութիւն ուղեռըրութեանն։ Բայց վախճան եղեւ որբոյ պատարագին, և չերեւէր նա՝ ի միջի՝ ի տագնաալ օրիորդին. և մինչզեռ մայր նորակայր յազօթս, եհարց նա պառաւոյ ումեմն՝ թէ էր յեկեղեցի անդր եկեալ պատանին Սմոլոֆ. և իբրեւ լուաւ զի չէր, և զի յերկուց աւուրց հետէ մեկնեալ գնա-

ցեալ էր նա 'ի Թուպոլսք, տրտմեցաւ յոյժ .
թուէր նմա սիրելագունի ըղձիցն իւրոց
խուսել յինքենէ 'ի պահու՝ յորում կար-
ծէրն պատահել այնմ: Խէթք և կասկա-
ծանք տազնապէին զնա . խորհէր 'ի մտի,
զի եթէ պատանւոյն մոռացեալ զիսոստումն
իւր՝ մեկնեալ էր 'ի Սայիմքայ, զիամրդ մար-
թէր նմա յիշել զայն 'ի Թուպոլսք . և ո՞ ապա
լինէր իւր օգնական: Խխորհուրդսյայսոսիկ
յուզէին զօրն զայն ցերեկ միտք իւր . և յե-
րեկոյին ընկճեալ 'ի տրտմութենէն , որ
այնչափ առաւել ծանր էր նմա՝ որչափ զի
միայնակ կրէր զայն ծածկելով 'ի ծնողաց
իւրոց , խոյս ետ վաղագոյն 'ի խղիկ իւր առ
'ի լինել գէթ ազատ 'ի բռնագատութենէ
ծածկելոյ զվարանս՝ որովք տառապէրն :

Փեգորա ընդ մեկնել նորա խոնարհեալ
յունկն Սփրինճերի , ասէ . Լուր զհոգմ՝ որ
նեղեն զիս . ոչ զգացեր զայլայլութիւն գըս-
տերն մերոյ , մտայոյզ կայ նա , շառագունի
'ի լուր անուան Սմոլոֆի , տրտմի 'ի չտե-
սանելն զնա . յառաւօտուս տատանեալ էին
միտք իւր յեկեղեցւոջ , աչք նորա շուրջ
յածէին , լսէի զի հարցանէր՝ թէ իցէ՞ Սմո-
լոֆ 'ի Սայիմքա . տեսի զնա գունատ մե-
ռելատիպ 'ի լուր մեկնելոյ պատանւոյն 'ի
Թուպոլսք : Յուշ լինին ինձ , իմս Սփրինճեր ,
աւուրքն՝ յորս հանգերծեալ էի լինել քո
հարսն երջանիկ . հանգոյն իմն և ես շառա-
գունէի 'ի լսելն զքէն , նոյնպէս և ես աշս
ածէի շուրջանակի 'ի խնդիր քո , և 'ի չտե-

սանելն զքեզ՝ արտասուէի։ Զնոյն նշանս
սիրոյ, որում՝ աւազը, զի չէ մարթ առնուլ
զկատարումն, չկարեմ առանց արտմու-
թեան նկատել յոգւոջ դստերն մերոյ։
Պատասխանի ետ Սփրինձեր արտմազին.
Յոյժ իսկ երջանիկ, երջանիկդ յանապատի
աստ, երջանիկդ յաքսորս։ Փեղորա ասէ.
Այո, երջանիկ իսկ եմ և յանապատի աստ
և յաքսորս, երջանիկ և ամենայն ուրեք՝
ուր է սէր։ Եւ զայս ասացեալ, գիրկս էարկ
նմա։ Եւ անդրէն ուշ՝ ի կուրծս անկեալ
հոգոցն՝ որ նեղէին զնա, յաւել. Կասկա-
ծեմ զի դստրիկն մեր սիրէ զպատանին
Սմոլով. և թէպէտ գեղանի է օրիորդն,
այլ զիաւելով պատանւոյն՝ զի դուսար էնա
աքսորականի հիբի, չհամարեսցի զնա իւր
արժանի. և դստրիկն իմ միամօր, արիւն
իմ, սնեալ իմովս կաթամբ, մահակից մօր
իւրոյ լիցի ընդ սիրոյն։ Ասէր և լայր. և ոչ
այր իւր, որ սփոփումն նորա էր յամենայն
՚ի վիշտս, կարէր միմիթարել զնա ՚ի տա-
ռապանաց անտի։ Մտայոյդ առ վայր մի կա-
ցեալ, և ալա ասէ. Մի երկնչիր, իմս Փե-
ղորա. դիտէի և ես զԵլիսաբեթ, և յառա-
ջագոյն իսկ քան զքեզ զզայի զյոյզս սրտի
նորա. բայց այլ ինչ արդեօք խորհուրդ
զրաւէ զմիտս նորա, և ոչ Սմոլով. ոչ ինչ
երկբայիմ, զի եթէ տալ զնա կամիցիմք պա-
տանւոյն՝ ոչ անարժան զնա իւր համարես-
ցի ևս և յանապատի աստ. և այս նորա
ազնուախոհութիւն արժանի կացուցանէ

զնա դստեր մերում, եթէ երբէք... այլ
չէ և չէ իսկ մարթ մնալ նմա 'ի սպառ յա-
նապատի աստ, ոչ մնասցէ նա անծանօթ,
ոչ մնասցէ թշուառ, յանհնարից է այդ .
այդքան առարինութիւն յերկրի երեսալ՝
աւետաւորէ զարդարութիւն երկնից , և
վաղ կամ անագան հասցէ արդարութիւն:

Յորմէ հետէ կային յաքսորս անդ, չէր
երբէք Սփրինճերի բարւոյ խմիք յուսա-
ցեալ. վասն որոյ 'ի բարեգուշակ բանից
նորա քաջալերեցաւ յոյժ ֆեղորա. և հան-
գեան խաղաղութեամբ: Զամիսս երկուս
յամենայն կիւրակէս գնացր Ելիսաբեթ 'ի
Սայիմքա՝ ակն ունելով գտանել անդ զալա-
տանին, այլ 'ի զուր . զի Ամոլով ոչ ևս երե-
ւէր, և լուր իսկ եղե զի մեկնեալ էր նա 'ի
Թոռլոլսքեայ: Յուսահատեալ այնուհետեւ
եղ 'ի մոտի զի պատանւոյն մոռացեալ էր
զինքն 'ի սպառ. և 'ի խորհելն 'ի նա՝ ստէպ
հարկանէր 'ի դառն արտասուս, որոց չէր
երբէք տուեալ պատճառս ամբիծ անմե-
զութիւն նորա: Զուարթագոյն 'ի վերջ կոյս
ապրիլի ծագէր արեգակն 'ի վերայ ձեանց,
և կզզիք լճին աւազուաք սկսանէին տռ
փոքր մի ծածկիլ գալարեօք . պարզէր կան-
կար զկոկոն իւր ստուար ձիւնաթոյր, և
ծաղկունք գունատք յօրինէին գորգ յան-
տառին: Թխատիս սարեկաց ամալ իջանէր
յանսաղարթ ոստս ծառոց, և նախերգակ
զձմերայնոյ զուարթացուցանէր տխուր լը-
ռութիւն. աստ և անդ զգետեզերբք թեա-

ծէր 'ի ճարակ բազեան պարսիկ սեւակտուց՝
վարդագոյն փետրովք ցցունազարդ, որ 'ի
ճայթիւն հրազինուց ճչէ սաստկաձայն.
ճախրէին կտցարք ազգիր ազգի 'ի շամբս
լճին, կէսք սեւատեսակ և գեղնակտուց,
իսկ այլք բարձրաքեացք՝ մանեակ փետրա-
զարդ յաքսն բերելով։ Եւ զի՞ երկարեմ.
դարուն կանխահաս դայր աւետաւոր 'ի
Ախպերիա, և տոյժ մեծ թուէր Ելիսաբեթի
կորուսանել զայն ամբարեսլատեհ յուղեռ-
ութիւն։ Եդ 'ի մաի քաջայանդուզն ա-
րիութեամբ կատարել զխորհուրդ իւր,
յերկնից ակն ունելով օգնականութեան։

Ի միում աւուրց ընդ առաւօտն, յոր-
ժամ վաստակէրն Ափրինճեր 'ի պարտի-
զին, բազմեալ անդ օրիորդն կայր լոփիկ 'ի
զնին։ Ափրինճերի չե էր յայտնեալ նմա ըզ-
գաղտնիս թշուառութեան իւրոյ, և ոչ ևս
դստերն հետազօտեալ զայն. զի ազնուա-
գութ իմն գորով ծնողասէր արգելուիննմա
չկամել գիտել զաղէտս ծնողաց իւրոց յա-
ռաջ քան զօր մեկնելոյ իւրոյ, չկամէր լսել
որ ինչ նոցա կորուսեալն էր, չե կարող
լսալ զնալ դարձուցանել 'ի նոսա զամե-
նայն։ Այնչե ցայնժամ յուսացեալ էր 'ի
խոստումն պատանւոյն, և յայն հաստա-
տեալ զելս իրացն խոհականութեամբ. այլ
'ի գերե ելանել յուսոյն, դէպք անակըն-
կալք հարկ առնէին նմա խօսել. բայց չե
խօսեցեալ, խորհէր զամենայն գժուարու-
թիւնս՝ զորս մարթէր ծնողացն 'ի զէմն ա-

ծել, և զամենայն արգելո՞ւ զորս ընդդէմ
իւր դնել. զիտէր իսկ զի ծանունք էին,
զորս և պատանւոյն առարկեալ էր իւր, և
գութ ծնողացն յաւելոյր և ևս ծանրացու-
ցանել զայնս: Զինչ իսկ կարէր պատաս-
խանել զարհուրելոյ նոցա և հրամանի և
աղաչանաց . զինչ, եթէ զամենայն իսկ
բերկրանս հայրենեաց չկամէին տարա-
գնացութեամբ իւրով: Մինչդեռ 'ի խոր-
հուրդս յայսոսիկ յուղէին միտք իւր, մո-
ռացեալ յանկարծ զի առ հօրն կայր՝ ան-
կեալ 'ի ծունը ողբովք, պաղատէր առ Տէր՝
տալ իւր բան 'ի բերան 'ի հաւան ածելոյ
զծնօղս իւր: Դարձաւ հայրն 'ի լուր ողբոց
նորա, զիմեաց առ նա, և անկեալ զպա-
րանոցաւ նորա՝ ասէ. Զի է քեզ դուստր
իմ, զի խնդրես, հիմ տառապիս, Եկ 'ի
զիրկս հօր քո արտասուեա: Օրիորդն ասէ.
Հայր իմ, մի արգելուր զիս, զիտես զի կա-
միմ երթալ, թող ինձ զի երթայց. սիրտ
իմ վկայէ՝ զի կոչէ զիս Տէր: Եւ մինչդեռ
բանքն 'ի բերան նորա կային, եհաս աղ-
ջիկն սկիւթացի՝ ձայնելով. Ահա Սմոլով,
ահա Սմոլով: Զայն ցնծութեան եբարձ Ե-
լիսաբեթ, և զերկոսին ձեռս հօրն առ սըր-
տիւն կալեալ գրկասլինդ, ասէ. Տեսանես
հայր իմ, զի Տէր կոչէ զիս. նա առաքեաց
զպատանին՝ բանալ առաջի իմ ճանապարհ,
ոչ ևս է ինձ խափան, խորտակեսցէ դուս-
տըր քոյին զկապանս քո: Եւ ոչ մնացեալ
պատասխանւոյ, զիմեաց ընդ առաջ պա-

տանւոյն . և հանդիպեալ մօրիւրում՝ գիրկս
արկ նմա և ասէ . Ե՛կ մայր իմ , աստ է Ամո-
լով : Եւ մտեալ հանդերձ մարբն ՚ի հիւղ
անզր , գտանեն այր յիսնամեայ ՚ի գրատ
արքունի , շուրջ պատեալ ՚ի սպասաւորաց ,
և հիացեալ կան : Կրկնէ աղջիկն սկիւթա-
ցի . Ահա Ամոլով քաղաքապետն թուպոլս-
քեայ : Ելիսաբեթի ամենայն յոյս անդրէն
կորուսեալ , գոյն երեսաց նորա հատաւ ,
աչք իւր լցան արտասուօք . և մօրն տեսա-
նելով զայն , անց եկաց առաջի գստերն՝
ծածկել զաղմուկ սրտի նորա , և ցանկայր
փոխանակել զկեանս իւր առ ՚ի զերծուցա-
նել զնա ՚ի գառնաղէտ կրից անտի , յորմէ
համարէր զնա ըմբռնեալ :

Քաղաքապետն թուպոլսքեայ ՚ի բաց ա-
րար զսպասաւորս իւր , և մնացեալ առան-
ձին ընդ աքսորեալս՝ գարձաւ ՚ի Ափրինձեր ,
և ասէ . Յորմէ հետէ ուռսական պետու-
թեան հաճոյ թուեցաւ տարագրել զքեզ
այսր , չև էր իմ եկեալ այց առնել ըզ-
կողմամբքս . քաղցր է ինձ արդ զպարտո
իմ զայս կատարել , որով կարեմս յայտ
առնել զկարեկցութիւն իմ ընդ աղէտս մե-
ծարոյ աքսորականիդ . այլ վիշտ է ինձ զի
նոյն պարտք խափանեն զիս յօդնելոյ և ՚ի
պաշտպանելոյ քեզ : Կարճեաց Ափրինձեր
զբանս նորա , և ցրտաքար ասէ . Զիք իմ
ակնկալութիւն օգնականութեան ՚ի մարդ-
կանէ , չմնամ ՚ի նոցանէ գթութեան , չյու-
սամ իրաւանց յարդարութենէ նոցա . եր-

ջանիկ՝ ի թշուառութեան, որ հեռի ՚ի նուցանէ զիս կացուցանէ, կեցից անտրտունջ յանապատի աստ: Քաղաքապետն ՚ի գութ շարժեալ, ասէ. Չար է, ո՞չ քարեկամ, և կարի իսկ չար կեալ քեզ տարագիր ՚ի հայրենեաց: Սփրինճեր ասէ. Այլ չար ես այն է մեռանել հեռի ՚ի հայրենեաց... Եւ ոչ կատարեաց դբան իւր, զի և ոչ անթաց աչօք կարէր զայն կատարել, և ոչ ՚ի վայր քան դաղէտսն կամէր երեել վեհազնն չարաբաստիկ: Ելիսաբեթ յայնմ վայրի յետկոյս մօրն թագուցեալ, դիտէր երկիւղիւ ընդ ուս նորա զդէմս քաղաքապետին՝ թէ էր իւր վստահել ՚ի գութ նորին. որպէս երկչոտ աղաւնեակ յելս ՚ի բունոյ դիտէ ընդ սաղարթս՝ թէ խոստանայցեն օդք զտիւ զուարթ: Դիտէր և քաղաքապետն զօրիորդն, ծանուցեալ զնա ըստ նկարագրելոց յաճախս որդւոյ իւրոյ, զի նմա և եթ զայր նկարագիրն այն ՚ի ճահ, և ասէ ցնա. Դանաշէ զքեզ որդի իմ, և յիշէ զքեզ անմոռաց: Եւ Փեղորայ ՚ի վերայ ածեալ ասէ. Պատմեաց նա քեզ, տէր իմ, զի գուստը մեր նմա գտանի չնորհապարտ վասն կենաց հօր իւրոյ: Քաղաքապետն ասէ. Ոչ, տիկին. այլ ասաց՝ զի ինքն օրիորդն ցանկայ տալ զիւրն վասն ծնողաց իւրոց: Սփրինճեր ասէ. Այս, և տացէ իսկ. սէր նորա միայն մնայ մեզ բարի, զոր չկարեն յափշտակել ՚ի մէնջ մարդիկ: Յայնժամ քաղաքապետն փղձկեալ դարձոյց զաշս

իւր մեկուսի, և վայրիկ մի լուռ կացեալ,
ապա ասէ օրիորդն. Դստրիկ, յառաջքան
զամիսս երկու պատուէր յինքնակալէն
եհաս որդւոյ խմում՝ ի Սայխմքա, փութալ
՚ի բանակն՝ որ համախմբէր ՚ի Վիւոնիա.
հարկ եղեւ նմա կատարել անյապաղ զհրա-
մանն. և ՚ի մեկնել իւրում եթող զիր առ
խ՝ վասն քո, այլ չէր օրէն ՚ի ձեռն այլոց
յղել զայն առ քեզ. ինձ ևեթ մարթ էր մա-
տուցանել քեզ զայն. առ ընկալ: Եւ էառ
զայն օրիորդն պատկառանօք. և ՚ի զարմա-
նալ ծնողաց նորա ընդ այն, ասէ քաղա-
քապետն. Երանի ծնողաց, որոց դստեր
չիքթաքռւստինչ՝ ի նոցանէ՝ բաց ՚ի գաղտ-
նեաց սյսպիսեաց: Եւ կոչեցեալ՝ ի ներքս
զալասաւորս իւր, լու ՚ի լու նոցա ասէ
յհայր օրիորդին. Պատուէր ինքնակալին է
չմուծանել զոք այսր. այլ լուայ զի արք ո-
մանք առաքելականք չքաւորք ՚ի դառնալ
իւրեանց ՚ի ձենաստանէ՝ ընդ կողմանս ընդ-
սյսոսիկ հանդերձեալ են անցանել, ՚ի գալ
բաղխել նոցա զգուրս հիւզոյդ՝ հրաման է
ձեզ ընդունել զնոսա:

Զայս ասացեալ՝ մեկնեցաւ. իսկ օրիորդն
զաչս ՚ի վայր արկեալ հայէր ՚ի զիր անզր,
և չիշխէր բանալ զայն: Ասէ հայրն. Դուս-
տըր իմ, եթէ հրամանի մնաս մօր քո և ի-
մումս, տուեալ է քեզ, բաց զդա և ըն-
թերցիր: Յայնժամ դոզզոջելով ձեռինն ե-
լոյծ օրիորդն զկնիք գրոյն, և յընթեռնույն
զայն ՚ի մըմունջ արտասուք ցնծութեան և

Հառաջանք գոհութեան ընդհատէին ստէոլ
ղընթերցուածն, մինչև ոչ ևս կարացեալ
ժոյժ ունել անկաւ 'ի զիրկս ծնողացն, և
ասէ. Ժամ է արդ բարեպատեհ 'ի կատա-
րումն խորհրդոյս, աստուածախնամ տես-
չութիւն հորդէ ինձ ուղի աներկեան. օրհ-
նեն երկինք զուզզութիւն մտաց և որտի
իմոյ. ոչ հաճեսջիք և դուք ընդ այն, ծը-
նօղք իմ սիրելիք, ոչ օրհնեսջիք և դուք
զայն:

Սփրինձեր ուրախութեամբ լաէր զբանս
դստերն, 'ի միտ առեալ զզօրութիւն նոցա.
այլ Փեդորա անդէտ իրացն ասէ. Զի՞նչ
այդ խորհուրդ է քո, դուստր իմ, զի՞նչ է
'ի զրիդ: Եւ ձեռն ձգեալ կամէր առնուլ
զայն. այլ Ելիսաբեթ յետո ամփոփեալ
զայն՝ ասէ. Եերեա ինձ մայր իմ, զողումն
ունի զիս 'ի խօսել իմում ընդ քեզ զայս-
մանէ. Խիթամ զի ընկճեսցիս 'ի ցաւոց
յանկավածի. այդ միայն արգելու զիս,
յայդմանէ ևեթ ընկրկիմ. Թոյլ արա ինձ
ընդ հօր իմում միայնոյ խօսել, զի ոչ իրբե-
զնորայն պատրաստեալ է սիրտ քո 'ի լուր
բանիցս: Այլ հայրն ասէ. Մի, դուստր իմ,
մի առներ զայդ, մեկնել զմեզ 'ի միմեանց,
զոր աքսոր իսկ և աղէտք չկարացին. Եկ
իմս Փեդորա, Եկ մերձ առ իս. Եթէ չիցէ 'ի
քեզ զօրութիւն հանդուրժելոց 'ի լուր բա-
նիցն, մատուցից բովանդակ քեզ զիսն:
Իսկ Փեդորա տագնապեալ իբր ՚ի սպառ-
նալեաց շանթից՝ որ յորմէ ձեռանէ ճայթե-

լոցն էր անգիտանայր, ասէ ահ ընդ ահ։
Զինչ կամիցիս ասել, ո՛ Ստանիալաւ, ո՛չ
արիաբար ընդ քեզ կրեցի զարկածս ամե-
նայն։ Եւ ողջագուրեալ զնա և զգուստրն,
յաւել. Ոչ վերջացաց ՚ի կրելոց ընդ ձեզ
զամենացն ինչ յերեսաց հալածչաց։ Պա-
տասխանել կամէր Ելիսաբեթ, այլ չեթող
նմա մայր իւր՝ ասելով կողկողազին։ Խըն-
դրեա զկեանս իմ, այլ մի մեկնել քեզ յի-
նէն։ Ի բանից աստի զիտաց դուստրն՝ զի
ոչ ևս պէտք էին յայտնելոց ինչ մօրն, այլ
պարտ է հաւանեցուցանել և եթ զնա. վասն
որոյ արտասուօք և դողութեամբ այսչափ
ինչ առ մայր իւր ասէր հեկեկելով. Մայր
իմ, յերջանկութիւն հօր իմոյ եթէ խնդրէի
՚ի քէն զաւուրս քանի մի . . . Այլ մայրն տա-
ռապեալ արգել զբանս նորա, ասելով. Եւ
ոչ մի օր. ո՛հ, ատէր իմ, մի թողուր դմա
խնդրել զայն յինէն։ Այս բանք լքուցին
զԵլիսաբեթ, և ոչ ևս կարացեալ յառաջ
մատուցանել զբանսն վշտացուցիչս մօր իւ-
րոյ, ետ հօր իւրում լոելեայն զգիր քա-
ղաքապետին՝ նշանացի ակնարկեալ ըն-
թեռնուլ զայն։ Եւ նորա ողջագուրեալ
զՓեղորա, ասէ. Հանդիր դու անկասկած
՚ի սիրտ իմ, զի նեցուկս այս ոչ երբէք. քեզ
պակասեսցէ։ Եւ ապա ՚ի ձայն, զոր ընդ
վայր ջանայր ունել աննուազելի, ըն-
թերցաւ զգիրն զոր պատանւոյն Ամոլոֆի
էր զրեալ ՚ի թուլոլսքեայ երկամսեայ ա-
ւուրբք յառաջ, և պատճէն զրոյն էր այս.

«Մի՞ ՚ի ծանունց տրտմութեանց խմաց՝ ի մեկնել իմում՝ ՚ի Սայիմքայ, օրիորդ աղնիւ, այն խակ էր՝ զի չկարացի ծանուցանել քեզ զհարկն, որ ըստ խմոցս պարտուց բռնադատէր զիս հեռանալ ՚ի քէն։ Չկարեի, ոչ այց առնել քեզ, ոչ զրել առքեզ, և ոչ հարցուածոց քոց առնել պատաժանի՝ առանց անցանելոյ զպատուիրանաւ հօր խմոյ, և արկանելոյ զնա ՚ի վտանգ։ Աակայն թերես արարեալ խակ էր իմ զայն, եթէ ոչ զուզհակառակն տայիր ինձ օրինակ. ՚ի քէն զորդիական պարտս ուսեալ՝ չկարէի ըդկեանս հօր խմոյ վտանգել։ Այլ խոստովանիմ՝ զի չեն ինձ հաճոյ պարտք իմ այսոքիկ որպէս քոյքդ քեզ. և եկի ես այսր ՚ի թուղոլաք զայրացեալ։ Հայր իմ տայ ինձ պատուէր յինքնակալէն՝ զնալ ինձ հեռի աստի հազար փարսախ. այլ ոչ գիտես որ ինչ կրեմս ՚ի սրտի, և մի խակ արասցեն երկինք զիտել քեզ զայն. այլ արդարադատ են երկինք, և ոչ թողցեն զքեզ չարաբաստիկ։ Բացի հօր իմում զսիրտ իմ, ծանուցի նմա զքեզ, և ելաց ՚ի լուր առաջարկութեանքո. թուի ինձ զի կամիցի տեսանել զքեզ, և յայս խակ գալոց է յայսմ ամի այց առնել շուրջ դիաքիմաւ, և գտանել զհնարս հասուցանելոյ առ քեզ զայս զիր։ Խաղաղագոյն սրտիւ մեկնիմ, Ելիսաբեթ, թողեալ զքեզ ընդ պաշտպանութեամբ հօր խմոյ. այլ աղաչեմ զքեզ, մի քան զդարձ իմ կանխել զուղեորսութիւն

քո 'ի ձեռն նորա . յուսամ յառաջ քան
զամ մի դառնալ 'ի թուղոլսք, և ինքնին ածել
զքեզ 'ի Պետրովոլիս . ես յանդիման ա-
րարից զքեզ ինքնակալին, ես խնամեցից
զքեզ 'ի բաղում երկայն ուղեւորութեանդ :
Մի երկնչիր, ոչ ես խօսեցայց ընդ քեզ զսի-
րոյ, բարեկամ և թե եղէց քեզ, եղբայր
քո եղէց . ծառայեցից քեզ ամենայն եռան-
դեամբ սիրոյ, այլ երգնում չխօսել բայց
'ի բարբառ անմեղութեան, 'ի լեզու հրեշ-
տակաց, 'ի լեզու քոյին » :

Եւ 'ի ստորոտ գրոյն քաղաքապետն
ինքնին յաւելոյր այսպէս . « Մի, օրիորդ,
մի լիցի քեզ ընդ որդւոյ իմում ուղեւորել .
իբր ոչ եթէ կասկածեմ երբէք զհամես-
տութենէ նորա, այլ զի քոյդ լիցի զերծ
յամենայն կասկածանաց : Ի գնալ քում
ցուցանել արքունեաց Ուսւաստանի ա-
ռաքինութիւնս արժանավայելուչս պսակի,
մի լիցի տեղի տալ բանից 'թէ 'ի տարփա-
ւորէ քումմէ առաջնորդիս, և ստուերածս
ածել քումդ որդիական գորովոյ՝ քան զոր
չիք ումեք սէր գեղեցկագոյն յանձին քե-
րել : Ի քում յայզմ պայմանի՝ չիք ոք ան-
մեղութեանդ քո պաշտպան արժանաւոր,
բայց Աստուած և հայր քո . հայր քո չկարէ
գալ ընդ քեզ, այլ Աստուած ոչ թողցէ
զքեզ 'ի ձեռանէ : Կրօնք մատուսցեն քեզ
ջահ և նեցուկ, 'ի կրօնս լեր ապաստան .
զիտես իսկ քաջ ում թողի մտանել 'ի
խրճիթ քո : Իտալ իմում քեզ զգիրս զայս,

աւանդապահ զքեզ բախտին իմոյ կացուցանեմ. զի եթէ սա 'ի յայտ գայցէ, եթէ 'ի կործ իսկ ծանիցի՝ զի օգնեմ ելից քոց այտի, կորուստ անգարծ հասանէ ինձ. այլ անկասկած եմ զայսմանէ, գիտեմ յո՛վըստահիմս, և իմ իմիք իցէ ինձ մնալ 'ի զօրութենէ և յառաքինութենէ դստեր՝ որ դնէ զանձն 'ի վերայ հօր իւրոյ ։

Յընթեռնուլ Սփրինճերի զգիրս զայս զօրանայր տակաւ ձայն նորա, և խրախուսէր սիրտ նորա յերեսաց գերապանծ առաքինութեանց դստերն, և մեծարանաց ընծայելոց նմա։ Այլ մայր նորա ոչ այլ ինչ զմտաւ ածէր, բայց զմեկնել դստեր իւրոյ. գունատեալ, լքեալ, յառեալ անքթիթ 'ի դուստր իւր, և մերթ զաչս յերկինս 'ի վեր ամբարձեալ, չկարէր իսկ լալ։ Իսկ դուստրն ծունք առաջի նոցա եղեալ, ասէ. Թոյլ առողք ինձ, ծնօղք իմ, յայս ձեւ ցուցակի ընդ ձեզ բարբառել. զի զվերագոյնն ամենայն բարեբախտութեանց՝ խոնարհութեամբ արժան է հայցել։ Խշեմ ակն ունել դարձուցանելոյ 'ի ձեզ զազատութիւն ձեր, զերջանկութիւն և զհայրենիս. յամաց հետէ այս է՝ յոր բերի յոյս իմ քան զամենացն ինչ ինձ ցանկալի, զոր արդ ուրեմն մերծ հասեալ տեսանեմ. և ոչ թողուցուք ըմբռնել ինձ զայն։ Ո՛հ, եթէ առաւել քան զոր խնդրեմս 'ի ձէնջ կայցէ ինչ ցանկալի, մի լսէք ինձ, հաճոյ է և ինձ. այլ թէ չկայցէ… Այլ յասելն զայս 'ի փղձուկ և զգու-

զանի հարեալ, հեղձամղձուկ եղե ձայննուրա, և փարեալ զծնդովլք ծնողացն՝ հազիւ դրանս իւր կարաց կատարել: Հայր նորա ձեռս 'ի գլուխ դստերն եղեալ՝ կայր անբարբառ. իսկ մայրն գոչէր. Միայնակ, հեռի, անօդնական. մի և մի լիցի, չկարեմ թողուլ: Յաւել գուստրն կողկողագին. Յիս մայր իսմ, մի մերժեր զխնդրուած իմ. յանեկարծ զիտէիր յորմէ հետէ երկնեմ' իսրափ զխորհուրդս զայս, և քանի սիոնիանս անտի ընկալեալ է իմ. ընդ ներել տիոց ինձ հասու լինել աղեակց ձերոց՝ եղի 'ի մափ նուիրել զկեանս իմ առ 'ի հանել զձեզ յազատութիւն. երանի աւուրն՝ յորում խոսացայ օգնել հօր իմում. երանի յուսոյն որ զիսն քաջալերէր 'ի տեսիլ արտասուաց նորա: Ո՛հ, քանիցս անմուռնչ տառապանացդ ձերոց ականատես՝ ընկճեալ լինէի 'ի մահառիթ տրտմութենէ, եթէ չէր իմ կարացեալ ասել ցիս. Ես ինքն դարձուցից 'ի նոսա զկորուսեալն նսեհ, ընդ որ մորմոքին: Հայր իմ, մայր իմ, եթէ բառնայք յինէն զայս յոյս՝ բառնայք զկեանս իմ. 'ի խափանել իմում յառաջարկութենէ սստի՝ յոր ամենայն խորհուրդք իմ յանգին, ոչ ես պիտանի թուեսցին ինձ կեանք իմ, աւուրք իմ շիջցին նուազեալ: Ներեցէք ինձ, եթէ վշտացուցանեն զձեզ բանք իմ. կեցից արգեօք յարգելուլ ձեր զիս աստ, կեցից, ոչ մեռայց, և ոչ մահ իմ յաւելցէ ձեզ վիշտ. այլ թողէք ինձ լինել երջանիկ: Մի

համարիք անհնարին դխորհուրդ իմ, չէ և
չէ իսկ անհնարին. սիրտ իմ վկայէ զայս.
զօրեսցէ սա խնդրել զիրաւունս, ոչ պա-
կասեացին սմա բանքը ընդունելոյ ձեզ զայն.
ոչ զանգիտէ սա յիմեքէ, ոչ 'ի վաստակոց,
ոչ 'ի խափանաց, ոչ 'ի նախատանաց, ոչ
յարքունեաց, և ոչ յարքայից. այլ զան-
դիտէ ևեթ 'ի չկամելոյ ձերմէ: Աստանօր
կարձեալ Սփրինճերի զբանս նորա, ասէ.
թող, դուստր իմ, թող, խռովես զոգի իմ,
այլայլիմ. չէր իմ ցարդ ընկըրկեալ յառա-
քինական ինչ գործոյ, և ոչ քաջութեան
իմոյ սասանեալ յերեսաց առաքինութեան.
չկարծէի, դուստր իմ, դոլ տկար. այլ 'ի
քէն ուսանիմ զի եմ. մի լիցի, չկարեմ հա-
ւանել ընդ խորհուրդ քո: Եւ Փեղորաց 'ի
չհաւանելոյ առնն խրախոյս առեալ, կա-
լեալ զձեռանէ դստերն, ասէ. Լուր ինձ,
դուստր. եթէ տկար է հայր քո, թող զի
և մայր քո լիցի տկար. ներեա նմա թէ
չկարէ թողուլ քեզ կատարել զայդ ա-
ռաքինութիւն: Դէպք նորանշան, խնդրել
մօր 'ի գստերէ՝ զի նուազ առաքինութիւն
յանձին բերիցէ. այլ մայր քո խնդրէ ևեթ
զայն 'ի քէն, և ոչ հրամայէ քեզ. զեր 'ի
վերոյ ամենեցուն կալով քո, ոչ ումեք օ-
րէն է հրամայել քեզ բաց 'ի քէն: Ելիսա-
բեթ ասէ. Այլ հրաման քո լիցի ինձ միշտ
սկաշտելի. եթէ կամիս կալ ինձ աստ, յու-
սամ զօրել հնազանդել քեզ. այլ զի գորո-
վի սիրտ քո ընդ խորհուրդ իմ, յուսամ զի

և հաւանեսցիս ընդ այն։ Զէ և չէ այն հարկանցի ինչ եռանդեան բերումն, այլ ընդերկար երկանց մտաց ծնունդ։ ոչ 'ի գութ և եթ որդիական գորովոյ, այլ և 'ի սպառնառս հաստատունս յեցեալ։ Կայցէ ինչ այլ հնար զերծուցանելոյ զհայր իմ յաքսորանաց։ յերկոտասան ամս, յորմէհետէ տառապինա աստ, ո՞ի բարեկամաց յանձն էառ բարեխօսել վասն նորա։ եթէ առնոյր խակ ոք յանձն, իշխէր երբէք խօսել իբրեզիս, աղդէր 'ի նա սէր հանգոյն իմոյս։ Ո՛հ, թողէք ինձ հաւատալ, որակէս և հաւատամն զի դստեր ձերում պահեալ է Աստուած դարձուցանել 'ի ձեզ զբարեկենդանութիւն։ և մի խափանէք զփառաւորեալն պաշտօն՝ զոր հաճեցան երկինք հաւատալ 'ի նա։

Զինչ աղէ գտանէք յառաջարկութեանս իմում չար։ զմեկնել իմ 'ի ձէնջ։ այլ ոչ լսէի ես յաճախ հառաչելոյ ձեր զաքսորանացդ, զի խափանէ զիս 'ի լինելոյ առն։ և ո՞չ այրն այն մեկնեսցէ զիս 'ի ձէնջ 'ի բաց։ Զվտա՞նդս ուղեորութեան։ այլ ո՞ր այն վրտանդ իցէ։ ձմեռն երկրիս սովորեցոյց զիս խստութեան ցրտոյ, և արշաւանք ընդ առապարս՝ ուսուցին ինձ զվաստակս երկայն ուղեորութեան։ Զափոց իմոց կասկածէք, այլ այն խակ լիցի ինձ պատսպարան, զի տըկարի ամենայն ոք հասանէ յօդնականութիւն։ Խակ զանփորձութենէ իմուէ երկընչիք, այլ չեղէց միայնակ։ յուշ լիցին ձեզ

բանք և դիր քաղաքապետին. ոչ առ այլ
ինչ ներէ նա առաքելական չքաւորաց
ընդ յարկաւս մերով հանգչել, բայց առ
՚ի տալ ինձ ուղեկից պաշտպան և առաջ-
նորդ։ Տեսէք արդ՝ զի ամենայն ինչ հոգա-
ցեալ է, չիք ինչ վասնդ, չիք ինչ խափան,
չիք ինչ պակաս, բայց հրաման ձեր և օրհ-
նութիւն։ Յայնժամ յաւել Ափրինձեր դառ-
նագին. Խակ կերակո՞ւր. մուրանայցես դու-
զայն. նախահարց մօր քո՛ որք ՚ի կողմանս
յայսոսիկ թագաւորեցին, և իմոցս՝ որք
կացին յաթոռ Պոլոնիոյ, արժա՞ն իցէ աե-
սանել զթոռնեայ իւրեանց մուրացիկ ընդ
Որւսաստան, որ ընդ մարզս ինքնակալու-
թեան իւրոյ զթագաւորութիւնս նոցա կա-
ցոյց։ Որում համեստօրէն զարմացմաք
պատասխանի արար օրիորդն. Եթէ արիւն
այդպիսի գնայ ընդ երակունս իմ, եթէ իւ-
ցեմ արքայազն, և պսակիք կրկին ՚ի ճա-
կատս նախահարց իմոց եթէ կացին, յու-
սամ երեւել արժանի նորա և ձեզ, և մի
երբէք անաղատիւ առնել զանունն զոր թո-
ղին նոքա ինձ. այլ աղքատութիւն չածէ
բնաւ անարդանս։ Զի՞նչ ամօթ իցէ զստեր
Աէիտեանց և Որպեսքեանց խնդրել ողոր-
մութիւն յիւրոց նմանեաց. քանի՛ աւագ-
որեար, անկեալ ՚ի բարձուէ փառաց, ոչ
խնդրեցին ողորմութիւն. բարեբաղդագոյն
քան զնոսա գտանիմ ես, յօդնութիւն հօր
իմոյ խնդրելով զայն։

Սրիական հաստատութիւն օրիորդին և

գերաշխարհիկ վեհանձնութիւն, որ ցոլացուցանէր յաչս նորա զխորհուրդ խոնարհելոյ ՚ի սէր ծնողացն, յաւելուին ՚ի բանս նորա զօրութիւն իմն և սաստ այնպիսի որ յաղթանակեցին ՚ի վերայ Ավրինճերի: Ոչ ևս զգայր նա յանձին իրաւունս խափանելոյ զգուստը իւր յայնպիսի առաքինութենէ. խղճէր բռնազբօսել զնա ՚ի ծածկել զայնքան առաքինութիւն յանապլատի անդ. կալաւ զձեռանէ հարսինն, և ասէ ՚ի ձայն մեծ. Վկ իմս Փեղորա, թողցո՞ւք դմա զրաւել աստ զկեանս. զրկեսցո՞ւք զդա ՚ի բարեաց տալոյ ՚ի լոյս որդիս հանգոյնս իւր. զօրացիր սիրեցեալդ իմ. և քանզի չիք այլ հնար ցուցանելոյ զդա աշխարհի՝ որում լիցի դա ՚ի պարծանս, թողցուք դմա մեկնել: Ծնդ այնպիսի բանս առն իւրոյ այլայլեալ մայր օրիորդին, զայն առաջին նուագ յամենայն կեանս իւր ընդզէմ եկաց իշխանութեան՝ որ սրբազան էր նմա, և ասէ. Քաւ լիցի, ոչ թողից զդա, ՚ի զուր խնդրէ զայն այր իմ. հակառակ կացից նմա. և զի՞նչ, վտանգել զկեանս դըստեր, թողո՞ւ մեկնել իմոյս Ելիսաբեթի, և լսել ասլա զկորուստ նորա ՚ի ցրտոյ և ՚ի կարօտութենէ յահազին անապլատս. կեալ առանց նորա վասն ողբալոյ զնա յարաժամ. տես ինձ որ ինչ պահանջի ՚ի մօրէ: Ոչ ՚ի միտ առնուս, ո՛ Ատանիսլաւ, զի ՚ի վեր է այդ քան զկար իմ, և ցաւ այնպիսի դառնակսկիծ՝ զի ոչ ևս կարասցես սկու-

փել զիս։ Եւ 'ի խօսելն զայսոսիկ՝ ցնորեալ
իմն թուէր, ոչ ևս իսկ արտասուէր, ընդ
որ աղէկիզեալ Ափրինճերի առ վշտին, ասէ
ցօրիորդն։ Դուստր իմ, մինչեւ մայր քո չը-
տայ հրաման՝ ոչ մեկնեսցիս։ Ամէ գուստրն
ցմայր իւր։ Մայր իմ եթէ այսպէս հրա-
մայես՝ ոչ մեկնեցայց։ Եւ գորովազին
գդուանօք յաւել. Յամենայնի եղէց քեզ
հնաղանդ. այլ թերես հաւանեցուսցէ զքեզ
Տէր, յոր ինչ չկարաց հայր իմ հաւանե-
ցուցանել. Եկ աղօթեսցուք՝ ի միասին, խնդ-
րեսցուք՝ ի Տեառնէ ցուցանել որ ինչ պարտ
իցէ մեզ առնել. նա է լոյս՝ որ առաջնորդէ
մեզ, նա ինքն է զօրութիւն՝ որ օգնական
լինի մեզ. 'ի նմանէ է ամենայն ճշմարտու-
թիւն, ինքն տայ մեզ ապաստանել 'ի կամս
իւր։ Եւ արտասուօք եկաց յաղօթս Փեղո-
րա. բարեպաշտութիւն՝ որ խաղաղէ ողոքէ
և տիրէ սրտի, փոխանակեալ ընդ վշտաց՝
որ կեղեքեն զնա, բարեպաշտութիւն սուրբ՝
որ ոչ հրամայէ ինչ առանց ցուցանելոյ
զվարձ, բարբառ աստուածային աղդոյ 'ի
սիրտ բարեգութ, շարժեաց զհողի Փեղո-
րայ։ Ի վէս և 'ի խրոխտ սրտից, որք 'ի
փառս հաստատեն զիւրեանց բարեբաս-
տութիւն, մեծարանք ևեթ մարդկան կա-
րող են ընդունել զիրաց զկարի իսկ նոցին
սիրելեաց նուիրումն. կրօնք միայն ընդու-
նին զայն 'ի սրտից, զորոց սէր ևեթ յար-
դարէ զբարեբախտութիւն։

Ի վաղիւ անդր Ափրինճեր գտեալ միայ-

նակ ընդ դստերն, պատմեաց նմա զերկաւ-
րատե թշուառութիւն իւր. Եցոյց նմա յոր-
պիսի աղիողորմ պատերազմունս պառակ-
տեալ Պոլոնիա, և որպէս թագաւորու-
թիւնն այն թշուառ ջնջեալ էր 'ի դասա-
կարգէ պետութեանց, և յաւել. Իմ միակ
եղեռն, դուստր իմ, էր հայրենասիրու-
թիւն՝ որ չհանդուրժէր ընդ անկումն աշ-
խարհիս 'ի ծառայութիւն. երեւլագոյնք 'ի
թագաւորաց նորա կացեալ էին ինձ արե-
նակիցք. ինձ իսկ մարթ էր ելանել 'ի գահ.
պարտական էի զսէր և զկեանս իմ տալ
աշխարհին՝ յորմէ էին ամենայն փառք իմ։
Մատուցի նմա զծառայութիւն իմ, որպէս
պարտն էր ինձ. միայնակ 'ի գլուխ զնդի
միոյ փոքու աղատորդւոց համազգեաց՝
պաշտպանեցի նմա մինչեւ 'ի սպառ ընդդէմ
երից հզօր պետութեանց, որ գային տիրել
նմա, և յորժամ ընկճեալ յառաւելութենէ
թշնամեաց առ պարսպօք Վարսաւիոյ, 'ի
տեսիլ մայրաքաղաքին մեծի մատնելոյ 'ի
հուր և յաւար՝ հարկ եղեւ զպարտութիւն
յանձն առնուլ և մատնել ընդ լծով բըռ-
նաւորութեան, տակաւին 'ի սրաէ զգէմ
ունէի։ Կորակոր խոնարհեալ, զի կայիշաշ-
խարհին իմում՝ որ ոչ ես էր իմ. խնդրէի
զէնս ամենայն ուրեք, ամենայն ուրեք նի-
զակակիցմ՝ առ 'ի դարձուցանել 'ի նա զա-
դատութիւն իւր և զանուն։ Այլ ընդունայն
ճիզն, զուր վաստակ. օրըստօրէ պնդէին
չպթայք, և ճեռք իմ տկարք չկարէին զայ-

նոսիկ խորտակել։ Անդաստանք հարցն իւ-
մոց էին 'ի բաժնի աշխարհին, որ նուա-
ճեալ էր ընդ ձեռամք Ռուսաց. անդ կէի
ընդ Փեղորայ բարեբաստիկ, եթէ լուծ օ-
տար չծանրանայր դինեւ։ Բողոք՝ զոր չկա-
րէի հեղձուցանել յիս, և մանաւանդ խըռ-
նել տժգոհ որերոյ առ իս, տաղնապեցու-
ցին զինքնակալն կասկածուտ. և 'ի միում
աւուրց ընդ առաւոտն յափշտակեալ 'ի տա-
նէ և 'ի գրկաց մօր քո և 'ի քէն, զստրիկ
իմ, մինչ դեռ ևս էիր.քառամեաց, և ոչ ար-
տասուէիր՝ բայց 'ի աեսիլ արտասոււց մօր
քո, ածայ 'ի բանտ 'ի Պետրոպոլիս։ Զհետ
իմ եկն Փեղորա, զմիայն շնորհ կարացեալ
ընդունել լինելոյ ընդ իս բանտարգել. ա-
ւելի քան զամ մի եղաք 'ի սոսկալի բան-
տին, զրկեալ յօդոց, զրեթէ և 'ի լուսոյ,
ոյլ ոչ 'ի յուսոյ։ Զկարէի հաւատալ՝ զի
ինքնակալ արդար չարտոցէ անօլտրտ զառն
քաղաքացւոյ սլաշտպանել իրաւանց աշ-
խարհին իւրոյ, և չվստահասցի 'ի խոս-
տումն զոր տայի կալոյ նմա հալատակ։ Կա-
րի յոյժ բարիս խորհէի զմարդկանէ. զա-
տապարտեցաց առանց լսելի լինելոյ, և աք-
սորեցաց ցկեանս 'ի Ախալերիս։ Նժդեհակից
իմ հաւատարիմ չեթող դիս. և պարտիմ
յաւելուլ, զի զութք նորա քան թէ պարտք
ածէին զնա ընդ իս կղի աքսորեալ իսկ եթէ
էի 'ի սառնապատ մռայլ զարհուրելոյն
Պերեղովաց, և յամայի միայնութիւն լճին
Պայքալայ կամ Քամշեալոյ, անզը ևս

դայր նա զհետ իմ. չդոյր ուրեք անապատ,
չդոյր անձաւ վայրենի՛ ուր չդայր ընդ իս
իմս Փեղորա: Այո ամենեին. ոչ ինչ երկ-
բայիմ, զի վասն առաքինութեան նորա և
աղնուական նուիրման անձին 'ի սէր իմ,
մեզմագոյն տուաւ ինձ աքսոր: Եթէ քաղ-
ցրացան ինձ երեկը կեանք իմ, դստրիկ
սիրելի, մօր քում զայնմանէ գտանիմ շնոր-
հասլարտ. իսկ որ ինչ դառնութիւն եղեւ
ինձ կրել, ես ինքն ամենայնի գտանիմ պար-
տաւոր: Յայնժամ Ելիսաբեթ ասէ. Այլ
միշտ, հայր իմ, սիրեցեր զու զնա: Եւ 'ի
բանից աստի ծանեաւ հայր նորա զսիրտ
հարսինն 'ի դստեր իւրում, և գիտաց զի
կարեր և նա չինել թշուառ ընդ առն տա-
ռապելոյ: Եւ տուեալ նմա զզիր պատա-
նոյն Սմօլոֆի, զոր ունէրն առ իւր յերի-
կէ, ասէ. Դուստար իմ, եթէ յաւուր միում
լիցի ինձ գոլ արիութեան քում շնորհա-
սլարտ, բարեաց՝ որոց վասն քո ևեթ ցան-
կամ 'ի վայելս անդ բարեբաստութեան
զիրս այս յիշեցուացէ մեզ զբարերար մեր:
Պարտի Ելիսաբեթ գոհացող լինել. խնա-
մութիւն առաքինութեան փառաւորէ զաղդ
թագաւորաց: Նիկնեցաւ օրիորդն, և ըն-
կալեալ 'ի ձեռանէ հօր իւրոյ զզիրն մեր-
ձեցոյց 'ի սիրտ իւր, ասելով. Յիշատակ
այնորիկ՝ որ ելացն ընդ քեզ, որ սիրեացն
դրեզ, որ ծառայեացն քեզ, մի երեկը անկցի
'ի սրտէ աստի:

Ոչ ևս ինչ յաւել Ելիսաբեթ խօսել զու-

զեռութենէ իւրմէ զաւուրս քանի մի։ Մօր նորա չե էր տուեալ դհաւանութիւն իւր ընդ այն։ այլ 'ի տրտում հայեցուածոյ և 'ի ծանրաթախիծ կերպարանաց նորա յայտնի էր հաւանել նորա 'ի սրտէ, զի ոչ ևս այլազգ ինչ յուսայր յաջողութեան։ Սակայն չզօրէր արդեօք ասել ցգուստր իւր։ Այո, կարես զնալ, եթէ ոչ երկինք տային նմա զօրութիւն։ Յաւուր միում կիւրակէի մինչդեռ կային ամեներին յաղօթս, այր ոմն բախէր զդուրս ցալով. երաց զայն Սփրինճեր, և Փեղորայ բարձեալ զձայն իւր՝ ասէ. Ո՛հ, Աստուած իմ, ո՛հ Տէր իմ. ահա այրն զորմէ լուաք, ահա այրն որ գայ տանել զդուստր իմ։ Եւ անկաւ լալով 'ի վերայ սեղանոյն, ոչ զօրեալ բարեպաշտի տիկնոջն գնալ ընդ առաջ առնն Աստուծոյ։ Եւ մուտ 'ի ներքս այրն առաքելական, որում անուն էր Հայր Պաւլոս. սպիտակամօրուսք ծածկէին զկուրծս նորա, դէմք իւր պատկառելի, կորացեալ մէջք նորա 'ի վաստակոց քան յամաց. 'ի բազմարկածեան կենաց մաշեալ էր մարմին նորա, այլ հոգի զօրացեալ. 'ի հայեցուածս իւր տիսրութիւն իմն բերէր, որպէս այր՝ որոյ բազում ինչիցէ կրեալ, և քաղցրութիւն իմն հանգոյն առն՝ որ զիտիցէ հաւաստեաւ ոչ ինչ ընդունոյն կրեալ, և ասէ. Խնդութեամբ մտանեմ առքեղ, քաջ արանց, զի օրհնութիւն Տեառնէ 'ի վերայ աղքատին հիւղյս. զիտեմ իսկ քաջ զի են աստ գանձք պատուականաւ

գոյնք քան զմարդարիտս և զոսկի . խնգրեմ
՚ի քէն՝ հանգուցանել զիս աստ զայս գիշեր .
Փութացաւ Ելիսաբեթ , մատոյց նմա ա-
թոռ . և ասէ ցնա ծերունին . Արագընթաց
լեալ է քո , գստրիկ , ընդ ուղի առաքինու-
թեան , յառաջին անդ քայլս թողեալ զմեզ
յետս : Եւ ՚ի բազմել իւրում լուեալ զհե-
ծութիւն Փեղորայ , ասէ . Զի՞ լաս , մայրիկ
բարեպաշտիկ , չիցէ՞ իսկ օրհնեալ պտուղ
որովայնի քո , չիցէ՞ իսկ օրէն կոչել և զբեզ
օրհնեալ ՚ի կանացս . Եթէ արտասուես
վասն բաժանելոյ զրեզ առաքինութեան առ
փոքր մի ժամանակ ՚ի դստերէ քումմէ , և
զի՞նչ առնել իցէ մարց՝ յորոց ՚ի գրկաց
խլեն ախտք զորդիս նոցա , յուղարկել ՚ի
կորուստն յաւիտենից : Ասէ մայրն տառա-
պեալ . Հայր իմ , Եթէ ոչ ևս լիցի ինձ տե-
սանել զնա : Յայնժամ ծերունին համար-
ձակագոյնս ասէ . Տեսցես զնա յերկինս ,
այն է բաժին իւր . այլ տեսցես զնա և յեր-
կրի . ծանունք առաջի կան նմա ճգունք ,
այլ Տէր զօրացուսցէ զնա , այն որ ըստ
գեղման գառին տայ շնչել հողմոյ : Յայն-
ժամ Փեղորա խոնարհեաց զգլուխ իւր ՚ի
հաւանութիւն . իսկ Սփրինձեր լուռ և Եթ
կայր , ոչ ևս կարէր բարբառել առ մորմոք
սրտին : Ելիսաբեթ իսկ՝ որ մինչեւ ցայն օր
արիացեալն էր , սկսաւ զգալ տկարութիւն .
յոյս օգնելոյ ծնողացն՝ յաղթող լեալ էր
ցայնժամ վշտի բաժանմանն ՚ի նոցանէ ,
այլ ՚ի հասանել պահուն՝ յորում կարող էր

ասել. Վաղիւ ոչ ևս լիցի ինձ լսել զձայն
հօր իմոյ, վաղիւ ոչ ևս լիցի ինձ վայելել՝ի
գգուանս մօր իմոյ, թերես ամ մի լի անց-
ցէ մինչև գտից գարձեալ զայս քաղցր բեր-
կրութիւն, թռէր բացեալ երկիր ընդ ո-
տիւք իւրովք. մթագնէին աչք նորա, և
ծունկք իւր կթուցեալ՝ անկանէր արտա-
սուօք՝ի գիրկս հօր իւրոյ: Եզո՞ւկ, հէք զըս-
տրիկ. զի եթէ այժմէն զու տարածանես
դբազուկս քո առ ձեւնկալու, եթէ աստրա-
տին խոնարհիս յերկիր իբր որթատունկ
աննեցուկ, զիարդ զօրեսցես ապա հատա-
նել միայնակ զկէս զոզցես աշխարհի:

Նախ քան դհանզիստ քնոյ՝ բազմեցաւ
երէցն ընդ աքսորականս՝ի սեղան, առ-
նուլ ընթրիս: Հիւրընկալութիւն առանց
իրիք պատրաստութեան, մերժեալ անտի
ուրախութիւն. իւրաքտնչիւր ոք յընտա-
նեաց զսպէր զարտասուս: Վշտակցու-
թեամբ հայէր՝ի նոսա բարեգութ ծե-
րունին.՝ի բազում ուղևորութիւնս իւր
վշտացելոց բազմաց հանդիպեալ էր նա, և
առաւելագոյն ջանք նորա լեալ էին ափո-
փել զվիշտս. վասն որոյ զիտէր վշտաց իւ-
րաքանչիւր պատկանել զսփոփանս, և ըստ
անձնիւր հանգամանաց յերիւրել զբանս:
Էր ուրեք զի չարգելոյր զլալ, այլ զարտա-
սուս՝ զոր առ վշտին իւրում ոք հեղոյր՝ զի-
տէր նա՝ի վշտակցութիւն այլոց շրջել, զա-
զետագոյն այլոց թշուառութիւն՝ի մէջ ա-
ծեալ, և յուղմամբ զորովոյ ընդ այլս՝ ամու-

քել զզգացումն իւրոց տառապանաց : Ըստ
այս օրինակի պատմելով զտարաշխարհիկ
վտարանդութիւնս իւր, և զարկածս աղե-
տաւորս՝ որոց լեալ էր ականատես, զար-
թոյց տակաւ զուշ նոցա 'ի լուր, շարժեաց
զնոսա 'ի կարեկցութիւն ընդ այլս, և խե-
լամտեցոյց զնոսա՝ զի առ այլովք բազմօք
տառապելովք նուազագոյն յոյժ էր թշուա-
ռութիւն իւրեանց : Զի՞նչ իսկ չէր նորա
տեսեալ, զի՞նչ իսկ չկարէր պատմել ծե-
րունին պատկառելի, որոյ 'ի վաթսուն ա-
մաց հետէ երկու հաղար փարսախաւ հեռի
'ի հայրենեացն, ընդ օտար երկնաւ հա-
լածանօք հանդերձ անդուլ անդադար վաս-
տակեալ էր 'ի գարձումն խուժագուժ աղ-
գաց՝ զորս եղբարս իւր կոչէր, զայնոսիկ՝
որ դահիճք իւր լեալ էին յաճախ : Տեսեալ
էր նորա զարքունիս Փերինու, և բազ-
մահմուտ գիտութեամբքն՝ և ևս առաւել
առաքինութեամբք հիացուցեալ զնոսա «
Կեցեալ էր նա 'ի մէջ վայրենեաց, և ընդ-
ելացուցեալ զնոսա, զվաշկատուն Ակիւ-
թացիս 'ի քաղաքաժողով միաբանութիւն
ածեալ և նախակրթեալ զնոսա յերկրա-
գործութիւն . որով անապատք խոպանք
փոխեալ էին յանդաստանս բերրիս, և ո-
րեարն զգօնացեալ և 'ի մարդասիրու-
թիւն եկեալ . ոչ ևս առ նոսա անուանք հօր
և առն և որդւոց անծանօթք էին, և սիրտք
նոցա առ Աստուած ամբարձեալ զանչափ
բարերարութիւնս նորա օրհնաբանէին . այս

ամենայն միոյ ուրուք խնամով յաջողեալ,
0'ն անդր, ազգն այն ոչ չարախօսէր զա-
ռաքելութեանց, չհամարէր խիստ և բըռ-
նաւոր զկրօնս՝ որ հրամայէին նմա, և մա-
նաւանդ չզրապարտէր անպիտանս և փա-
ռասէրս զայնոսիկ՝ որք առաւելագոյն աս-
տուածսիրութեամբ և եղբայրսիրութեամբ
պատկառ կան կրօնից: Այլ է խսկ կոչել
զնոսա փառասէրս, զի՞ նուիրել զանձինս
'ի ծառայութիւն եղբարց՝ ապաքէն փառա-
ւորագոյն պատկաց լինին ցանկացողք, սի-
րեն հաճոյ լինել Աստուծոյ և զերկինս ժա-
ռանգել. փառասիրութեան զերահամբա-
ւելոց աշխարհակալաց չիք քան զմեծարանս
մարդկան և քան զժառանգութիւն տիե-
զերաց 'ի վեր ամբարձեալ յայս տենչ ծայ-
րագոյն:

Եւ ապա Հայրն Պաւլոս ծանոյց նոցա,
զի կոչեցեալ յաւագաց ուխտին՝ դառնայր
'ի հայրենիս իւր 'ի Սպանիա, հետի, և հա-
սանէր նմա անցանել ընդ Ոուսաստան, ընդ
Գերմանիա և ընդ Փաղղիա. և յաւել, թէ
չէր դժուարին ուղին առաջիկայ. զի որ ընդ
անապատս էր ուղևորեալ, ուր քարան-
ձաւք էին նորա օթևանք, ուր վէմ էր զըլ-
խոյ իւրոյ դադար, և ալիւր կամ որիզ թըր-
ջեալ 'ի ջուր՝ այն էր ամենայն իւր կերա-
կուր. չէին ինչ զարմանք՝ եթէ հանգիստ
վաստակոց իւրոց համարէր զհասսանել իւր
յաղքս քաղաքականացեալս. վասն որոյ 'ի
հայրենիս իւր զինքն վարկանէր, հասեալ

յազգս հաւատացեալս։ Պատմէր նա անըուրիս զվշտակրութեանց իւրոց, և զդժուարութեանց՝ որոց հանդիպեալն էր յանցանել ընդ ահազին պարիսպս ձենաստանի, և 'ի գնալ 'ի խորս լայնածաւալ աշխարհին Սկիւթացւոց։ Յաւել ևս պատմել, ո՞րպէս 'ի մուտս անբաւ անասլատին Սունկարիոյ՝ որ է մասն ձենաստանի, և սահմանակից նորին ընդ Սիսկերիոյ, տեսեալ էր նորաերկիր բերրի սամուրենեաց փառաւորաց և ազգի ազգի այլոց մաշկեկաց, որովք մարթ էր առնել շահավաճառ ընդ ազգս Եւրոպայ. այլ չե ևս ինչ 'ի ճարտարութեանց մերոց մտեալ էր անդր, և ոչ ուրուք 'ի վաճառականաց իշխեալ էր ածել զոսկի և զտուրեւառ անդր՝ ուր առաքելականի առնն կանգնեալ էր զիսաչ, և զբարերարութիւնս իւր սփուեալ։ Այսքան է ճըշմարիտ՝ զի եղբայրսիրութիւն քաջ 'ի բաց անցանէ գնայ արշաւասոյր, ուր և ոչ ադահութիւն կարէ հասանել։

Յարդարեցին ծերունւոյն անկողին մաքուր և զիւր 'ի խզկանն ուր ազջիկն սկիւթացի յառաջազոյն հանգչէր, և եկն նա յայնժամ ննջել առ թոնրովն արջենեաւ պարածածկեալ։ Իբրև սկսանէր տիւն լուսանալ, յարեաւ Ելիսաբեթ, մատեաւ մեղմիկ 'ի դուրս ծերունւոյն. և լուեալ զի ազօթէր, խնդրեաց մտանել 'ի ներբա՛ խօսել ընդ նմա միայնակ. զի առաջի ծնողացն չիշխէր խօսել զառաջարէութենէ, և

զի դարձեալ չկամէր անդր ևս քան 'ի վա-
ղիւն արկանել զուղեորութիւն իւր : Ծունը
եղեալ առաջի նօրա՝ պատմեաց նմա զա-
մենայն զկեանս իւր, պատմութիւն խան-
դաղատելի, յորում չգոյր այլ ինչ՝ բայց
գութ և գորով առ ծնողս : Եւ յերկարա-
պատումն առնել զվարանս իւր և զյոս,
յիշատակէր յաճախ՝ որպէս չէ ինչ երկբա-
յելի՝ զԱմոլով . այլ ոչ առ այլ ինչ 'ի պատ-
մութիւն անդր զանունն զայն գողցես յե-
ռեալ, բայց առ 'ի յայտ առնել զանմեղու-
թիւն իւր, և ցուցանել զի անբիծ ամենեին
պահեալ էր զայն : Խանդաղատէր 'ի նա գո-
րովանօք սիրտ ծերունւոյն 'ի լուր բանից
նորա . ընդ աշխարհ ամենայն շրջեալ նորա
և տեսեալ բազում ինչ, այլ սիրտ որպէս
զօրիորդին այնորիկ չէր ուրեք երբէք տե-
սեալ :

Սփրինճեր և Փեղորա ոչ գիտէին զի
գուստը իւրեանց խորհէր 'ի վազիւ անդր
ուղւոյ լինել. այլ յառաւօտուն 'ի համբու-
րելն ընդ նմա՝ զգացին զյուղս սրտի նորա
'ի բռնաղատութենէ հառաչանացն, զոր
ամենայն ոք 'ի մերձենալ վտանգաց ընա-
ւորեալ է արձակել: Դիտէր զնա մայրնյա-
մենայն քայլափոխս նորա ընդ սենեակն,
և կալեալ զձեռանէ նորա ստէս՝ չիշխէր
հարցանել նմա և ոչ ինչ, այլ տայր պա-
տուէրս վասն վաղուին և զվատակոց
յետ վաղուին, առ 'ի ստուգել ինչ 'ի բա-
նից նորա . զի սիրտ իւր չէր յանդորրու, և

լուղիւն գստերն յայտ առնէր հասեալ
զժամ ուղեորութեան նորա. և ասէ ցնա
մայրն 'ի ճաշու. Վաղիւ եթէ ջեր լիցի, ել-
ցես դուստր իմ ընդ հօր քում 'ի մակոյկո՞
զնալ 'ի լիճ անդր յորս ձկանց: Իսկ դուստ-
րըն հայեցեալ 'ի նա՝ լուռ ևեթ կայր և
արտասուէր: Զնոյն և հայր նորա կրելով
տագնապ 'ի սրտի, սաստիւ իմն յաւել.
Լսես, դուստր, զպատուէր մօր քո. վաղիւ
եկեսցես ընդ իս: Իսկ նորա խոնարհեալ
զգլուխ իւր 'ի յուսն հայրենի, ասէ 'ի մըր-
մունջ. Վաղիւ դու զմայր իմ մխիթարես-
ցես: Հատաւ գոյն երեսաց հօրն, զգաց
զայն Փեղորա, և ոչ ևս եկարց ինչ. ծա-
նեաւ զյայտնել գստերն զուղեորութիւն
իւր, և չկամէր լսել զայն. զի 'ի քաջալերել
գստերն ասել ինչ զայնմանէ՝ ստիպէր և
ինքն տալ հրաման, ուր մինչ չե տուեալ
զայն՝ զիտէր զի ոչ մեկնեսցի դուստրն:
Յայնժամ աեսեալ Սփրինճերի՝ զի 'ի վա-
ղիւ անդր հասանէր նմա ժուժկալել ընդ-
չու գստերն և ընդ վիշտ մօր նորա, և չզի-
տելով իսկ թէ կարիցէ կեալ յետ զոհին՝
զոր առ կաթոզին սիրոյ գստերն հանդեր-
ձեալ էր մատուցանել, ժողովէ յանձն զա-
մենայն զօրութիւն իւր, խրախուսէ յանձն
առնուլ զայն, շնորհ ունի գստերն զսիրոյ
նորա, և արգելեալ զարտասուս 'ի սրտի՝
զուարթութիւն պատճառի, զայն ևեթ տալ
նմա վարձ արժանի առաքինութեան նորա:
Ո՛, որպիսի գութ և զորով յուղէր զայն

օր 'ի լուսթեան, քանի զգացմունք աներեսոյթք, քանի զգուանք մորմոքելիք և աղէկէդք ընդ դուստր և ընդ ծնողս: Գուն գործէր ծերունին սրտապնդել զնոսա բանիք սուրբ գրոց, ուր խոստանայ Աստուած վարձատրել զնուէրս որդիական սիրոյ, և զհամակամութիւն ծնողաց ընդիւր. ցուցանէր զվաստակս ճանապարհին ոչ այնչափ ծանունս. ուրումն յաւագաց, զոր թէպէտ ոչ անուանէր, այլ զիւրին էր զուշակել թէ ովկ իցէ, հոգացեալ զամենայն հնարս զիւրին և քաղցր զճանապարհն առնելոյ: Ի հասանել երեկոյին՝ Ելիսարեթ 'ի ծունք անկեալ առաջի ծնողաց իւրոց, խնդրէր հատկլեալ բարբառով զօրհնութիւն նոցա: Մատեաւ առ նա հայր նորա, արտասուք ընդ ծնօտս իւր իջանէին. և աջ կարկառեաց նմա դուստրն: Ծանեաւ հայր նորա զողջոյնն հրաժարական, սիրտ իւր գելաւ, ընկրկեցան արտասուքն, և չկարացեալ յօդել բարբառ՝ ձեռս 'ի զլուխ դստերն եղ, յանձն արար զնա Աստուծոյ 'ի սրտէ: Յայնժամ օրիորդն զաշս 'ի մայր իւր գարձուցեալ, ասէ. Խակ դու, մայր իմ, ոչ օրհնես զգուստրքո: Մայրն հեղձամըզձնուկ 'ի տրտմութենէն՝ ասէ. Վաղիւ, զըստիկ իմ, վաղիւ: — Եւ ընդէր ոչ այսօր, մայրիկ, Յայնժամ անկեալ զնովաւ մայր նորա, ասէ. Այո, և այսօր և վաղիւ և զօրհամապազ: Եւ խոնարհեցոյց զգլուխ իւր առաջի ծնողաց իւրոց, որոց ձեռնա-

մած զաշս յերկինս ամբարձեալ, դողդոջ
ճայնիւ մաղթեցին նմա օրհնութիւն, և
լուան նոցա երկինք: Մերձ առ նոսա ա-
զօթէր և ծերունին, ազօթէր և առաքինու-
թիւն անմեղին: Ո՛հ, և ո՞րպէս ազօթք
այսպիսիք չէին երկնից լսելի, որոց իրա-
ւունք էին մինչեւ անդր ելանելոյ:

Ի վերջեոյս ամսեանն մայիսի, յորում
ժամանակի ընդ երեկորին նսեմ և ընդ
արշալոյս առաւտին հազիւ անդ գիշեր
տևէ ժամս կրկին, զայն սուզ ինչ պարապ
անցոյց օրիորդն 'ի պատրաստել զկարեորս
ուղեորութեանն: Եղ 'ի պարկ իւր մաշկե-
ղէն զհանգերձ ուղւոյ և զկօշիկս' յորս 'ի
հերուն հետէ զանիսուլ 'ի մօրէն վաստա-
կէր, և 'ի ճաշէ իւրմէ եղեալ էր 'ի պա-
հեստ գեղահունդս և ալիւր սակաւ՝ առ 'ի
յամել ըստ կարի 'ի խնդիր ողորմութեան,
և 'ի մեկնելն իւրում շառնուլ ինչ յաղքա-
տին հիւղոյ ծնողացն՝ ուր կարեորն հազիւ
գոյր պարէն: Ութ կամտամն ևեթ գրամք
էին ամենայն գանձք նորա. զայն միայն
ժառանգէր 'ի վերայ երկրի, այն միայն էր
ամենայն մեծութիւն նորա յանկանելն յու-
ղի առ 'ի հատանել անցանել բիւր մի փար-
սախաց:

Երաց մեղմով զգուռն ծերունւոյն, և ա-
սէ. Մեկնեսցուք, հայրիկ, մինչ դեռ 'ի
քուն կան ծնօղք իմ. մի զարթուսցուք
զնոսա, շատ իսկ արտասուելոց են ապա:
Ննջեն նորա անհոգ՝ կարծելով զի չկարեմք

մեկնել առանց անցանելոյ ընդ սենեակ իւրեանց, այլ պատուհան խցկանս չէ ինչ բարձր, կարացից դիւրաւ ուտնուլ արտաքս ընդ այն, և օգնել և քեզ իջանել անտի անվտանդ։ Հաւանեցաւ ծերունին ընդ բարեգութ հնարս օրիորդին, առ ՚ի խնայել զերեսին ևս տառապեալս ՚ի մորմոքանաց հրաժեշտին յիրերաց։ Ելին յանտառն, և բարձեալ էր օրիորդին ՚ի թիկունս իւր զպարկիկն. այլ ՚ի մեկնելն՝ քայլս ինչ առեալ, դարձաւ հայել ՚ի հիւղ անդր՝ ուստի մեկնէրն, և հեղձամղձուկ ՚ի հեկեկանացն՝ անկեալ արտասուօք առ դրան սենեկին՝ ուր ննջէին ճնողք իւր, ազօթէր ՚ի ձայն բարձր։ Աստուած իմ, եղիցին խնամք քո ՚ի վերայ սոցա, պահեա զսոսա, և մի թողուր ինձ կոխել միւսանգամ զսեամս զայսոսիկ՝ եթէ մնայ ինձ չգտանել զծնօղս իմ աստ։ Եւ իբրև յոտն եկաց, դարձաւ ՚ի թիկունս, և տեսանէ զհայր իւր զի կայր, և ասէ. Հայր իմ, զու աստ. ընդէր, հայր, ընդէր եկիր այսր։ Նա ասէ. Առ ՚ի տեսանել զքեզ, առ ՚ի համբուրել, առ ՚ի միւսանգամ օրհնել զքեզ և ասել. Դստրիկ իմ, եթէ յաւուրց մանկութեան քո եղե ինձ օր մի առանց սիրելոյ զքեզ, եթէ երբէք ետու կայլակ մի արտասուաց յաշացդ կաթեցուցանել, եթէ խստիւ ինչ հայեցուածուլ կամ բանիւ զսիրտ քո մշտացուցի, թող ինձ, չև մեկնեալ յինէն. ներեա հօր քում ծերունւոյ, որպէս զի, եթէ ոչ շնոր-

Հեսցի ինձ տեսանել դքեզ վերստին, մեռայց խաղաղութեամբ։ Կարճեաց օրիորդն զբանս նորա, և ասէ. ԱՇ, մի ասեր զայդ, մի սցդպիսի բանս բարբառիր։ Յաւել հայրն. Իսկ զինչ մօր քում 'ի զարթնուլ նորա ասացից. զինչ 'ի խնդրել զդսարիկ իւր պատասխանեցից. Խնդրեսցէ նա դքեզ յանտառիս, խնդրեսցէ յեզերս Ծիդ. Երթայց ամենայն ուրեք գհետ նորա արտասուակցորդ, կոչել ամենայն ուրեք զգըոտրիկ մեր՝ անպատասխանի 'ի նմանէ։ Իրանից աստի օրիորդն գրեթէ նուազեալ, անկաւ յեց յորմանդը հիւղոյն. և տեսեալ հօր նորա զի յոյժ գորովեցոյց զաիրտ զըստերն՝ ստրջացաւ ընդ տկարութիւն իւր, և ասէ ողոքանօք. Զօրացիր, դուստր իմ, զօրացայց և ես. միմիթարեցից զմայր քո, խոստանամ քեզ. քաջալերեցից զնա ընդ վիշտ բաժանման իւրոյ 'ի քէն, և տաց զնա քեզ 'ի դարձին քում։ Այո, դուստր իմ. թէպէտ յաջողութիւն պսակեսցէ զբարեգորով ուղեորութիւն քո և թէ ոչ, առանց անդրէն տեսանելոյ գքեզ՝ ոչ զրաւեսցին ծնողք քո 'ի կենաց։ Յայնժամ ասէ ցՀայրն Պաւոս, որ զայս 'ի վայր արկեալ խորազգած ընդ տեսիլն խանդաղատելի՝ կայր անդ մեկուսի. Հայրիկ, աւանդեմ քեզ գանձ անկշուելի. առաւել է ինձ սա քան զարիւն իմ, առաւել քան զկեանս. աւանդեմ զսա քեզ աներկեան վատահութեամբ. երթայր 'ի միասին. հրեշտակք զսովլաւ և զքե կացցեն

պահապանք, զօրութիւնք երկնային պաշտամանեսցեն սմա. աճիւն նախահարց սորտ յարիցէ վերկենցաղեալ, և Տէր ամենակալ հայր իմոյս Ելիսաբեթի՝ ոչ թողցէ կորնչել սմա:

Ոչ ևս զօրեաց օրիորդն հայել 'ի հայր իւր. աջոկն զաշս իւր փակեալ, և զձախ յառաջնորդ իւր տուեալ, անկաւ ընդ նմա յուղի: Արե 'ի ծագս լերանց հարկունէր, թոյրաթուխ շոնից ուկեզօծէին գագաթունք, ամենայն ինչ դեռևս հանգչէր. ոչ երեսք լճին 'ի շունչ հողմոյ խորշոմեալ, և ոչ ծառոց տատանէին տերեք. չե ևս ճճուէին ճճճղուկք. լոէր ամենայն ցփոքրիկ ժժմակ. համագոյք բոլոր գողցես պատկառեալ կային անմռունչ, զի հայրենին ճայն՝ որ դեռ 'ի բացէ գստերն իւրում գոշէր ընդ անտառն ողջոյն հրաժարական՝ վերջին նմա ճայն լիցի լսելի: Զհօրն մորմոք փորձեցայ բացատրել, այլ զմօր նորա չէ ինձ իշխելի. զիա՞րդ իսկ կարեմ յանդիման առնել գտառապեալն. 'ի ճայնէ առն իւրոյ զարթուցեալ՝ զիմեաց առ նա, և 'ի ծանրաթախիծ տրտմութենէ նորա գուշակեալ զմեկնել դստեր իւրոյ, անկաւ նուաղեալ 'ի հառաջան՝ որ վայրկեան 'ի վայրկենէ թուէին վերջին նորա շունչ օրհասական: Ի զուր այր նորա յուշ ածէր նմա զամենայն աղէտս աքսորանացն, և աղաչէր զնա հանգարտել. ոչ ևս լոէր նա ճայնի փեսային. սիրոյ իսկ անդ անկեալ 'ի զօրութենէ իւր-

մէ, և ոչ 'ի սիրտ հարսինն ազդեալ. զի մորմօք մայրենի գեր 'ի վերոյ է քան զամենայն սփոփումն մարդկային և անտեղիտալի երկրէիցս իրաց, իւր ևեթ գերագոյին զզօրութիւնն զայն պահեալ՝ զոր շնորհէ բնութեան՝ տկար յիւրմէ հաստելոյ, փափուկ զսիրտ նորա արարեալ, առ 'ի կարող լինելոյ երկրպագել ձեռին՝ որ զնահարկանէ, և հաւատալ 'ի յոյսն միակ՝ որ մխիթարէ:

Յութետասներորդի աւուր ամսեանն մայիսի՝ ուղւոյ եղեն Ելիսաբեթ և առաջնորդ նորա, և գնացին ամսօրեայ ժամանակ ընդ անտառս խոնաւուտս Ախալերիոյ, ուր պատահեն յայնմ եղանակի ողողմունք ահագինք։ Շինականք սկիւթացիք երբէք երբէք ներէին նոցա ընդ դոյզն ինչ վարձու ելանել 'ի սայլս իւրեանց։ Երեկօթէին 'ի հիւզս գծուծս, ուր չէր մարթ օրիորդին առնուլհանգիստ'թէ չէր սովորեալ ընդերկար յաղքատութիւն։ ընկողմանէր զգեստուք յանկողինս աղտեղիս, 'ի ծխամած խուզս, 'ի գարշահոտ շունչ օղւոյ և ծխախոտոյ, ուր հողմն շնչէր յաճախ ընդ պատուհանս թղթեայս հերձոտեալս, և ուր 'ի լրումն տառապանաց՝ ննջէին խառնիխուռն ծնողք ընդ որդիս, ընդ անզեայս և ընդ գրաստու։

Քառասուն վերստիւք հեռի 'ի Թինու քաղաքէ անցք են ընդ անտառ, ուր ցիցք ցուցանեն զելս սահմանաց Թուպողաքեայ։ Գիտաց Ելիսաբեթ զի ելանէր յերկրէ աք-

սորանացն, և թուէր նմա մեկնել՝ի հայրենեաց, բաժանել միւսանգամ՝ի ծնողաց իւրոց, և ասէ հառաջանոր. Ահա արդ հետի ՚ի նոցանէ գտանիմ: Նոյն խորհուրդք ելին ՚ի սիրտ նորա և ՚ի կոխելն յԵւրոպա, զի կալով յայլում մասին աշխարհի՝ զգոյր զհեռաւորութիւն իւր առաւելքան երկայն ուղեորութեամբն. զի թողոյր նա յՎրիա զայնոսիկ՝ որ միայն խնամողք իւր էին, զայնոսիկ՝ յորոց վերայ միայն ՚ի համագոյից էին իւր իրաւունք, զայնոսիկ՝ որոց միայն սէր ընդ իւր էր աներկբայելի: Եւ զինչ յԵւրոպա գտանէր ՚ի հռչակեալն զիտութեամբք, զինչ յարքունիս ինքնակալին՝ ուր ժողովին գանձք և հանճարք. գտանէր անդ մի ևեթ սիրտ կարեկիր ընդ թշուառութիւն իւր, որ ողօրմէր ՚ի տկարութիւն իւր, զորոյ կարէր խնդրել զօգնականութիւն: Ի խորհելն զայսոսիկ՝ մի ևեթ արդեօք գայր նմա ՚ի յուշ որում յուսայր հանդիպել՝ի Պետրոպոլիս... այլ աւաղ, զի չէր նա անդ, պատուէր ինքնակալին յղեալ էր զնա ՚ի բանակն ՚ի Վիւոնիա. և ՚ի չգտանել զնա օրիորդին յԵւրոպա՝ թուէր իւր աշխարհն այն անմարդի, զի զնա միայն ճանաչէր անդ: Մնացր ամենայն յոյս իւր յառաջնորդն. զի որոյ զամս վաթսուն բարերեալն էր այլոց, համարէր զնա Ելիսաբեթ հզօր յարքունիս թագաւորաց: Ի Փերմայ քաղաքէ մինչև ՚ի Թուպուլք՝ ևն վերսաք իւր իննհարիւր. ճանապարհք

յարդարունք, անդաստանիք բերրի և մշակեալ, խիտ ընդ խիտ Ուսւսաց և Սկիւթացւոց զիւղորէք ճոխք, և բնակչաց նոցին կերպարանիք այնպէս կայտառք՝ զիոչուէր չնչել նոցա զօդս Ախպերիոյ: Են անդ և օթևանիք նկարէնք, զարդարեալք նկարուք և գորդովք. և կահիւք բաղմօք փարթամութեան՝ որ անծանօթք էին Ելիսաբեթի, և զարմացումն անմեղութեան նորա ածէին: Բայց թէպէտե մեծագոյն քան զամենայն քաղաքս ընդ որս անցեալն էր Ելիսաբեթ՝ էր Փերմէ, բայց անհաճոյ նմա թուեցաւ վասն ազտեզի և անձուկ փողոցացն, վասն բարձրութեան տանց, և ապարանից խառն՝ ի խուռան ընդ հիւզս բնակութեան, և վասն ժահահու օգոցն՝ զոր էր անդ չնչել: Են անդ շուրջ զքաղաքաւն ճահիճք, և մինչեւ ՚ի Քաղան խափանեն զերկիրն ուրեք ուրեք մացառուտք և անտառք եղենեաց նսեմաստուերք, տիսուր զաշխարհին յանդիման առնելով զտեսիլ: Ի մըրկային եղանակի անկանին անդ յաճախ շանթիք զեղենեօրն վաղեմեօք, որք արագարագ հրդեհեալ կերեին որպէս սիւնք հրաշէկք, բոցածաւալ՝ ՚ի գագաթունս վարսիւք: Ոչ զուն ուրեք Ելիսաբեթ առաջնորդաւն հանդերձ ականատես եղեն հրդեհին. և ստիպեալք անցանել ընդ անտառն երկուստեք բորբոքեալ՝ տեսանէին ուրեք ուրեք զծառոց ծախեալ զլունս, որ կեղեսովքն և թ ՚ի վեր

ունէին դկատարս չե հրդեհեալս, այլս կիսովի խոնարհեալ կամար հրեղէն զուղեաւն գործելով, այլս ճարճատմամբ 'ի վերայ միմեանց կործանեալ 'ի ձև բոցեղէն բրդան, հանգոյն փայտակոյտ նախնեացն խարուկի, ուր գթութիւն հեթանոսական զգիւցաղանցն ամփոփէր աճիւն։ Սակայն յայս ամենայն վտանգս, և յառաջիկայսն ևս առաւել իմն սպառնականս՝ յանցս գետոց յորդելոց, ոչ ինչ տըրտընջէր օրիորդն. թուէր իսկ նմա առաւելաղանց քան դիրսն լուեալ զգժուարութիւնս ճանապարհին։ Զի բարեխառն էին օդք, և չդնայր միշտ հետի. զի հանդիպեալ զճանապարհայն սայլից ունայն դարձաւորաց 'ի Ախալերիոյ՝ ուր ածեալ էր նոցա աքսորեալս, դիւրաւ 'ի սուրհանդակակաց անտի ընդունէր ծերունին հրաման ելանելոյ ընդ ուղեկցին 'ի սայլս անդք, և ոչ ամօթ համարէր օրիորդն զբարւոյ Հօրն ընդունէլ զշնորհ. զի զոր 'ի նմանէն ընդունէր, համարէր զայն երկնից չնորհ։

Ի սկիզբն սեպտեմբերի հասին 'ի գետեղերս Փամայ. ոչ ինչ աւելի քան զերկերիւր վերստոս մնայր նոցա այնուհետեւ մինչեւ 'ի Փաղան, որով զրեթէ 'ի կէս ուղւոյն գտանէին հասեալ։ Եթէ հաճոյ լեալ էր երկնից կատարել Ելիսաբեթի զուղեռորութիւն իւր որպէս սկսեալն էր, թուէր նմա դիւրագնի ստանալ զագատութիւն ծնողացն. սյլ աւաղ, ամենայն ինչ եղեւ

կերպարանափոխ . և ընդ անհարթութեան օդոց մերձենայր պահն՝ որ հանդէս առնելոց էր արիութեան նորա և առաքինութեան , առ ՚ի բոլորեւ ՚ի գլուխ արդարոյն զանմահական կենացն պսակ :

Յաւուրց հետէ սկսեալ էր Հայրն Պաւլոս ակնյատնի տկարանալ . հազիւ կարէր ընթանալ , և յեց իսկ ՚ի ցուալն և ՚ի բազուկ օրիորդին՝ ստիպէր հանգչել անդադար : Յելանել նորա ՚ի սայլ , ուղին կազմեալ ՚ի ստուար կոճեզաց զետեղելոց ՚ի ճախճախուտս՝ ցունցս ուժգին տայր նմա , որ սպառէին զմնացուած զօրութեան նորա . այլ դեռ ևս արիութեամբն ժուժկալէր : Բայց ՚ի հասանել իւրեանց ՚ի Սարաբուլ , որ գիւղ մեծ էր յեզր Քամայ՝ զանգակատուն իսկ ունելով , զգաց ծերունին նուազումն այնպիսի անսովոր , զի չէր կարող անտի անդր դնալ : Ածաւ յիշեան ուրեք յոռի՝ մերձ ՚ի տուն Ուբրաւիթելի որ վերատեսուչն էր արքունի կալուածոց ՚ի Սարաբուլ : Միակ անդ խուզ դտաւ նմա ՚ի ձեզուան , որոյ յատակ յերերի կայր , և սպատուհանք էին առանց ապակեաց . չէր անդ աթոռ կամ ակումբ , և ոչ մի . ամենայն կահք անդանօր էին սեղան մի , և դարգիճ առանց անկողնոյ . արկին անդր խուն մի յարգ՝ ընկողմանել ծերունւոյն ՚ի վերայ նորա : Հողմ այնպիսի ցրտասառոյց ընդ պատուհանն շնչէր , զի եթէ ներէին երբէք ցաւք հիւանդին՝ տալ քուն արտեանացն , սակայն ար-

գելոյր՝ ի հողմոյն։ Խորհուրդք տխրականք սկսանէին նեղել զԵլիսաբեթ։ խնդրեաց և բժիշկ, և չպոյր բժիշկ՝ ի գեղջն։ ոչ ոք յորոց անդն կային կարեկից լինէր ծերունոյն հիբի՛ որ մերձ էր՝ ի մահ։ ինքնին միայնակ օրիորդն առնէր նմա զամենայն հոգ և խնամ։ Նախ քան զամենայն զկատերտ հնոտի որ կախեալ կայր զորմոց, ած զպատուհանաւն։ ապա քաղեալ՝ ի դաշտէ բանջարս ախտաբոյժս, որպէս՝ ի մօրէ իւրմէ էր ուսեալ, և խառնեալ զայնոսիկ մատոյց հիւանդին։ Այլ ըստ մերձենալ զիշերոյ՝ զայրանայր ախտ նորա, և ոչ ես օրիորդն տառապեալ՝ ժոյժ ունէր արտասոււաց։ մեկնէր երբէք երբէք մեկուսի, հեղձուցանել զհեկեկանս իւր։ բայց բարեգութ ծերունոյն լուեալ զայն՝ ի խշտոյն, լայր և ինքն վասն վշտի օրիորդին՝ զոր չկարեր սփափել։ բանզի զգայր զի ոչ ես էր ապրանաց, և վճարեալ էր վասն իւր աշխարհ, իբր ոչ եթէ յետ վաստակելոյ զամս վաթսուն՝ ի սէր Աստուծոյ իցէ երկնչել՝ ի մահուանէ, այլ ցանկալի է փոքր միւս ես կեալ որում առաջի կայցէ բաղում այլ ես գործել բարիս։ Ազօթէր նա՝ ի մրմունջ։ Աստուած իմ, մի համարիր ինձ՝ ի տրտունջ։ այլ թէ չնորհէիր ժաման առնել ինձ յուշ եղեալ տեղին զդստրիկս տառապեալ, տնդորրագոյն լինէր ինձ մեռանել։

Զգիշերն ողջոյն կայր օրիորդն յոտին, վասեալ ջահ բեեկնեայ, խնամել զհի-

ւանդն. սուլ ինչ յառաջ քան զծագել
տունջեան՝ մատեաւ տալ նմա ըմպել. զի-
տաց ծերունին զի յետ սակաւ միոյ ոչ ևս
կարելոց էր խօսել. յարեաւ 'ի նիստ, առ
զբաժակն 'ի ձեռանէ օրիորդին, ամբարձ
զայն 'ի վեր և ասէ. Աստուած իմ, քեզ
յանձն առնեմ զդստրիկս զայս, որ խոս-
տացար զբաժակ մի ջուր ցուրտ յանուն քո
արբուցեալ՝ ոչ առնել անվարձ։ Աստի 'ի
միտ էառ օրիորդն հաւաստեաւ, զոր մին-
չև ցայնժամ որպէս անհնարին ինչ մերծէր
'ի մտաց. ետես՝ զի առաջի աշաց ունէր
ծերունին զմահ, ետես՝ զի կորնչէր ամե-
նայն ինչ վասն իւր. սիրտ նորա գելաւ,
անկաւ 'ի ծունք առ խշառվ ծերունոյն 'ի
քիրտն ցուրտ հարեալ, և հեղձամշղձուկ 'ի
հեծութենէ։ Խակ ծերունին գորտվեալ 'ի
նա, կրկնէր և երեքինէր 'ի խորոց սրտէ.
Աստուած իմ, զթա 'ի սա, զթա 'ի սա Աս-
տուած իմ։ Եւ 'ի զայրանալ և ևս ցաւոց
ախտին, ասէ ցօրիորդն. Յանուն Աստու-
ծոյ և հօր քո, հանդարանաց, զստրիկ, և
լուր ինձ։ Աթափեցաւ օրիորդն, ցածոյց
զողբս, սրբեաց զարտասուս, և յառեալ 'ի
ծերունին՝ մնացր մեծարանօք լսել որ ինչ
ասելոցն էր։ Խակ նա յեց 'ի քանոն դարգ-
ճին, ժողովեալ յանձն զոյժ իւր, ասէ.
Վիշտս ծանունս հասանէ կրել քեզ, զըս-
տրիկ, յուղեորել քո միայնակ յայդմ հասա-
կի 'ի զժուարին եղանակիս. այլ փոքրագոյնն
է այդ 'ի վտանգաց։ Ահաւորագոյն վտանգս

պատրաստեն քեզ արքունիք . արիութիւն
սովորական զօրէ 'ի տոկ թշուառութեան ,
այլ հրապուրանաց ոչ ևս : Արիութիւն քո
չէ սովորական . բնակութիւն արքունեաց
մի փոխեսցէ զքեզ . եթէ չարք ոմանք , յո-
րոց յոգունք պատահեսցին քեզ , կամես-
ցին կարօտութեամբ քով զեղծանել առ 'ի
խոտորեցուցանել զքեզ յառաքինութենէ ,
մի լուիցես խոստմանց նոցա , և մի ունայն
մեծութիւնք պատրեսցեն զքեզ : Երկիւղ
Տեառն և սէր ծնողաց հզօրագոյնք են քան
զամենայն , և է 'ի քեզ այս և այն . յոր
թշուառութիւն և գտցիս անկեալ , մի թող-
ցես երբէք զբարութիւնս զայսոսիկ՝ ընդ ա-
մենայն բարեաց քեզ ընծայելոց . յուշի կալ
անմոռաց , զի միակ յանցումն քոյին՝ լիցի
մահառիթ որոց ետուն քեզ կեանսա : Յրիորդն
ասէ . Մի երկնչիր հայրիկ : Յաւել ծերու-
նին . Ոչ երկնչիմ , երկիւղածութիւն քո և
ծնողասիրութիւն արժանի են հաւատար-
մութեան . և ոչ ինչ երկբայիմ , զի յաղ-
թեսցեն ամենայն վտանգաց՝ որոց թողցէ
Տէր ելանել քեզ առ 'ի փորձ ընդ առաջ:
Ընկալ արդ , զստրիկ , 'ի հանդերձէ իմմէ
զքսակն , զոր քաղաքալետն թոսլուքեայ
առատապարզե աւանդեաց 'ի յանձնելն
ինձ զքեզ . լեր խորհրդապահ , զի մի կենաց
նորա հասցէ վտանգ . արծաթդ այդ ածցէ
զքեզ մինչև 'ի Պետրոպոլիս : Երթ անդ
առ Մետրապոլիտն , տուր նմա զանուն
իմ , թերես չիցէ մոռացեալ . տացէ նա քեզ

ապաստան՝ի միում ուրեք՝ի կուսաստանաց, և ինքնին արգեօք մասուսցէ ինքնակալին զաղերս քո. և չէ մարթ մերժել զայն ինքնակալին։ Մերձ աւասիկ հասեալ՝ի մահ կարեմ ասել քեզ, դուստր իմ, զի մեծ է առաքինութիւն քո, սակաւք լեալ են նմանիք յաշխարհի.՝ի գութ շարժեսցի նա այտի, վարձատրեսցի այդ յերկրի մինչ չե յերկինս վարձատրեալ։ Եւ լոեաց աստանօր ծերունին. գժուարէր տուրեառ շնչոյն, քիրտն ցուրտ թանայր զճակատն. իսկ Ելիսաբեթ լոյր անբարբառ, յեցեալ զզլուխ իւր՝ի խշտեակն յարգեղէն։

Յետ ընդերկար լուութեան՝ խլեաց ծերունին՝ի կրծոց իւրոց զփոքրիկ նշան խաչին երենեայ, և տուեալ զայն օրիորդին՝ ասէ նուաղեալ ձայնիւ. Ընկալ զսա, դըստրիկ, չունիմ այլ ինչ տալ քեզ. զայս և եթ թողում քեզ՝ որ էր ամենայն մեծութիւն իմ յերկրի, որով ոչ ինչ պակասեաց ինձ։ Եւ օրիորդն համբուրեաց զայն դառնակսկիծ մորմոքմամբ, զմօտալուտ մահ նորա հաւասարի գուշակելով՝ի տալոյ ՚ի բաց զժառանգութիւն իւր զայն։ Յաւել դարձեալ ծերունին կարեկցութեամբ մեծաւ. Որոջդ տառապեալ անտէրունչ, մի երկնշիր, զի հսկեսցէ քեզ հովիւն բարի. և օգնականութեամբ նորա լիցիս առաւել քան զոր եսդ.՝ի բարութիւն նորա լեր ապաստան, որ կերակրէն զճագս ճնճղկաց, և որ զիտէն զթիւ աւազահատից ծովափանց, մի մոռասցի նա զքեզ։

Յայնժամ կալետը օրիորդին զրկապինսդ
զձեռն ծերոյն՝ զոր կարկառէրն առ ինքն,
ասէ ողբազին. Հայր իմ, չժուժամ զրկիլ
՚ի քէն: Եւ ծերունին ասէ. Աստուած է,
դատրիկ իմ, որ զայդ հրամացէ. Հնազանդ
լեր նմա, ցածո զառուգ քո. ահա զնամ յեր-
կինս ազօթել վասն քո և վասն ծնողաց
քոց: Եւ ոչ կարաց կատարել զբանս իւր.
շարժէին շրթունք նորա, և ոչ լինէր բար-
բառ լսելի. անկաւ ՚ի խշտեակն, դաշս ՚ի
վեր ամբարձեալ, ՚ի ճիգն յետին յանձնել
արարչին զհեծութիւն սրբոյն. և մեռեալ
տակաւին թուէր ազօթս մատուցանել:
Այնպէս տարրացեալ էր ՚ի նմա եղբայրութ-
իւթիւն, և այնչափ յամենոյն կեանս իւր
անտես արարեալ նորա զիւրն՝ առ ՚ի ջանալ
վասն այլոց, զի և յահաւոր սկահուն յան-
դիման լինելոյ ատենի ամենադատաւորին,
և յանել անգունդս յաւիտենականութեան
ընկզմելոյ՝ ոչ լինքն խորհէր:

Ի ձայն ողբոց օրիորդին հասին անզր
բազումք, զվասն էրն հարցանէին ողբոց
նորա, և նա ցուցանէր զալաշտապան իւր
տարածեալ անշունչ: Ի տարածանել համ-
բաւոյն լցաւ սենեակն ամբոխիւ. կէոք ա-
ռոււշ հետաքրքրութեամք գային զանցս
իրացն զիտել, և կացին զարմացեալ ՚ի տե-
սիլ օրիորդին՝ զի լայր զկրօնաւոր ոք մեռ-
ուեալ. այլք կարեկից լինէին նմա: Իսկ
պանդոկապեալք խնդրէին զհատուցումն
զոյզն կերակրոյն, զոր տուեալ էին նմա.

և ուրախ եղեն 'ի դտանելն 'ի հանդերձս
վախճանելոյն դքսակ դրամոցն, զոր Ելի-
սաբեթի մոռացեալ էր առնուլ 'ի տիրու-
թեան անդ. և բարձին զայն՝ ասելով ցօրիոր-
դըն գարձուցանել 'ի նա զմնացուած դրա-
մոցն՝ յառնուլ անտի զծախս բնակութեանն
և զյուղարկաւորութեան։ Հասին երի-
ցունք Յունաց դպրօք և մոմեղինօք, արկին
գորդ մեծ 'ի վերայ հանդուցելոյն. և ելաց
'ի ձայն մեծ հէք օրիորդն առ կոկիծ վշտին.
և ստիպեալ 'ի թողուլ զայն երիթացեալ՝
զոր ունէրն զեռես 'ի ձեռին, ետ զյետին
ողջոյնն հրաժարական պատկառելի զի-
մացն՝ որ բերէր յինքեան զուարթութիւն
երկնային. և մեկուսի յանկեան ուրեք սե-
նեկին կայր 'ի ծունր արտասուօք, ածեալ
'ի զլուխ իւր վարչամակ՝ առ 'ի ծածկել յա-
չաց իւրոց զերկիրն անսալատ, ուր զնա-
լոցն էր միայնակ. ողբայր հեղձամղձուկ
հեծեծանօք, և ասէր. Ով երջանիկ հոգի,
մի զտառապեալս թողուր անտերունչ. ով
հայր իմ և զորովագութ մայր, զի՞նչ լիցի
ձեզ արդ 'ի բառնալ ամենայն օգնականու-
թեան 'ի սիրելոյ դստերէ ձերմէ։

Յայնժամ սկսան շարականք հանգըս-
տեան, և եղաւ զիակնն 'ի գագազա. և ի-
րրեւ տանէին զնա, կամեցաւ Ելիսաբեթ՝
թէպէտեւ տկար՝ և դողգոջուն և վհատեալ
զնալ զհետ մինչեւ 'ի յետին օթեան նորին,
որ օգնական, պաշտպան և քաջալեր լեալ
էր իւր, և վասն իւր ազօթելով աւանդեալ

զողին։ Յաջակողման եղեր Քառասոյ, 'ի ստուրոտ բլրոյն՝ յորոյ վրայ ամբառնան խռերակք դղեկին կառուցելոյ յաւուրս պատերազմացն Պասքիրեանց, են գերեզմանք Սարարուլ քաղաքի։ Վայրս այս է՝ 'ի դաշտի մեծի ցանկապատ, ունելով՝ 'ի միջի փայտակերտ աղօթարան, և շուրջանակի հողակոյտք՝ բերելով՝ 'ի դագաթունս իւրեանց զնչան խաչին՝ 'ի ցոյց գամբանաց։ Աստանդ եղեինք արկանեն ստուերս եղերականս, և 'ի ներքուստ վիմաց գամբանականաց բուսեալ կանկառք վայրենիք լայնատարած և բազմահերձ տերեովք, և միւս այլ բոյս՝ որոյ ցօղուն մերկ և յերկիր հակամէտ՝ 'ի ծիլս յոդունս նրբինս ծաւալի զգերեզմանօք, ծաղկունք նորա գեղնաշորթք գոզցես առ 'ի փթթել զշիրմօք հաստեալք։

Յուղարկաւորք ոչ սակաւք գհետ դագաղացն զնային յայլ և այլ ազգաց, 'ի Պարսկաց, 'ի Թրքաց և յԱրաբացւոց, փախուցեալք 'ի գերութենէ Փիրկեանց և ընկալեալք 'ի բնակարանա՝ կառուցեալս 'ի վերջին զշխոյէ։ Գնային նորա խառնիխուռն, ջահ յարդեղէն 'ի ձեռին, գհետ զառաջաւորաց եղերական հանդիսին, կցորդելով ձայնի երիցանւոյն։ իսկ Ելիսաբեթ լուռ ևեթ զնայր յամբաքայլ և քօղարկեալ, 'ի բազմամբոխի անդ ոչ ունելով աղերս ընդումեք, բայց ընդ ացնմ՝ որ ոչ ես էր։ Յիշուցանել զգիակնն 'ի փոս անդր, եղ երեցն

ըստ արարողութեան Յունաց դրամմի վո-
քրիկ յաջ վախճանելոյն 'ի սակ անցի . և
արկեալ 'ի նա ափով հող, 'ի բաց եկաց :
Եւ թաղեցաւ անդ 'ի յաւէրժ մոռացօնս
այրն ողորմած , որոյ չէր անցուցեալ օր մի
առանց բարերարելոյ ու մեք . հանգոյն բա-
րեշունչ հողմոց , որ ամենայն ուրեք ածեն
սերմանս պիտանիս՝ բուսուցանել յամե-
նայն նահանգս : Շրջեալ էր նա ընդ կէս
աշխարհի՝ սերմաննելով ամենայն ուրեք ի-
մաստութիւն և ճմարտութիւն , և մեռա-
նէր անձանօթ աշխարհի . այսչափ անկը-
ցորդ է համբաւ ընդ խոնարհամիտ լաւու-
թեան : Այսպէս մարդիկ , որք բաշխեննն
զհամբաւ , շնորհեն զայն այնմ՝ որ զարմա-
ցուցանէ զնոսա , այնմ՝ որ կործանէ զնո-
սա , և ոչ այնմ՝ որ միսիթարէ զնոսա : Ճա-
ռագայթ գեղանշոյլ , լոյս ակնախտիդ , պեր-
ճապայծառ փառք մարդկային , մի կարծեր
թէ ներէր քեզ Այստուած լինել վարձք մե-
ծութեան , եթէ չպահէր զիւր փառս 'ի
վարձ առաքինութեան :

Եկաց մնաց Ելիսաբեթ 'ի տիսուր վայրի
անդ մինչև յերեկոյ , ելաց անդ , աղօթեաց
բաղումս . և ողբք իւր և աղօթք ափոփե-
ցին զնա : Յաղէտս ծանունս բարի է և օդ-
տակար խորհել ձիգ և յերկար ընդ երկին
և ընդ մահ . զի 'ի շիրմէ ելաննեն խորհուրդք
քաջալերութեան , և յերկնից իջանէ յոյս
սփոփանաց . նուազէ ահարկութիւն աղե-
տից՝ ուր երեխ կատարած նոցա . և ուր

նշմարի վարձնոցին՝ գողցես լինին սիրելի։
Ելիսաբեթ լոյր անտրտունջ. գոհանայր
զԱստուծոյ վասն բարերարութեանցն՝ զոր
եցոյց ցայնժամ յուղեօրութեան իւրում,
և ոչ իրաւունս համարէր տրտնջալ վասն
ոչ ևս յայնժամցուցանելոյ նորա։ Եր ինքն
դրեթէ յեղերս Թուպոլ գետոյ անտռաջ-
նորդ անօգնական, այլ զինեալ նովին ա-
րիութեամբ, նովին խորհրդով վառեալ, և
ասէր. Հայր իմ, մայր իմ, մի երկնչիք,
զուստր ձեր ոչ լքանի։ Այսու օրինակաւ
թուէր նմա քաջալերել զծնօղս իւր, որպէս
թէ մարթ էր նոցա զուշակել զմնալ իւր
անտէրունչ. և իբրև ահ զսիրա իւր պա-
տէր, կրկնէր ինքն և երեքինէր. Հայր իմ,
մայր իմ, ծնողք իմ. անուանքս այսոքիկ
փարատէին զերկիւղ նորա։ Եւ եղեալ
զճակատ իւր 'ի քրքիր հող զերեզմանին,
ասէր. Որ եսդ արդ յերանութեան, պարտ
էր ինչ կօրուսանել ինձ զքեզ, մինչչև աղ-
նուականի հօր իմոյ և բարեզութ մօր զո-
հացեալ զքէն վասն խնամոցգ՝ զոր արկեր
որբոյս հիբի. պարտ էր քեզ զրկիլ 'ի քեր-
իրութենէ ընդունելոյ զօրհնութիւնս նոցա։

Ի մերձենալ զիւերոյ՝ ստիպեալ Ելիսա-
բեթի մեկնել 'ի տխուր վայրէն, էառ զայ-
րախազ մի հատու, և առ յիշատակէ անցից
իւրոց քանդակեաց 'ի վերայ խաչին, որ
զգերեզմանաւ հանգուցելոյն կանգնեալ
կոյր, զբան մարդարէին. « Արդարն բար-
ձաւ, և ոչ ոք խորհի զնամանէ. » (Ես. Ֆէ.

1): Եւ ապա տուեալ զվերջին ողջյն իւր
հրաժարական՝ ել 'ի գերեզմանատեղւոյն,
և դարձաւ տրտմութեամբ 'ի սենեակն ա-
մայի 'ի պանդոկին: Ի վազիւ անդր յան-
կանել իւրում յուղի՝ ետ նմա պանդոկա-
պետն երիս ռուպիս, ասելով այնչափ ինչ
յաւելեալ 'ի ծախուց՝ 'ի քսակ ծերոյն: Ըն-
կալաւ զայն Ելիսաբեթ չնորհակալեօք,
փղձկեալ 'ի սրտէ՝ որպէս չնորհապարտ
պաշտպանին իւրում վասն գրամոցն, զորս
համարէր իբր 'ի յերկնից յղեալ, և ասէ.
Ո՛վ առաջնորդ իմ և պաշտպան, սէր քո
յերկարակեաց քան զքեզ՝ օգնէ ինձ, յոր-
ժամ ոչ ևս ես դու ընդ իս:

Բայց մենաւոր ընդ ուզին ոչ դադարէր
յարտասուաց. ամենայն ինչ նորոգէր զվիշտ
նորա, ամենայն ինչ տայր նմա զգալ զկա-
րեւորութիւն բարւոյն՝ զոր կորոյս: Եթէ 'ի
շինականաց ոք կամ յուղեորաց հացեցեալ
'ի նա հետաքրքիր հարցանէր ինչ, չէր առ
նմա պաշտպան իւր պատկառելի՝ որ սաս-
տէր ակն ածել. եթէ վաստակեալ ուրեք
նստէր, և սայլ ինչ ունայն ընդ այն անցա-
նէր, չիշխէր տալ նմա զկայ առնուլ թէ
գուցէ մերժումն կամ նախատինս ինչ կրես-
ցէ: Եւ դարձեալ չունելով ինչ աւելի քան
զերիս ռուպիս, ջանայր յամեցուցանել
զհարկ խնդրելոյ ողորմութիւն, և զրկէր
զանձն 'ի հանգստենէ և 'ի սփոփանաց՝ զոր
հացթայթէր նմա ծերունին յաճախ. վասն
որոյ և յաղքատին օթեւանս միշտ պատը-

պլարէր, շատացեալ ընդ անհարթ անկողինս և ընդ յոռեգոյն պլարէնս։ Այսու օրինակաւ յամբ ուղեղեալ, հաղիւ 'ի սկիզբն հոկտեմբերի կարաց հասանել 'ի Փաղան։

Ի բաղում աւուրց հետէ չնչէր հողմն հիւսիսոյ, և սառամանիք դիզացեալ յեղերս Վոլկայ՝ արգելուխն զգետն։ չէր ճարթ անցանել ընդ այն, բայց ըստ մասին ինչ հետի՛ ընդոստ ընդ հատուածս սառին գնալով, և ըստ մասին նաւակաւ։ Նաւաստիք իսկ սովորեալք 'ի վտանգս նաւարկելոյ ընդ այն, չիշխէին անցանել յայնկոյս առանց մեծի ինչ շահու։ և ոչ ոք յուղեղեաց տրկանէր զանձն 'ի վտանգ։ Ելիսարեթ միայն առանց խորհելոյ 'ի վտանգն՝ կամէր 'ի մի 'ի նաւաց անտի ելանել. այլ նաւավարք մերժեցին զնա բացէ 'ի բաց իբր խօթամիտ, և երդնուխն չթողուլ նմա անցանել ընդ գետն, չե բոլորովին պլազեալ։ Եհարց թէ քանի ժամանակ պարտ էր նմա սպասել. և նոքա ասեն. Ոչինչ նուազ քան զերկուս եօթնեակօ։ Յայնժամ եղ 'ի մտի անցանել ընդ գետն անյալաղ. և ասէ ցնոսա աղերսանօք. Խնդրեմ 'ի ձէնջ, վասն Աստուծոյ օգնեցէք ինձ անցանել ընդ գետդ. գամ ես յայնմ կուսէ թուպոլսրեայ զնալ 'ի Պետրոսլոլիս՝ խնդրել յինքնակալէն չնորհս վասն հօր խոյ, որ յաքսորս կաց 'ի Սիալերիա. և արծաթ այնչափ ինչ է առ իս, որի եթէ եղէց աստ զաւուրս հնդետա-

սան՝ չմնայ ինչ ինձ առ՚ի կարող լինելոց
յառաջ ես գնալ։ Ի բանից ասափ գորո-
վեալ մի ’ի նոցանէ, կալաւ զձեռանէ նորա
և ասէ. Ե՛կ, փորձեցաց ածել զքեզ.
դուստր բարի թուիս, երկիւղած յԱստու-
ծոյ և ծնօղասէր. օգնեսցեն քեզ երկինք։
Եւ մուծեալ զնա ’ի նաւ իւր, էած զնա մին-
չե ’ի մէջ գետոյն. ուստի և անդր չկարե-
լով նաւել, ’ի թիկնամէջս իւր ընկալաւ
զնա, և յեց ’ի մի ’ի թիոց՝ զնալով ընդ սա-
ռամանիս, եհաս անվտանգ յայնկոյս Վոլ-
կոյ, եգ զբեռն իւր յերկիր։ Ելիսաբեթ
շնորհակալեալ նմա ’ի բոլոր սրտէ գոհու-
թեամբ, կամէր ընձեռել ինչ նմա. այլ ’ի
բանալ նորա զբանին՝ տեսեալ նաւավարին
զի և ոչ ոռւալիք երեք էին ’ի նմա, ասէ.
Հեք դստրիկ, այգ են ամենայն գանձք քո,
և զովաւ համարիս հասանել ’ի Պետրոպո-
լիս. Նիկոլայոս Քիսոլոֆ ոչ ընկալցի ’ի քէն
և գանկ մի, քաւ լիցի. կամիմ մանաւանգ
յաւելուլ ինչ ’ի դոյն, և լիցի ինձ բարի և
որդւոց իմոց վեցեցունց։ Եւ էարկ ’ի նա
զբանիկ մի, և ’ի բաց գնաց՝ ձոյնելով. Տէր
պահեսցէ զքեզ դստրիկ։ Ելիսաբեթի ա-
ռեալ զգրամիկն, և հայեցեալ ընդ այն զո-
րովազին, ասէ. Պահեցից զսա հօր իմում,
որովէս զի տեսցէ զի ազօթք իւր լաելի եւ-
զեն, և ընդ իս է ինքն հոգւով, և ամենայն
ուրեք հսկէ ’ի վերայ իմ պաշտպանութիւն
իւր հայրենի։

Պայծառ էր տիւն և արեզներ, այլ ըն-

չէր հողմ'ի հիւսիսոյ ցրտասառոյց։ Ելի-
սաբեթի ժամս չորս անդադար ընթացեալ,
գտանէր վաստակեալ յոյժ։ և շգտեալ ու-
րեք օթեան, ապաստանեցաւ առ ոտամբ
բըրակի միոյ՝ զոր պատսպարէին'ի հողմոց
ժայռք թխատիսկը սեպացեալք։ Մերձ'ի
վայր անդր տարածանէր անտառ կաղ-
նեաց, զի անդ նախ յեղերս Վոլկայ սկսա-
նին երեել կաղնիք. վասն որոյ անծանօթք
էին օրիորդին, և թէպէտ կապտեալ ըստ
մասին 'ի վարսից, սակայն զարմանալիք
էին նմա տակաւին, այլ ոչ և սիրելիք. զի
զգացուցանէին նմա հանդերձ գեղեցկու-
թնամբն զհեռաւորութիւն իւր 'ի ծնօղաց
իւրոց ծառք եւրոպտկանիք. սիրելի ևս էր
նմա եղեին, բնակակից աքսորականաց,
ընդ որոյ հովանեաւ հանդչէին ծնօղք իւր։
Զայսոսիկ զմտաւ ածեալ՝ արտասուէր նա
և տոէր. Ո՛հ, Երբ իցէ ինձ տեսանել զնու-
սա վերստին. Երբ զբարբառ նոցա լսել, Երբ
զառնալ անդրէն անկանել 'ի զիրկս նոցա։
Եւ յասելն զայս՝ կայր բաղկատարած 'ի
քաղաքն կոյս 'ի Քազան, զորոյ նշմարէր
տակաւին զաշտարակս 'ի բացէ, և զզ զեակն
վաղեմի զիշխանացն Ակիւթացւոց, որ 'ի
վերոյ քաղաքին ամբառնայր 'ի ժայռս զոգ-
ցես իմն նկարէն՝ տեսիլ ահարկու։

Որ ինչ և ընդ առաջ լինէր օրիորդին
զճանապարհայն՝ ազգէր 'ի սիրա նորա
տիսրութիւն, հանգոյն իմն այնմ՝ զոր ազ-
գէին նմա աղէտք իւր։ Էր զի հանդիպէր

յանցաւորաց ողորմելեաց արկելոց դոցգ
զոցգ՝ ի շղթայս . յորոց կէսք գնացին գա-
տապարտեալ՝ ի մետաղս Ներշինսքեայ
վաստակել ցմահ . այլք՝ ի դաշտո Երբուց-
քեայ՝ ընակել յամայի եզերս Անկարայ գե-
տոյ . և էր զի պատահէր բազմութեան
գաղթականաց , որք՝ ի հրամանէ ինքնակա-
լին գնացին առնել մարդարնակ զնոր դաս-
տակերտն յելո սահմանաց ձենաստանի .
կէսք հետի գնացին , այլք չեղջակուտեալ՝ ի
սացլս ընդ արկեղս , ընդ բեռինս , ընդ ը-
նեարն և ընդ հաւկնեար : Ի սոստ ամե-
նեսին գթացր Ելիսաբեթ , թէպէտե աք-
սորէին վասն յանցանաց՝ որ այլուր թերեւս
մահապարտք լինէին : Խոկ՝ ի պատահել
ումեք յաքսորելոց , սուրհանդակաւ ատե-
նին վտարանդի վարելոց , որ ազնուական
կերպարանօքն յիշեցուցանէր զհացր իւր ,
յուզեցան գութք նորա մինչեւ ցարտասուս .
մատեաւ պատկառանօք առ հէքն , սփոփէր
զնա ըստ կարի իւրում . և օգնէր նմա , ոչ
արծաթով զոր չունէրն , այլ այնուիկ՝ որ
բազում անդամ՝ առաւել սփոփէ , և զոր
կարին խոկ չբաւոր կարէ տալ հաւասար
ճոխից , ասեմ խակ զգթութիւն : Ելիսաբեթի
այն միայն էին գանձք , նովաւ սփոփէր
զտաւապեալո՞ որոց հանգիպէրն զճանա-
պարհայն , և օգնականութեամբ ևեթ նո-
րին ուղեորէր այնուհետեւ : Զի՝ ի հաստ-
նել իւրում՝ ի Վլատիմիր քաղաք , չէր
մնացեալ առ նմա աւելի քան զոուսլի մի .

՚ի Սարարուլ քաղաքէ մինչեւ անդր՝ անցեալ էին ամիսք իբր երեք, և զթութեամբ շինականաց՝ որ ձրի տան զկաթն և զհաց՝ չեւ էր սպառեալ աղքատին գանձ նորա, այլ սկսանէր անդ սպակասել ՚ի սպառ։ Կօշիկը նորա հերձուեալ էին, ձորձք քըճքըճեալք ոչ ևս սպատսպարէին զնա ՚ի ցրտոյ՝ որ խոնարհեալ իսկ էր քան զերեսուն աստիճան ՚ի վայր, և օրըստօրէ զայրանայր։ Զիւնախաղաղ ծածկեալ էր երկիր երկոտնաշափ ՚ի թանձրութիւն։ Էր զի սպաղեալ ընդ օդս ձիւն՝ թուէր անձրև պաղլորակ, և խառնէր զերկին ընդ երկիր։ և էր դարձեալ զի հեղեղք ջուրց վիհս բանային առաջի նորա, կամ մըրբիկք հողմոց այնպէս բուռն շնչէին, զի առ ՚ի խոյս տոլ ՚ի հարուածոյ նոցին՝ հարկ լինէր օրիորդին փոս ՚ի ձեան անդ գործել, և սպատսպարել անդ՝ ածեալ զգլխով զկեղեանս եղենեաց, զորս կորզէր աջողակի՝ ուսեալ ՚ի բնակչաց Սիսկերիոյ։

Ի միում՝ աւուրց հողմ ուսուցիկ յարուցանէր զձիւն ընդ օդս, և զործէր մառախուղ այնպիսի թանձր և խաւարային, զի ՚ի քայլափոխս իւրաքանչիւր զեղեեալ օրիորդին, և ոչ կարելով նշմարել զուղին՝ հարկեցաւ զկայ առնուլ ընդ ժայռիւ ուրեք մեծաւ, հաստ զթիկունս արարեալ յայն՝ զղէմ ունել մըրկին, որ զամենայն ինչ տապալէր շուրջանակի։ Եւ մինչդեռ կայր անդ անշարժ զվսակոր, թուէր նմա

լսել 'ի մօտոյ ձայն ինչ աղօտ, և յոյս ա-
ռեալ գտանելոյ ապաւէն, յայն կողմն յա-
ռաջեաց զնալով 'ի սող, և տեսանէ սայլ
մի կործանեալ և խորտակեալ, և սուզ
ինչ անտի 'ի բացէ հիւղ մի։ Մատուցեալ
անդր, բախեաց զդուռնն ասպնջական։
Եկն եթաց կին մի պառաւ, և զթացեալ 'ի
վշտագին օրիորդն, ասէ. Հէք դստրիկ,
ուստի գաս միայնակ յայդմ հասակի՝ ցըր-
տասառոյց ծածկեալ 'ի ձեանց։ Պատաս-
խանի ետ օրիորդն, որպէս սովոր էր. Գամ
յայնմ կուսէ թոսլուսքեայ, զնալ 'ի Պե-
տրոսկօլիս, խնդրել չնորհս հօր իմում յին-
քնակալէն։ Յայն բան՝ այր ոմն որ անդ
բազմեալ կայր յափկիցս խռնարհեալ, 'ի
վեր էառ զզւուխ իւր, հայեցաւ հիաց-
մամբ յօրիորդն, և ասէ. Զի՞ ասես. գո՞ւ 'ի
Ախալերիոյ եկեալ այսր յայդ տիս, յայդ ա-
ղէտս, 'ի բուքս ձմերայնոյ, խնդրել չնորհս
հօր քում։ ո՞հ, թերեւ և դստրիկ իմ հէք
առնէր ինձ զդոյն։ այլ խլեցին զնա 'ի ցըր-
կաց իմոց, և ոչ զիտաց ուր զիս ածէին, և
չկարէ օգնել ինձ. ոչ ևս լիցի ինձ տեսա-
նել զնա, և մեռայց այսպէս։ չէ և չէ իսկ
մարթ հեռի յորդւոյ կեալ։ Զդողանի հա-
րաւ Ելիսարեթ, և կարճեալ դրանս նորա՝
ասէ սրտառուչ։ Տէր իմ, թուի ինձ զի
մարթ իցէ կեալ առ ժամանակ մի հեռի
յորդւոյ։ Եւ յառաջ ածեալ աքսորականին
զբանսն, ասէ։ Եւ քանզի զիտեմ արդ
զլայր աքսորանաց իմոց, մարթ է ինձ զե-

կուցանել զայն զստեր իմում։ դրեցի իսկ
առ նա, և սուրհանդակն, որոյ է տապա-
լեալդ սայլ, և գառնայ ինքն՝ի Ոփիա՝ ուր
է գուստը իմ, յանձն առնոյր ածել զգիր
իմ, եթէ ունէի դոյզն ինչ առ՝ի տալ նմա
վարձ. այլ չիք իմ և ոչ զանկ մի, զամե-
նայն բարձին յինէն անողորմք։ Յայնժամ
օրիորդին հանեալ զոռւսլին յաւելեալ՝ի
քսակէ հանգուցելոյն, մատոյց զայն նմա
ամաչելով զի շունէր աւելի ինչ տալ, և
բեկրեկելով ձայնիւ առէ. Յաւեսցէ ինչ
այս։ Իսկ նորա սեղմեալ զաջն՝ որ մատու-
ցանէր գոյիւ չափ զկեանս իւր, ընթացաւ
տալ սուրհանդակին զլումայն այրւոյն. և
սուրհանդակն գոհ եղեւ ընդ այն. զի Աս-
տուծոյ զնուէրն զայն օրհնեալ, երեւցոյց
նմա որպէս և էրն իսկ մեծ և առատա-
պարզե, առ՝ի բարձուցանել զգուստը առ
հայր, երանաւետել զազդատոհմ մի, և
պտղաբերել արդիւնս արժանաւորս սրտին՝
որ նուիրեացն զայն։

Ի ցածնուլ մրրկին՝ կամելով Ելիսաբեթի
զնալ զճանապարհ իւր, զիրկս էարկ պա-
ռաւոյն՝ որոյ խնամարկեալ էր նմա որպէս
զստեր. և ասէ ցնա՝ի մրմունջ անլսելի
աքսորականին. Զունիմ ինչ հատուցանել
քեզ, բայց զօրհնութիւնս ծնօղաց իմոց.
այսորիկ են իմ արդ ամենայն գոյք։ Իսկ
պառաւն առէ բարձրաձայն։ Եւ զինչ. ե-
տուր ուրեմն դմա որ ինչ էրն քո, հէք
զստրիկ։ Եւ իբրև օրիորդն յամօթոյ զաշս

՚ի վայր անկեալ կացր, անկաւ աքսորականն
՚ի ծունկս առաջի նորա, և զձեռս ՚ի վեր
ամբարձեալ, ասէ. Հրեշտակդ՝ որ ետուր
ինձ զամենայն ինչ գրո, զի՞նչ առնել իցէ
ինձ վասն քո։ Կայր անդ կտրոց մի ՚ի վե-
րայ սեղանոյն, էառ զայն Ելիսարեթ, և
հատեալ զիսակ ՚ի վարսիցն ետ նմա զայն,
և ասէ. Քանզի ՚ի Սիպերիա գնաս, տէր
իմ, ՚ի տեսանել քո անդ զքաղաքապետն
Թոպոլսքեայ՝ աղաչեմ տալ նմա զայս, և
ասել. Զոր Ելիսարեթ առ ծնօղս իւր առա-
քէ, հաճեսցի յղել առ նոսա, զի զիտաս-
ցեն թէ տակաւին գուտոր իւրեանց կեն-
դանի է։ Նա երդուաւ առնել ըստ բանի
օրիորդին, և յաւել. Ո՞հ, եթէ յանապատա
անդ աքսորանաց իմոց լիցի ինձ չափ ինչ
աղատութիւն, զիտացից գտանել զծնօղս
քո, և պատմել դոցտ որ ինչ դու արարեր
ինձ այսօր։ Մեծ էր սրտին Ելիսարեթի
քան զպարգե արքունական գահու յոյս
ափոխանացն, զոր խոստանայր այրն մո-
տուցոնել ծնօղաց իւրոց։ Զէր նորա ոչ
ևս ինչ բաց ՚ի փոքրիկ զրամոյն, զոր ՚ի
նաւաստոյն Վոլկաց ընկալեալն էր. սակայն
կարէր և համարել զանձն մեծատուն, զի
ժառանզէր զճշմարիտն մեծութիւն՝ զոր
չկարեն զանձք ևեթ տալ, պարզեաւն զոր
ետ՝ ուրախացոյց նա զտառապեալն հայր,
և զզստերն որբացելոյ եհատ զարտա-
սուս։ Աչա որ ինչ պտղաբերել կարող է
միակ ոռւպլի ՚ի ձեռս ողորմածի։

Ի Վլտափիմիր քաղաքէ մինչ 'ի Փոքրով
զիւղ արքունի՛ երկիրն զնստագոյն ճախ-
ճախուտ է և անտառախիտ յաղգի ազգի
ծառոց վայրենեաց, որք թէպէտե հաճոյ
աշաց յամարայնի՝ այլ յաճախ ապաւէն են
աւազակաց. իսկ 'ի ձմերայնի նուազ է
վտանգ, զի հատեալ 'ի մայրեորաց և մեր-
կացեալ 'ի սաղարթուց՝ չտան նոցա տեղի
թաքստի: Աւայն Ելիսաբեթ լոէր զճա-
նապարհայն աւազակութիւնս գործեցեալս
անգ, որ ահացուցանէին արդեօք զնա՝ եւ-
թէ ունէր ինչ առ իւր արծաթ. այլ զօրա-
պահիկն իսկ կարօտ մուրանալոյ, զերծ
թուէր յամենայն երկիւղէ. և վահանաւ
չքաւորութեանն ծածկեալ, յուսացր ան-
ցանել անվտանգ ընդ անտառն: Վերասո
ինչ այսր քան զՓոքրով աւերեալ էր մրըր-
կին զարահետն, և ուղեորաց առ 'ի Մոս-
կով հարկ էր առնել շրջան ընդ ճախճա-
խուտս, զօրս գործէ Վոլկա. այլ պաղ
թանձր ծածկեալ զայնոսիկ՝ առնէր գնալի
որպէս տրամերկիր: Ելիսաբեթ ըստ օրի-
նակի այլոց կալաւ զայն ուղի, և զնացր
ընդ անապատն սառնեղէն. այլ առ 'ի չգոյէ
անգ շաւղի՝ մոլորեալ, խրեցաւ 'ի տրգ-
մուտս, ուստի բաղում ճգամք եղենմա 'ի
բլրաձե ուրեք երկիր ելանել: Ոնդ աղմա-
շաղախ և վաստակաբեկ բազմեալ 'ի վէմ
մի, ելոյծ զկօշիկս յոտից՝ ցամաքեցուցա-
նել յարեու, որ ծագէր յայնժամ' անաղօտ:
Անապատ էր վայրն. չերևէին անդ հետք

բնակութեան, ոչ ոք անցանէր ընդ այն, և
ոչ շշունչ լինէր անդ լսելի: Դիտաց Ելի-
սաբեթ զի զարտուղի ՚ի բաց անկեալ էր
յարահետ ճանապարհէն, և լրաւ արիու-
թիւն նորա. տեսանէր յետկուսէ զծահիճո՞
ընդ որս անցեալն էր, և ՚ի բացէ անտառ
անոլորտ՝ որոյ ոչ նշմարէր եզր: Տիւն տա-
րաժամէր, և պարտասեալ ինքն ՚ի վաս-
տակոց՝ յարուցեալ այսր անգր ընթանացը
գտանել ուրեք ապաւէն կամ օդնական,
այլ ՚ի զուր, ոչ որ ուրեք, և ոչ ձայն ինչ
ուստեք լսելի լինէր. այլ բարբառոյ մարդ-
կեղինի թուէր լնուլ զսիրտ նորա ցնծու-
թեամբ: Եւ ահա ձայնը յանկարծակի հըն-
չեցին, և հետ ընդ հետ ելանէին արք յան-
տառէն. ընթացաւ առ նոսա յուսապա-
տար. այլ ՚ի մօտել առ նոսա՝ խնդութիւն
նորա զարձաւ յարհաւիրս: Կերպարանք
նոցա վայրենի և զէմք դժնեայ՝ սոսկումն
ածէին նմա տուաւել քան զմիայնութիւնն
յորում էր. յուշ լինէր նմա որ ինչ լուեալն
էր զեզեռնազործութենէ յելուզակաց ՚ի
կողմանան յայնոսիկ, և երկուցեալ թէ գու-
ցէ պատուհասէր Այսուած զյանգուզն
վստահութիւն իւր, անկաւ ՚ի ծունկո՝ խո-
նարհեալ առաջի ոզորմութեան նորա: Յա-
ռաջ մատեան աւազակքն, զկայ առին առ
նմա, և յուսեալ ՚ի նա, ասեն. Դու ուստի
գտա, զի խնդրես աստ: Զաշս ՚ի վայր ար-
կեալ օրիորդն, և զգողանի հարեալ, ասէ.
Յայնմ կողմանէ թոսպութեայ գամ, երթալ

Խնդրել յինքնակալէն շնորհս հօր իմում։
Եւ յաւել՝ զի փոքր միւս ևս և կորնչէր 'ի
ճահիճս անդ . և զի յետ վայրիկ մի զօրա-
նալոյ՝ գնայր խնդրել իւր ուրեք ապաւէն։
Հիացեալ կացին արքն, և հետազօտէին և
ևս . կամէին զիտել մրչափ ինչ ունէր ար-
ծաթ վասն բազում այնչափ երկայն ու-
ղեորութեանն . և իբրեւ հանեալ նորա
զդրամիին՝ զոր 'ի նաւաստոյն Վոլկայ ըն-
կալեալն էր՝ եցոյց նոցա , ասեն . Եւ շոնիս
ինչ այլ : Օրիորդն ասէ . Եւ ոչինչ : Հայէին
ընդ մի մեանս հուղկահարքն անգութ և ան-
կարեկիր , սովորութեամբ եղեսնազործու-
թեանն խստասրտեալ . սակայն և յապուշ
հարեալ չիարէին հաւատալ աշացն , զի
զերաշխարհիկ իմն թուէր նոցա այն , և
համարէին 'ի վերնական անծանօթ զօրու-
թենէ պաշտպանեալ զօրիորդն . և ակն
ածեալ 'ի նմանէ չիշխելով գործել ինչ նմա-
շար , այլ և ոչ բարի , 'ի բաց կացին 'ի նմա-
նէ ասելով ցիրեարս . Թողցուք զգա , մի
վեասեսցուք դմա , զի արդարեւ Աստուած
ընդ դմա է :

Յարեաւ Ելիսաբեթ , և փութացեալ
յետս 'ի փախուստ՝ եմուտ յանասան . և
սուղ ինչ յառաջ մատուցեալ , գտաւ 'ի
կիցս քառից ուղեաց . ուր 'ի միում յան-
կեանցն էր մատուսն նուիրեալ Տիրամօրն ,
և սիւն 'ի վերայ կանգնեալ՝ ցուցանէր զքա-
զաքս , յորս մէն մի յուղեաց անտի գնա-
յին : Գիտաց օրիորդն զփրկութիւն իւր , և

անկեալ յերկիր՝ գոհանացը դժեառնէ. և
ոչ սխալեցին չարագործքն ասել, զի Աս-
տուած էր ընդ նմա: Ոչ ևս թուէր նա այ-
նուհետեւ վաստակեալ, զի զօրացոյց զնա
յոց, և գնացը թեթեընթաց ընդ ճանա-
պարհ Փոքրովայ. և հասեալ վերստին յեզր
Վոկայ, որ գործէ անկիւն առ քաղաքաւն,
և թանայ զորմունս ազքատին միոյ կու-
սաստանի, փութացաւ բախեաց զգուռնն
հիւրընկալ, սկատմեաց զտառապանս իւր,
և խնդրեաց ապաստան: Ծնկալան զնա
անդէն քորքն հիւրասիրաբար որպէս զմի
՚ի քերց. և շուրջ պատեալ օրիորդն յերկ-
նակրօն և ՚ի սրբատուն քերց անտի, հա-
մարէր վայրիկ մի կալ ընդ մօր իւրում:
Պարզ և խոնարհ պատմութիւն անցիցն՝ ա-
րարեալ յօրիորդէն, եղե. ՚ի շինութիւն ա-
մենացն ուխտին. ոչ զագարէին քորքն բա-
րեգութք ՚ի զարմանալոյ ընդ առաքինու-
թիւն նորա՝ որոյ այնչափ ճգունս կրեալ, և
այնչափ փորձանաց տարեալ, և բան մի
արտունջ չհանէր ՚ի շրթանցն: Յանկալի
էր կուսանաց հայթհայթել զծախս իսկ ու-
ղեորութեան նորա. այլ մենաստան նո-
ցա չքաւոր էր յոյժ, չէին նոցա հասք, և
ինքեանք իսկ կէին յոզօրմութենէ: Սակայն
և ոչ հանդուրժեալ նոցա յուզարկել զնա
պատառաստուն հանդերձիւքն և հերձո-
տեալ կօշկօք, զգեցուցին զնա ձորձովք իւ-
րեանց: Կամէր օրիորդն հրաժարել ՚ի
պարզեաց նոցա, զի ՚ի կարեորաց իւ-

բեանց զրկէին քորքն բարեգութք վասն օգնելոյ նմա. այլ նոքա զորմն և զյարկ մինաստանին ցուցեալ, ասէին. Գոյ մեզ սլատուպարան, այլ դու անպատսպար ես ամենեին. քո է սակաւիկս այս՝ զոր ու նիմք, դու չքաւորագոյն քան զմեղ ես.

Ուր ուրեմն եհաս Ելփատրեթ յարահետն, որ ածէ 'ի Մոսկով. և զարմանայր ընդ յոյզս ամբոխին՝ զոր տեսանէր, ընդ բազմութիւն կառաց և անդրուվարաց, արանց և կանանց, և ամենայն ազգի ազգի մարդկան՝ որ 'ի մայրաքաղաք անդր իբր առուիւ գնացին. և որշափ մերձենայր անդր, յաւելոյր ամբոխ բազմութեանն. ի գեօղ ուրեմն յերեկոյին զկաց էառ, որ էին տունք առհասարակ լի ուղեորօք. և այնչափ ծանունք էին վարձք բնակութեան, զի հէք օրիորդին՝ որոյ չգոյր ինչ առ 'ի տակ՝ յոյժ դժուարին եղեւ գտանել օթեան: Ո՛հ, քանի՞ արտասուս 'ի սիրտ իւր ցածոյց՝ մինչեւ կարաց գտանել արհամարհոտ իմն կարեկցութիւն, ճաշ անուտելի, և գոյզն գլխոյ դադար՝ զերծ 'ի ձիւնաբերաց և 'ի մրրկաց: Այլ ոչ երբէք վհատեցաւ, 'ի մտի ունելով միշտ՝ զի տեսանէր Տէր գտառապանս իւր, զորս առ սէր ծնօղացն կրէր. և ոչ բարձրամտեաց երբէք, համարեալ յանկեղծ սրտէ՝ ոչ աւելի ինչ քան զալարտս իւր գործել վշտակրութեամբքն վասն ծնօղաց իւրոց, և ծնօղասէր սրտին ախործեալ իմն ընդ վշտակրել իւր վասն նոցա:

Եւ ահա յանկարծ գանչէր զանգականին
ամենուստ, և յամենայն կողմանց հնչէր
անուն ինքնակալին. թնդիւնք հրետից որո-
տացին 'ի պարսպաց մայրաքաղաքին ահար-
կուք նմին, զի չէր երբէք բոմբիւն այնպիսի
ընդ ունկն նորա բախեալ. Հարցանէր
զվասն էրն երկիւղիւ՝ որոց անդ 'ի գրատա
ճոխս կային զկառօք, որ կործան անկեալ
գնէր: 'Նոքա ասեն. ինքնակալն 'ի քաղաք
այսր մտանէ: Օրիորդն ասէ. Եւ ո՞րպէս.
ո՞չ 'ի Պետրոպոլիս ինքնակալն բնակէ: 'Նո-
քա ողորմեալ 'ի տգիտութիւն նորա, ա-
սեն. Հէք օրիորդ, չղիտիցես զի Ազեք-
սանդր գայ այսր առնել զհանդէս թագա-
ւորելոց իւրոյ: Յայնժամ օրիորդն ձեռնա-
մածեալ ինգութեամք զի յերկնից տնօրի-
նէր նմա գալ անդ ինքնակալին, յորոյ 'ի ձե-
ռին էր բախտ ծնօղաց իւրոց, և հասանել
յաւուրա աշխարհօրէնուրախութեան յորս
լուն խստութիւն և արդարութիւն 'ի սիրո
թագաւորաց, առ 'ի լսելի առնել նոցա
զգթութիւն միայն. և գարձուցեալ զաշս
իւր յերկիր աքսորանաց ծնօղաց իւրոց,
զոչէր. Ծնօղք իմ, ընդէք միայնակ վայե-
լեմ 'ի յոյս, ընդէք ձայն ուրախութեան
դստեր ձերոյ շկարէ հասանել յունկն ձեր:

Յամին 1801 եմուտ նա 'ի մայրաքաղաքն
մեծ 'ի Մոսկով, և համարէր վախճան լեալ
վշտաց իւրոց, ոչ կարծելով զի այլ ևս
աղէտք պատրաստեալ կային նմա: Ի մատ-
չելն 'ի քաղաքամէջ անդր՝ ետես ապա-

բանս հոյակապս, զարդարեալս արքունական ճոխութեամբ, և առ նորօք հիւղս ծխամածս անպատսպարս 'ի հողմոց. ետես փողոցս բազմամբոխս, մինչև հաղիւ կարող լինել նմա հերձանել զամբոխն որ նեղէրն զնա և խթէր շուրջանակի արմկու: Առ ինչ անտի 'ի բացէ եղիտ անտառս և մարգագետինս, որպէս զի կարծել զանձն 'ի դաշտավայրի մեծի. զկայ էառ վայրիկ մի յընդարձակ ճեմելիս ծառազարդս, ուր զգնայր բազմութիւն յոյժ մնալով հանդիսին. երթեւեկէին կառք շառաչմամբ մեծաւ ընդ ամենայն կողմանս արշաւասոյր: Հնչէր զանդակն մեծ կաթողիկէին անլոելի, և ամենայն ուստեք քաղաքին այլ զանդականին տային արձագանդ. և թնդիւնք հրետից, որ երբէք երբէք արձակէին, հաղիւ լինէին լսելի 'ի շոխնդն ձայնից՝ որովք հնչէր քաղաքն ընդարձակ: Մանաւանդ 'ի մօտել 'ի հրասպարակն կրեմելեան՝ երթայր և յաւելոյր ամբոխն և աղմուկ. խարոյկ բոցածաւ ամենայն ուրեք բորբոքէր: Ելիսարեթ նստաւ անդ մեկուսի զգուշութեամբ, ցըրտահարեալ եւ պարտասեալ զօրն ցերեկ յոտին, և ուրախութիւն նորա այգուն փոխեալ 'ի արտամութիւն. զի շրջեալ նորա ընդ անթիւ փողոցս քաղաքին և տեսեալ ասպարանս բազումս հոյակապս, և ոչ ուրեք եղիտ իւր դադար. զի տեսեալ բազմութիւն յոյժ յամենայն ազգաց, չեղիտ զոք 'ի նոցանէ իւր օդնական. զի լուսեալ էր անդ

հարցանելոյ բազմաց գճանապարհ տանց իւրեանց, և զայրանալոյ ընդ մոլորել իւրեանց. և նախանձեալ ընդ բախտ նոցա՝ ասէր 'ի մտի. Երանի՛ ոյք խնդրեն զբնակութիւն իւրեանց. եղուկ այնմ' որոյ շիք տեղի խնդրելոյ, և չիցէ ուստեք մոլորեալ:

Մերձննայր գիշերն, զայրանայր ցուրտն, յայգուէ հետէ չէր ինչ օրիորդին առեալ կերակուր, և չգիտէր զինչ առնել: Նկատէր զդէմն ամենեցուն թէ իցէ՛ ինչ յուսալ յումերէ ողորմութիւն. այլ ոչ ոք յայնցանէ՛ յորո պշուցեալ հայէր առ կարօտութեան, դառնայր հայել յինքն՝ անկարօտ ինքեան: Փորձէր բազիւել զդրունս յոռեգոյն իջեանաց, և ամենայն ուստեք մերժէր 'ի բաց. զի յոյս առաւելագոյն շահից յաւուրս հանդիսին՝ փակէր զգութ աղքատագունիցն իսկ 'ի պանդոկապետաց. զի ուր հասանէ ումեր ճոխանալ, առաւել կծկէ զծեռն 'ի տալոյ: Դարձաւ եկն նստաւ առ մեծի խարուկին 'ի Կրեմելեան հրանդարակի. լայր լոելեայն՝ թաղծեալ տրտմութեամբ, և ոչ կարէր ճաշակել զպատառ իսկ հային՝ զոր պառաւոյ ուրուք տուեալ էր նմա կարեկցաբար: Յայն թշուառութիւն տեսանէր զանձն հասեալ՝ զի հարկաւորէր աջ կարկառել անցաւորաց 'ի մոյր, որոց մարթ էր տալ նմա զոյզն ինչ ողորմութիւն, թէպէտ և անկարեկիր՝ այլ գէթ առանց մերժելոյ զնա արհամարհանօք: Զգացումն աղնուականութեան արգելոյր

զնա 'ի մուրանալոյ, այլ ստիպէր 'ի ցրտոյն բռնութենէ, որով վտանգէին կեանք իւր՝ զոր ոչ իւր համարէր, կալով զցայդ 'ի բացի: Վասն որոյ 'ի բաց եղեալ զազնուախու հութիւն, զմի 'ի ձեռաց ածեալ զերեսօք, և կարկառեալ զմիւսն առ որ նախ ընդ այն անցանէր, ասէ. Առ սէր հօր քո՛ որ սիրէն զքեզ, առ սէր մօր քո՛ որ ծնաւն զքեզ, տուր ինձ գտանել խշտեակ 'ի գիշերիս: Այրն, յորմէ խնդրէր ողորմութիւն, 'ի նշոյլ խարուկին զննեալ զգէմս նորա՝ ասէ. Ի յոռի արուեստ ձեռն արկեալ է քո, դուստր, չկարիցես վաստակել. 'ի քում յայդմ հասակի պարտ է շահել զկեանս. մուրացիկք անհաճոյ են ինձ. Տէր տացէ քեզ: Ասաց, և 'ի բաց էանց:

Եղելի օրիորդին ամբարձեալ զտչս 'ի վեր՝ որպէս թէ յերկնից խնդրելով օգնութիւն և քաջալերեալ 'ի խրախոյս՝ զոր զգաց 'ի սրտի, համարձակեցաւ խնդրել և յայլոց անցաւորաց: Կէսք անցին գնացին անլուր, այլք ետուն նմա խուն ինչ՝ որ չբաւէր 'ի պէտս նորա: Գիշերն յառաջ խաղացր, ամբոխն լուծանէր, չիջանէին խարոյկք, պահանորդք դրան ապարանիցն՝ որ երթեեկէին 'ի հրապարակին, մատեան առ օրիորդն և ասեն. Զի՞ է քո աստ: Նա 'ի սաստէ վայրագ զօրականին ահաբեկեալ, սկսաւ լալ առանց կարող լինելոյ պատասխանել և ոչ ինչ: Նոքա ոչ ինչ զթացեալ յարտասուս նորա, չուրջ եղեն զնովաւ

յանդուգն լրբութեամբ, և միւսանգամ ա-
սեն. Զի՞ կաս աստ: Պատասխանի ետ օ-
րիորդն դողալով. Գամ յայնմ կողմանէ
թոպոլսքեայ՝ խնդրել յինքնակալէն շնորհս
հօր իմում. Հետի մինչեւ ցայսը եկի. չքա-
ւոր եմ, և ոչ ոք ուրեք զիս ընդունի: Վըր-
քիջ բարձին զինուորքն՝ ստայօդ դբանս
նորա համարեալ. իսկ անմեղ օրիորդն
խոռվեալ՝ խոյս կամէր տալ, այլ ոչ թողին
նմա՝ կալեալ զնա անդ բոնի. և գոչէր 'ի
խոր տրտմութենէ. Աստուած իմ, հայր իմ,
հասէք ինձ յօգնութիւն, ընդէ՞ր թողէք
զէէքս զիս զԵլիսարեթ: Ի ճայն աղաղակին
հասեալ անդր արք ոմանք, բողոք բարձին
ընդդէմ բոնութեան զօրականին: Իսկ օ-
րիորդն ձեռս 'ի վեր ամբարձեալ, ասէր.
Վկայ են ինձ երկինք՝ զի ոչ ստեմ. գամ ես
յայնմ կողմանէ թոպոլսքեայ՝ խնդրել
շնորհս հօր իմում. վերծուցէք զիս, փրկե-
ցէք զիս, զի մի չեւ ընկալեալ զշնորհս՝ մե-
ռայց: Ընդ այսպիսի բանս օրիորդին՝ յու-
ղեցան կութք ամեննեցուն, և յառաջ մա-
տեան բազումք օգնել նմա, և մի 'ի նոցանէ
տաէ ցզօրականն. Ես ինքն ընկալսց զդա
'ի պանդոկի իմում, որ է 'ի հրապարակիս
առընթեր սրբոյն Բարսղի եկեղեցւոյն.
թուի ինձ օրիորդ համեստ, թողէք զդա
ընդ իս: Եւ զօրականին յետոյ ուրեմն
շարժեալ 'ի գութ, թողին զնա և մեկնե-
ցան 'ի բաց. յայնժամ օրիորդն փարեալ
զծնդովքն բարերարին՝ գոհանայր. իսկ սյրն

ածեալ զնա՝ ի պանդոկին՝ որ մերձ էր անզր,
ասէ ցնա. Զիք իմ և ոչ սենեակ մի տալ
քեզ, վարձեալ է ամենայն. այլ յայսմեեթ
գիշերի ընկալցի զբեզ կին իմ՝ ի սենեակ
իւր. բարեգութ է նա, և մտադիւր վասն
քո յանձն առցէ զնեղութիւն։ Եւ գնայր Ե-
լիսաբեթ գողալով զհետ նորա անմռունչ.
Եմոյծ զնա այրն՝ ի սենեակ մի խոնարհ,
ուր էր կին նորա մանկամարդ նստեալ առ
թոնրով մանկիկ՝ ի գրկի. որ՝ ի մտանել
նոցա՝ ի ներքս՝ յոտն եկաց։ Եւ պատմէր
նմա այրն՝ յորմէ վտանգէ զերծուցեալ ա-
ծէր զհէք օրիորդն, խոստանալով զհիւրըն-
կալութիւն նորա. և կինն հաստատեաց
զխոստումն, և կալեալ զձեռանէ օրիոր-
դին զուարթութեամբ և սիրով ասէ. Հէք
դստրիկ. իբր գունատեալ է և խռովեալ.
այլ մի հոգար, խնամեսցուք մեք զքեզ.
բայց անսա ինձ, և մի ևս այդչափ տարա-
ժամեր արտաքոյ.՝ ի քաղաքս մեծամեծս չէ
պարտ՝ ի քում յայդմ հասակի կալ օրիոր-
դի ցայս ժամ՝ ի փողոցի։ Պատասխանի ետ
Ելիսաբեթ՝ զի չէր իւր գտեալ ուրեք
օթեան, փակեալ էին ամենայն դրունք
վասն իւր. խոստովան եղեւ զի չքաւոր էր,
և պատմեաց առանց ամօթոյ որպէս ու-
ղեորեալն էր։ Իլուր պատմութեան օրիոր-
դին՝ լայր կինն, ելաց և այր նորա, և ոչ
թերահաւատեցին ընդ բանս նորա, որպէս
և արտասուք իւրեանց վկայէին. զի դժուա-
րաւ՝ ի մասինս յայսմիկ պատրի սինքորն.

կեղծիք ճոխաբանք ոչ գնան առ նոսա,
ճշմարտութիւն և թշ շարժէ զսիրտ նոցա:

Ի վախճանել օրիորդին զբանս իւր, Յա-
կոր Ռոսսի՛ զի այս անուն էր պանդոկա-
պետին, ասէ ցնա. Զիք իմ կարողութիւն
՚ի քաղաքիս, այլ որ ինչ կարեմս՝ արարից
վասն քո որպէս անձին, մի երկմտեր: Աեղ-
մեաց կինն զաջ առն իւրոյ առ խնդու-
թեան, և եհարց ցԵլիսաբեթ՝ թէ Էր ոք
ծանօթն նորին առ ՚ի յանդիման առնել զնա
ինքնակալին: Օրիորդն ասէ. Եւ ոչ ոք:
Քանզի երկնչէր անուանել զպատանին
Ամոլոֆ, թէ գուցէ ՚ի վտանգ արկցէ զնա.
և գարձեալ, զի զո՞ր նպաստ կարէր ընդու-
նել ՚ի նմանէ՝ որ հեռի ՚ի Վիւնիա կայր:
Զէ ինչ փոյթ, ասէ կինն. բարութիւն և
թշուառութիւն առ մեծանձն մերոյ ինքնա-
կալին հզօր ընծայականք են, և վրիպես-
ցին... ՚ի վերայ էած Յակոր. Այո ամե-
նիին. ինքնակալն Ալեքսանդր ընդունելոց
է վաղիւ թագ յեկեղեցւոջ Վերափոխման.
գտջիր անդր յանցանել իւրում, և անկեալ
յոտս նորա՝ խնդրեսցես շնորհս հօր քում.
ևս իսկ եկից ընդ քեզ և օգնեցից: Յայն-
ժամ Ելիսաբեթի շնորհապարտ գոհու-
թեամք կալեալ զձեռանէ նորա, գոչէր.
Ասանջականք իմ բարերարք, Տէր լուիցէ
ձեղ, օրհնեսցեն զձեղ ծնօդք իմ. գուք ինք-
նին ընկերեսջիք ինձ և օգնեսջիք, և ածջիք
դիս առ ոտս ինքնակալին... իցէ թէ և ա-
կանատես լինիցիք բարեբաստութեան իմոց

այնպիսւոյ, քան զոր մեծագոյն ինչ ոչ է
մարթ ունել մահկանացուի. եթէ լիցի ինձ
ընդունել շնորհս հօր իմում, և աւետել
զայն նմա, տեսանել զցնծութիւն նորա և
զմօր իմոյ . . . Եւ ոչ կարաց կատարել զբանս
իւր, զի պատկեր մեծի երջանկութեանն
գողցես իմն անցուսալի առնէր նմա զայն.
թուէր նմա անարժոն գոլ այնպիսւոյ եր-
ջանկութեան: Հիւրընկալք նորա քաջալե-
րէին զնա 'ի յոյս՝ դրուատեօք բարեգթու-
թեանն Ալեքսանդրի, պատմելով զամե-
նայն բարերարութիւնսնորա, և զբերկրու-
թիւննորա 'ի բարերարել: Զմայլմամբ լսէր
նոցա Ելիսաբեթ, և ցանկալի իսկ էր նմա
զգիշերն 'ի բուն լսել նոցա, այլ անագան
էր ժամն. Հիւրընկալք նորա կամէին նմա
հանգչել փոքր մի՛ առ 'ի կարող լինելոց 'ի
վազիւ անդր 'ի տոկ վաստակոցն: Եւ մեկ-
նեալ Յակոբայ 'ի վերնայարկ տանն 'ի խորշ
մի, կին նորա ընկալաւ զԵլիսաբեթ առ
իւր 'ի մահճին: Բայց Ելիսաբեթ չկարէր
փակել ընդ երկար զաչս իւր 'ի քուն. սիրտ
նորա յուզեալ էր յոյժ և 'ի փղձուկ հա-
րեալ. զոհութիւն մատուցանէր Աստուծոյ
վասն ամենայնի, ևս և յաղագս ծանունց
վշտաց իւրոց՝ որովք հանդիսալեան էր այն-
պիսում ընդունելութեան, և ասէր. Եթէ
նուազ էի հէք, ոչ յուզէին ընդ իս գութք
հիւրընկալուին իմոյ: Եւ քուն իսկ անկեալ
զարտեանամբք նորին՝ ոչ երարձ 'ի նմանէ
զբարեբաստութեանն զգացումն. զի ե-

րազք ախորժականք 'ի կերպս կերպս ընծայէին նմա : Անք դհայր իւր թուէր նմա տեսանել, և մերթ դիսանգաղատելի կերպարանս մօրն . էր զի թուէր նմա զինքնակալին ինքեան լսել զբարբառ, և էր զի այլ իմն պատկեր երեեալ միգապատ՝ չներէր տեսանել յստակ զտիպս կերպարանաց նորա, և ոչ 'ի միտ առնուլ զկիրս՝ զոր 'ի սիրտ իւր զարթուցանէր :

Ի վազիւ անդր թնդիւնք հրետից անընդհատք վասն կենաց ինքնակալին, դափիւնք թմքկաց և աղաղակ ցնծութեան համօրէն ժողովրդեան աւետաւորէին զօր հանդիսին : Ելիսաբեթ զհիւրընկալուի կը նոջն արկեալ զանձամք զհանգերձս 'ի փոխ, և զբարերարի առնն կալեալ զձեռանէ, խառն 'ի խուսան ընդ եկաւորս զհետ ինքնակալին եմուտ յեկեղեցին Վերափոխման՝ ուր Ալեքսանդր թագ առնլոց էր : Զահիւք աւելի քան զհազար լուսազարդեալ տաճարն սուրբ՝ փայլէր ակնախտիղ . բազմէր ինքնակալն 'ի գահ գեղանշոյլ ընդ ճոխ հովանեաւ, և զշաոյ նորահարսն առ նմա, զգեցեալ երկաքանչիւր հանգերձս պայծառս զեղեցիկս յոյժ, որպէս զի գերաշչ խարհիկս երեել տեսողաց : Դշխոյն 'ի ծունդ իջեալ առաջի փեսային, ընդունէր 'ի ձեռաց նորա պատկ կայսերական, և զպարկեցտ ճակատ նորա անլոյծ միութեան իւրեանց պատէր պերճ առհաւատչեայ : Հանդէալ նոցին արհի պատրիարքն Մոսկովաց

Պլատոն՝ի բարձուէ սրբոյ բեմին յուշ առանէր ինքնակալին ճոխաբան և հոգեշարժ ճառիւ զպարտս թագաւորաց, և զհամարն սոսկալի՝ զոր՝ի նոցանէ պահանջելոց է Աստուած, փոխանակ փառացն և զօրութեան զոր չնորհէ նոցա։ Ի մէջ անբաւ բազմութեանն՝ որովլ լի էր եկեղեցին, ցուցանէր նմա զՔամչեաքեցիս՝ որ հարկս ածէին զմաշկս չնջրեաց որսացելոց յԱլէութեան կղզիս հուպ յամերիկեանն ցամաք, և զվաճառականն՝ որ գային յԱրքանձելեայ, բերելով մեծութիւնս՝ զորս նաւէք նոցա գնան խնդրել՝ի ծայրս ծովուց Եւրոպայ։ Ցուցանէր նմա զԱմոյետս եկեալս՝ի բերանոյ գետոյն Ենիսեայ՝ ուր տիրէ ձմեռն յաւէրժական, և անծանօթ են անդ ձկունք, և ոչ երբէք ընձիւգէ ցորենահատ։ Ցաւցանէր և զԱմասքութո, առ որս են ձմերուկք հասունք և թղենիք, և որթոյ բերք քաղցունք՝ որ մատուցանեն զինի աղնիւ։ Առաջի առնէր դարձեալ և զբնակիչս Սեաւ և կասրից ծովուն, և մեծին Սկիւթիոյ՝ որ թեակոխէ՝ի Պարսս և՝ի Ճենս և՝ի սահմանս ինքնակալութեան Մողոլաց, և մտից՝ի յելս արեւու տարածանի՝ բովանդակեալ զկէս աշխարհին, և՝ի բենեռ անդր գրեթէ հասանէ։ Եւ յաւելոյր։ Ընդարձակագոյն ինքնակալութեան երկրի տիրապետեալ մեծութեան քո, և հանդերձեալ երդումն տալ՝ի բարեբախտութիւն հինգերորդի մասին երկրի, յուշի կալ անմօռաց՝ զի հա-

մարտալոց ես Աստաւծոյ զրիւրուց բիւրաւորաց մարդկան. և զի անիրաւութիւն ինչ միում 'ի փոքրկանց անտի դործեալ՝ դոր մարթ էր քեզ խափանել, համարեսցի քեզ 'ի մեղս: Ի բանից աստի թուէր շարժեալ սաստկապէս սիրտ պատանւոյ ինքնակալին. բայց յեկեղեցւոջ անդ գոյր և միւս այլ սիրտ ոչ ինչ նուազ շարժեալ, և էր այնորիկ՝ որ մատչէրն ինդրել չնորհս 'ի նմանէ հօր իւրում:

Յերգնուլ անդ Ալեքսանդրի նուիրել զկեանս իւր 'ի բարեբաստութիւն ժողովըրդոց իւրոց, թուէր Ելիսաբեթի լսել զձայն ողօրմութեան խզելոց զկապանս տառապելոց ամենեցուն, և ոչ ևս կարաց նա հանդարտել, երկնայնով իմն զօրութեամբ բացեալ իւր 'ի խռան անդ ուզի, և թափ ընդ ցանկ զօրականին անցեալ, զիմեաց 'ի գահ անդր գոչելով. Շնորհք, շնորհք: Բարբառն այն խափանեաց զարարողութիւն հանդիսին, և յարոյց շուկ. մատեան զօրականք, ձգեցին զօրիորդն արտաքոյ եկեղեցւոյն ընդդէմ աղաչանաց և ճգանց պանդոկապետին. բայց ինքնակալին լուեալ զբարբառն զայն, ոչ կամեցաւ յայնպիսում բարենշան աւուր մերժել զաղերս հէք օրիորդին. հրամայեաց միում 'ի պաշտօնէիցն տեղեկանալ զոր ինչ խնդրէրն: Ել արտաքս պաշտօնեայն, լուաւ զձայն պաղատանաց հիրին որ ճգնէրն ընդդէմ զինուորաց. եկն, եհաս, ետես, ծանեաւ և զոչեաց. Կա ինքն

է, Ելիսաբեթ է, Զկարէր օրիորդն հաւատալ այնքանոյ բարեբաստութեան. չկարէր կարծել գտանելոյ անդ պատանւոյն Ամոլովի առ 'ի փրկել զհայր իւր. այլ ձայն նորա և նորին ինքեան էր կերպարան, չէր մարթ ըմբռնել նմա 'ի պատրանս. հայէր 'ի նա անբարբառ, կարկառէր առ նա զբաղուկս իւր՝ իբր այն թէ զայր նա բանալ իւր զզրունս երկնից: Դիմեաց առ նա պատանին յայլոյ խելս լեալ, աջ 'ի յաջ յեռեալ, և յերկուացեալ իմն ընդ տեսիլ աչոց, ասէ. Դու իցես, Ելիսաբեթ. ուստի զաս հրեշտակդ երկնացեղիկ: Օրիորդն ասէ. Ի թուպոլսքեայ զամ: Պատանին ասէ. Դու 'ի թուպոլսքեայ, միայնակ, հետի: Եւ յասելն զայս՝ դողայր 'ի յուղելոյ սրտին: Օրիորդն ասէ. Այս, զամ միայնակ, զամ հետի, խնդրել չնորհս հօր խմում, և վարեն զիս 'ի զահոյից այտի 'ի բաց, խլեն զիս յերեսաց ինքնակալին: Խսկ պատանին լի խնդութեամբ ասէ. Ա'կ, Եկ Ելիսաբեթ. ես ինքն յանդիման կացուցից զբեղ ինքնակալին. Եկ, լուս նմա զբարբառ քո. Եկ, մատո նմա զաղերս քո, ոչ մերժեսցէ նա զայն: Եւ մինչդեռ 'ի բաց արարեալ զզինուորս՝ ածէր զնա յեկեղեցին, զային զառաջաւորք ինքնակալին 'ի դուրս ընդ աւագ զուռն եկեղեցոյն. և յերեել ինքնակալին՝ յառաջ մատեաւ Ամոլով կալեալ զձեռանէ օրիորդին. անկան երկոքեան 'ի միասին առ ոստ նորա, և ասէ պատանին. Չիս տէր, լուր

ձայնի տառապելոյս այսորիկ, լուր ձայնի առաքինութեան. Աթանիսլաւի Փոթովսքեայ գուստը կոյ առաջի մեծութեանդրո, գայ նա յխրիմեան անապատէ, ուր յերկոտասան ամաց հետէ հիւծին ծնօղք նորա յաքսորս. գայ անտի միայնակ անօղնական, հետի և մուրիկ զամենայն ճանապարհն հատեալ, յանձն առեալ զմերժումն, զարկածս, զմրրիկս և զամենայն ճիգն և վտանգ, առ 'ի գալ անկանել յոտս ինքնակալիգ՝ խնդրել շնորհս հօր իւրում: Խակ օրիորդն բազկատարած աղերսաւոր կըրկնէր. Շնորհս հօր իմում: Շըունջ հիացման գնայր ընդ ամբոխն. ինքնակալն ինքնին հիացեալ կայր. և թէպէտ բազում ինչ լուեալ էր հակառակ Փոթովսքեայ, այլ յայնժամց ցրեցաւ ամենայն 'ի մոտաց նորա, զի ասէր. Դստեր այսպիսւոյ առաքինւոյ չէ խակ մարթ թէ վեասապարտ լեալ իցէ հայր, այլ թէ իցէ խակ լեալ, ներէ նմա Աշլեքսանդր, և ասէ ցօրիորդն. Ազատ է հայր քո, շնորհեալ քեզ: Ի լուր շնորհաց ցնծութիւն այնպիսի զեղաւ 'ի սիրտ օրիորդին, զի նուազեալ անկաւ անզգայ 'ի վերայ բազկաց պատանւոյն. և բարձեալ տանէին գնա ընդ մէջ անթիւ բազմութեան ամբոխին որ ճանապարհ առնէր նմա կայթիւք ձեռաց և գրուատեօր առաքինութեան վեհազն օրիորդին և գթութեան ինքնակալին: Եւ ածեալ 'ի տուն Յակոբայ, յինքն եկն. և տեսեալ զԱմոլով 'ի ծունր առաջի

իւր, նախկին բարբառ կրկնեաց զբան ինք-
նակալին. Ազատ է հայր քո, չնորհեալ քեզ:
Զի չե ևս զօրէր բարբառել, 'ի հայեցուա-
ծոյ ևեթ նորին յայտնի էր սրտին ցնծու-
թիւն և չնորհապարտ գոհութիւն. բազ-
մախօս էին աչք նորա: Խոնարհեալ ապա
'ի Ամոլով, դողդոջ և խանդապատելի ձայ-
նիւ անուանեաց զհայր իւր և զմայր, և
յաւել. Տեսցուք ուրեմն զնոսա, ուրա-
խացուք ընդ բարեբաստութիւն նոցա:
Այս բանք նորա ազգեցին 'ի խորս սրտի
պատանւոյն, դի զայն առաջին նուագ
յայտ առնէր օրիորդն զսէր իւր ընդ նմա,
կցորդելով զնա նախկին զգացման սրտի
իւրոյ, նախկին բարութեան կենաց իւրոց.
զի հաւասարակից զնա առնէր քաղցրագոյն
երջանկութեան՝ որում ակն ունէր: Յայնմշ-
հետէ յուսայր պատանին հաւանելոյ օ-
րիորդին չբաժանել զնա 'ի կցորդութենէ
անտի:

Աւուրք ոչ սակաւք 'ի վերայ անցին 'ի
կատարումն չնորհի ինքնակալին. պարտ
էր քննել վերստին զիրս Փոթովսքեայ. և
'ի քննել անդ՝ խելամուտ եղեւ Ալեքսանդր
զի արդարութիւն ինքնին հրամայէր խոր-
տակել զկապանս ազնուականի ոստանկին,
ուր ինքն սրպէս չնորհ պարզեէր որ ինչ
արդարութեան էին պարտք. զոր ոչ երբէք
մուացան աքսորականքն զայս բան ինքնա-
կալին: Ի միում աւուրց ընդ առաւօտն ե-
մուտ Ամոլով 'ի սենեակ օրիորդին՝ ուր չե-

և իշխնալ էր մտանել, և մատոյց նմա
մազաղաթ կնքեալ յինքնակալէն առ հայր
իւր։ Ետո զայն օրիորդն, և եղեալ 'ի վե-
րաց աչաց իւրոց՝ եթաց զայն արտասուօք։
Յաւել յայնժամ Ամոլոֆ. Ոչ զազատութիւն
միայն չնորհէ հօր քում ինքնակալն, այլ և
զալատիւ իւր և զաստիճան և զգոյս. մե-
ծութիւնք՝ որ գեր 'ի վերոյ ամբառնան
զայլս, այլ ոչ և զնլիսարեթ։ Սուրհան-
դակն որ ածէ զհրովարտակս զայս, հան-
դերձեալ է մեկնել 'ի վաղիւ այգուն. խըն-
դրեցի և ընկալայ յինքնակալէն՝ գնալ ընդ-
նմա։ Խակ ես, գոչեաց յայնժամ Ելիսարեթ,
ոչ եկից և ես 'ի միասին։ Ամոլոֆ ասէ.
Այո, գայցես և դու. որո՞ց այլ շրթանց անկ
իցէ աւետել հօր քում զազատութիւն. գի-
տէի իսկ զիղձս քո, և ծանուցի զայն ինք-
նակալին, զորովեցաւ և հրաման ետ. և
տացէ քեզ վաղիւ զմի 'ի կառաց արքունի,
և նամիշտս երկուս, և երկու հազար ոռւ-
սլի 'ի ծախս ուղեորութեան։ Հայեցաւ օ-
րիորդն 'ի Ամոլոֆ և ասէ. Յօրէ յորմէ
տեսի զքեզ, չյիշեմ բարի ինչ ուստեք ա-
ռանց քո ընկալեալ. քեզ ընկալայ և զնորհ
ազատութեան հօր իմոյ, որում առանց քո
չէր հնար տեսանել վերատին զհայրենիս
իւր. քեզ ապա անկ է և աւետել նմա զա-
զատութիւն. այդ ևեթ քերկրութիւնն լիցի
վարձ բարերարութեանց քոց։ Ոչ, ասէ,
քեզ է անկ բերկրութիւնդ այդ. ինձ այլ
ինչ գերազոյն վարձ է ցանկալի։ Գերա-

Ոչ կամեցաւ նա կանխել աղդ առնել ծնօ-
զաց իւրոց զգարձ իւր. լուաւ զողջունէ
նոցա՚ի թոսպոլսք, զնոյն և՚ի Ապյխմքա հաս-
տատեալ. կամէր յանկարծ երևել նոցա,
ոչ զոր առեալ ընդ իւր՝ բայց միայն զպա-
տանին: Ո՛հ, զիա՞րդ բարեխէր սիրտ նորա
յանցանել իւրում ընդ անտառն, 'ի մօտել
յեղերս լճին, և 'ի ճանաչել զմի մի 'ի մայ-
րեաց, զմէն մի 'ի ժայռից: Նշմարէր զհիւզն
հայրենի, զիմէր անդր... այլ զկայ էառ.
'ի սաստիկ յուզմանէ սրտին պակեաւ, ըն-
կըրկէր 'ի կարի հրճուանացն: Ո՛վ աղե-
տից մարդկութեան, ահա լրումն նորին.
յանկամք բարեբաստութեան, կամիմք զայն
ծայրալիր, և ծայրալիր բարեբաստութիւն
մահառիթ եղանի մեզ, չկարեմք ժուժկա-
լել այնմ: Ելիսաբեթ անկեալ 'ի վերայ բազ-
կաց պատանւոյն, ասէ. Եթէ լիցի ինձ գտա-
նել հիւանդ զմայր իմ...: Այս երկիւզ աղ-
զեալ 'ի սիրտ նորա, մեղմեաց զազդումն
բարեբաստութեանն՝ որ ընկճէրն զնա, և
զարձոյց 'ի նա զզօրութիւն իւր: Ընթացաւ,
կոխեաց 'ի սեամս հիւզոյն, լուաւ զձայն
իւրոցն և ծանեաւ. սիրտ նորա նուազէր,
միտք իւր ծփային, անուանէր զծնօզս իւր:
Բացաւ գուռնն, ետես նա զհայր իւր, ձայն
երարձ, եհաս մայր նորա, և 'ի դրկախառ-
նելն ընդ նոսա՝ գոչեաց Ամոլոֆ. Ահա ա-
ւետաբեր ազատութեան ձերոյ, յաղթեաց
ամենայնի, ընկալաւ զամենայն: Այլ բանք
պատանւոյն ոչ ինչ յաւելին 'ի խնդութիւն

նոցա . թերեւս չլուան իսկ զբանս նորա ,
զմայլեալք 'ի տեսիլ դստերն իւրեանց .
զգային ևեթ զգալուստ նորա , զի տեսա-
նէին զնա , զի գտին զնա անդրէն , զի 'ի
զիրկս իւրեանց էր , զի ոչ ևս թողուին զնա .
'ի մոռացօնս եղեն նոցա՝ թէ իցեն յաշխար-
հի այլ ինչ բարիք : Ընկղմեալ կային ժամս
ձիգս 'ի զմայլման անդ իրր անզգայք , զոգ-
ցես իմն 'ի ցնորս . բարբառք ինչ ընդհատք
ելանէին 'ի շրթանց նոցա , այլ ոչ զիտէին
զոր ինչ ասէինն . 'ի զուր խնդրէին յայտնել
որ ինչ կրէրն 'ի նոսա , ոչ գտանէին բանս
զկիրսն բացատրելոյ . լային , հառաչէին , և
զօրութիւն նոցա նուազեալ էր ընդ մտացն
յառաւել խնդութենէն :

Յայնժամ անկեալ առ ոտս նոցա պա-
տանին , ասէ . ԱՇ , ոչ մի որդի է ձեր . ցարդ
եղբայր իւր կոչէր զիս Ելիսաբեթ , այլ արդ
առ ոտս ձեր ներեսցէ թերեւս ինձ ցանկալ
այլում իմիք անուան : Եւ օրիորդին ձեռս
'ի ձեռս խառնեալ ծնօղացն , և հայելով 'ի
պատանին , ասէ . Առանց սորա չլինէր թե-
րեւս ինձ դառնալ այսրէն . սա ած զիս յոտս
ինքնակալին , սա բարեխօս եղե վասն իմ ,
սա խնդրեաց 'ի նմանէ շնորհս վասն ձեր և
ընկալաւ , սա դարձուցանէ զձեզ 'ի հայրե-
նիս , սա ինքն տայ զդուստր ձեր ձեզ , սա
ած զիս 'ի զիրկս ձեր : Արդ ասա ինձ մացր
իմ , զինչ շնորհս պարտ է ինձ մատուցանել
սմա . ուստ ինձ հայր իմ , զոր շնորհակալիս
մատուցանել սմա : Աստանօր Փեղորայ ուզ-

ջագուրեալ զգուստը իւր, ասէ. Շնորհակալութիւն քո լիցի սէր, որով սիրեմ ևս զհայր քո։ Եւ Սփրինճեր յաւել հրճուանօք. Նուէր սրափի քոյումդ նմանւոյ լիցի 'ի վեր քան զամենայն բարերարութիւնս. այլ Ելիսաբեթ չհամարի գոլ այնուիկ առատաձեռն։ Իսկ օրիորդին առեալ զձեռն պատանւոյն և տուեալ 'ի ձեռս ծնօղացն, կարմրագեղ դիմօք և ցածութեամբ ասէ. Խոստանամ շմեկնել 'ի սոցանէ։ Յայնժամ պատանին ասէ ընդ ինքն. Բարէ, արդեօք այլ ընդ այլոյ ինչ լուայ, արդեօք շնորհեն զնա ինձ ծնօղք իւր, արդեօք հաճինա ընդ իս։ Եւ ոչ կարացեալ կատարել զբանս իւր, խոնարհեալ զերեսս իւր ողողեալս արտասուզք առ ոտս Ելիսաբեթի, յերկինս իսկ չհամարէր թէ գուցէ երջանկութիւն առաւել քան զիւրն. զմայլումն մօր՝ որ զգուստը իւր տեսանէր վերստին, խանդաղատելի պարծանք հօր՝ որ վասն աղատութեան իւրոյ շնորհապարտ գտանէր արիութեան դստերն, անձառ խնդութիւն վեհազին և բարեկրօն օրիորդի՝ որ յայգուէ կենաց իւրոց լցեալ զսրբաղնագոյն պարտս իւր, և 'ի ծայր առարինութեան էր ժամանեալ, պարառութիւն այս ամենայն բարեաց թըւէր պատանւոյն 'ի ստորեւ քան զբարերաստութիւնն զոր մատուցանէր նմա սէր։

Որդ եթէ պարտ իցէ ինձ ասել զաւուրց՝ որ յաջորդեցին այնուհետեւ, ցուցից զձնօղացն յեղյեղել առ գուստըն զդառնակը ու-

կիծ մորմոք սրտի իւրեանց մինչև 'ի դարձ
նորա . ցուցից զնոսա յակճիռս ընդ գորով
և ընդ յոյս 'ի լուր արկածից բազում եր-
կայն ուղեորութեան նորա . լսելի արարից
զօրհնութիւնս հօր նորա վասն ամենեցուն ,
որ օգնական լեալ էին դստերն իւրոյ . յան-
դիման արարից զմայր նորա՝ ցուցանելով
պահեալ 'ի վերայ սրտին զմիայն զօրու-
թիւն կելոյ իւրոյ ցայնժամ , զգիսակն յղեալ
առ նա 'ի դստերէ իւրմէ . պատմեցից որ
ինչ ծնօղք նորա կրեցին կիրս 'ի լուր աքսո-
րականին եկաւորի 'ի հիւղիւրեանց՝ պատ-
մելոյ զբարերարութիւնն ընկալեալ 'ի դըս-
տերէ իւրեանց . վիպեցից զարտասում՝
զոր հեղին 'ի լսել զտառապանս նորա ,
զարտասուս զոր հեղին 'ի լուր առարի-
նութեան նորա : Յաւելից և զողջոյն նո-
ցա հրաժարական մատուցեալ հիւղոյն ,
ուր այնքան աղէտս կրեալ էր նոցա , և
ուր ասլա առեալ զճաշակ սրբագոյն և երկ-
նային հրճուանաց՝ որ վշտօք ստացանին
և ծնանին յարտասուաց , հանգոյն ճառա-
գայթից սրեգական պայծառագոյն ծագե-
լոց յետ ամպրոսաց 'ի դաշտ ցօղալից :

Առւրբ և անարատ նմանեալ հրեշտակաց
օրիորդն Ելիսաբեթ , հաղմրդ նոցին երա-
նութեան , կեցցէ իբրև զնոսա յանմեղու-
թեան և 'ի սիրելութեան . Ո՛վ սէր , ով
անմեղութիւն , այս՝ անլոյծ կցորդութիւն
ձեր յարգարէ զյաւիտենականն երանու-
թիւն . Աստանօր զկայ առնում . զուարթ

պատկերք, տեսարանք զուարձընծայք
կարի երկարատևք՝ վաստակեն զմիտս և
զսիրտ, ոչ թուին ճշմարիտք, չհաւատալի
լինին. զի անկորուստ բարեբաստութիւն
չէ և չէ երկրաւոր բարի: Ենդու բազմազան
և ճոխ 'ի բացատրութիւն աղետից՝ աղքատ
է և ամուլ 'ի բացատրել զհրձուանս. օր մի
ուրախութեան սպառէ զամենայն նորին
ճոխութիւն: Ելիսաբեթ 'ի զիրկս ծնօղացն
կայ, ածեն զնա ծնօղք իւր 'ի հայրենիս,
դարձուցանեն 'ի նսեհ նախահարց, պան-
ձան ընդ առաքինութիւնս նորա, հարսնա-
ցուցանեն փեսային զորով գերազանցէ,
փեսային ոչ անարժանւոյ նմին: Բաւէ
արդ, դադարեսցուք, հանգիցուք, հանգի-
ցուք 'ի խորհուրդս յայսոսիկ քաղցունս.
որ ինչ ծանեայ զկենցազոյս և զյեղափո-
խութեան սորա, որ ինչ զակնկալութեանց
'ի զերե ելանելոյ և զանկայուն և զցնո-
րական բարեբաստութեանց, երկեցուցա-
նեն զիս, զի առ 'ի յաւելուլ 'ի պատմու-
թիւնս յայս և էջ մի՝ հարկ լիցի ինձ պատ-
մել աղէտս:





